

ՎԻԿՏՈՐԻԱ ԱԳԱՆՈՒՐ ԲՈՄԲԻԼԻ

---

ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ ԶՐՈՅՑ

ՄԻՋԱՆԿԵԱԼ, - ԶԱՐԹՈՒՄ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Հ. ԱՐՍԷՆ ՂԱԶԻԿԵԱՆ

ՄԻԻԹԱՐԵԱՆՑ

---

ԵՐԿՐՈՐԴ ՏԳԱԳՐՈՒԹԻՒՆ

---

Վ. ԵՆԵՏԻԿ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՏԳԱՐԱՆ

1982

Ն Ո Ւ Է Ք

Լիզայոնի Գալուստ կիւլպէնկեան  
Հիմնարկութեան կողմէ  
Հայկական ՍՍՌ Գիտութիւնների  
Ակադեմիայի Մատենադարանին

1 9 6 6

ՔԵՐԹՈՂԱԿԱՆ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Ժ

VITTORIA AGANOR POMPILJ

---

LEGGENDA ETERNA

INTERMEZZO-RISVEGLIO

TRADUZIONE

DEL

P. ARSENIO GAZIKIAN

MECHITARISTA

---

SECONDA EDIZIONE

---

VENEZIA

Tip. Armena Poliglotta - S. Lazzaro

1982

8.5  
193  
ՎԻԿՏՈՐԻԱ ԱՂԱՆՈՒՐ ԲՈՄԲԻԼԻ

ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ ԶՐՈՅՑ

ՄԻԶԱՆԿԵԱՂ - ԶԱՐԹՆՈՒՄ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Հ. ԱՐՄԷՆ ՂԱԶԻԿԵԱՆ

ՄԻԻԹԱՐԵԱՆՑ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԵՆԵՏԻԿ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՏԳԱՐԱՆ

1982



Կ  
1004

Perugia 15 Novembre 1904

Gentilissimo Padre Arsenio

Per lei mi chiedo il permesso di tradurre la mia  
Leggenda Eterna nella tua bella lingua toscana,  
e io rispondo ringraziandola di pieno cuore  
pel gradito proposito. Chi ha tradotto, con l'Al-  
fiere, Dante e il Leopardi (per non parlare  
di molti altri ch'ella tradusse in mondo spante)  
non può che interpretare egregiamente le mie ben  
più facili liriche, e sarò bene orgogliosa  
di venir presentate d'esser fatte conoscere  
da Lei ai fratelli d'Armenia, di quella  
grande straziata, per cui Timone nocci  
che la mia Musa sapeva intonare un canto  
così terribilmente magnifico da far tremare  
la mano ai carnefici.

Mi toglia per sua <sup>ma</sup> ~~ma~~ e obbligho

Victoria Aganese Pompili

All' Illustr. Padre Arsenio Gargiarian  
Comunità di San Lazzaro  
Venezia

Ազնիւ Հ. Արսէն

Յաւիտենական Չրոյցս ձեր գեղեցիկ, հնչուն շեղումով քարգմանելու բոշտուութիւնը կը խընդրէք ինձ, և ես կը պատասխանեմ՝ սրտագին շնորհակալ ըլլալով Ձեզի՝ հաճելի ասաջարկին համար: Դուք որ Տանգէն ու Լեոբարտին քարգմանեցիք (թո՛ղ ուրիշ շատերը), յաջողապէս պիտի կարենաք քարգմանել իմ շատ անելի դիրին քնարերգականներս, և ես հպարտ պիտի ըլլամ՝ ներկայացուելու և ձանլցուելու համար Ձեզմով Հայաստանի եղբայրներուս, այն մեծ բզրտուածին, որուն համար իրաւցընէ պիտի սզէի որ Մուսաս կարենար հնչեցընել երգ մը այնպէս ահեղորէն մեծաշուք՝ որ դահիճներուն ձեռքը դողացընէր:


Անձնանուէր և երախտապարտ

ՎԻԿՏՈՐԻԱ ԱՂԱՆՈՒՐ ԲՈՄԲԻՆ

ԱՌ Հ. ԱՐՄԷՆ ՂԱԶԻԿԵԱՆ

ՎԱՆՔ ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐՈՒ

ՎԵՆԵՏԻԿ





## ՅԱՌԱՋԱՐԱՆ ԹԱՐԳՄԱՆՁԻՆ

Վ Ի Կ Տ Ո Ր Ի Ա Աղանուրի Յասիտենական  
Զրոյցին սոյն ամբողջական թարգմանու-  
թիւնը՝ Եսայի անուն քերթուածին կը պար-  
տիմ, որ հերու իտալական Antologia թեր-  
թին հոկտեմբերի պրակովը լոյս տեսաւ: Այդ  
քերթուածին ընթերցումը այնքան գրաւեց  
զիս՝ որ թէեւ բազմադրաղ՝ որոշեցի Յասի-  
տենական Զրոյցը հայացնել: Եւ հայերէն  
հատորը՝ որ ահա լոյս կը տեսնէ՝ աւելի ճոխ  
է քան իտալերէնը. վասն զի այլ և այլ պար-  
բերականներէ թարգմանած եմ մէկէ աւելի  
կտորներ՝ որոնք գրուած են իտալերէն հա-  
տորին հրատարակութենէն վերջը, և ներկայ  
հատորիս Յանկին մէջ աստղանիշ կը կրեն  
իրենց սկիզբը:

Տարիներ առաջ՝ 1896ին՝ Հ. Աւիշանի  
յանձնարարութեամբ թարգմանած էի Աղա-  
նուրի մէկ գեղեցիկ քերթուածը՝ Լսոյթիւն,  
գրաբարով. որ նախ Բագմավեպի մէջ հրա-  
տարակուեցաւ և առանձին ալ լոյս տեսաւ.  
զայն՝ գրաբար, ինչպէս որ էր՝ ներկայ հա-  
տորիս մէջ ալ դրի. դարձեալ ուրիշ քեր-  
թուած մը՝ Չատիկ հայկական թարգմանած  
էի Բագմավեպի մէջ (1903, էջ 464 նոյնպէս  
գրաբար. ներկայ հատորիս մէջ գրաբարին

դիմաց աշխարհարարն ալ դրուեցաւ: Ուրիշ թերթերու կամ մեր Բազմավեպի և Գեղումի թիւերուն մէջ եւս երեւցած են Աղանուրի ինչ ինչ քերթուածներուն թարգմանութիւնները, ինէ կամ ուրիշներէ կատարուած, զորս Հայկական Նոր Մատենագիտոսրիանը կը ցուցնէ: Ներկայ թարգմանութիւնս ընդհանրապէս անյանդ կատարած եմ — բնագրին մէջ ալ մէկէ աւելի են անյանդները —, նախ՝ որպէս զի աւելի հաւատարիմ գտնուիմ բնագրին, երկրորդ՝ վասն զի՝ ըստ իս՝ յանդէն աւելի շեշտն է կարեւորը՝ մանաւանդ թարգմանութեանց մէջ, ուր կարելի չէ՝ թէ՛ հաւատարիմ մնալ բնագրին և թէ՛ նոխ յանդերունենալ, պատկառ կալով միանգամայն աշխարհարար լեզուի օրէնքներուն և տաղաչափութեան կանոններուն:

\*

Վիկտորիա Աղանուր Բումբիլի՝ իտալահայ բանաստեղծուհին՝ բոլորովին անծանօթ մը չէ արդէն մեզ հայերուս. և վերեւ յիշուած թերթերուն մէջ և ուրիշ տեղեր ալ՝ դրուած են անոր մասին համառօտ տեղեկութիւններ: Աւելի ընդարձակ տեղեկութիւններու յուսով՝ ուղղակի աղբիւրին դիմեցի, և ստացածներս՝ թէեւ ոչ այնչափ նոխ՝ թարգմանութեամբ կը հաղորդեմ ընթերցողներուս: Բանաստեղծուհին կը գրէ. «... Սհաւասիկ այն քիչ տեղեկութիւնները զոր ես եւս ունիմ Աղանուրներու մասին: Իրենց Տոհմացոյց ծառին ներքեւ զոր ունինք մենք՝ գրուած է հայերէն լեզուով. Յեղարանոսրիան Տոհմիկ

Աղանուսրեանց, զոր վարեալ երեք մեծ և ասա-  
շինն Շահարաս արքայն Պարսից ի Հայաս-  
տան աշխարհէ և ի Նախիչեան գաւառէ ի  
Պարս և ետ ի տեղի բնակութեան ի լընադաշին  
և ի վայելչագեղն ի Նոր Զուդա, նկեալն ի Հին  
Զուդայէ ի 1054 (= 1605) թուին Հայոց\*:  
Աղանուրեան ազգատոհմին վերջին շառա-  
ւիղը՝ Արբազամ (Վիկտորիայի մեծ հայրը)  
և իր որդիները Սամուէլ, Յովհաննէս և  
Եղուարդ (Վիկտորիայի հայրը), ծնած են ի  
Մադրաս, և թէ Աւիշան և թէ Հ. Իսա-  
վերտենց կը հաստատէին որ նշանաւոր և  
ազնուական ընտանիքէ սերած էին, և Արբա-  
զամու կինը կը կոչուէր Մարիամ-Թերեզա\*\*:  
Մադրասի մօտ գեղեցիկ գիւղ մ'ունէին, զոր  
հէք հայրս միշտ կը յիշէր անոր շքեղու-  
թեանն ու հրաշալի սիւնազարդ գաւիթին  
համար, և կը յիշեմ որ կ'ըսէր թէ Ռայարադիս  
կը կոչուէր, որ ըսել է՝ կ'ըսէր՝ Ամարանոց  
կամ Գիւղ քաղաւթներու: Հայրս 12 տա-  
րու էր երբ 1835ին ընտանեօք Եւրոպա բե-  
րուեցաւ. և հաստատուեցաւ նախ ի Բարիդ,

\* Սոյն ճիւղագրութեան բուն բնագիրը՝ որմէ երկու  
օրինակ նանուած ու զրկուած է իրենց՝ մեր քովն է՝  
որուն մէջ քովեաի գրուած է. «Նկարեալ եղև ի Բուս-  
բայի, յօրինեալ ձեւամբ Աւետ Աղանուրեանց»:

\*\* Մեր հին Հայրերը Տիպի Մամի կը կոչեն զինքը,  
տես Վրուրի Բարաստանքը՝ որ ընծայուած է առ Արբա-  
զամ Աղանուր, Ասկէ զառ նոյն Արբազամ Աղանուրի  
ընծայուած են Փեղրոսի Առակները: Հ. Աւիշանի Նը-  
ւագներուն Տխրուծի բաժնին մէջ ալ Ա. Աղանուրի մէկ  
գուսարին մտնուան առթիւ զեղեցիկ ստանաւոր մը կայ:  
(էջ 118). — Մամի՛ գուսար է Մուրաստան վարժա-  
րանի բարերար Սամուէլ Մուրասին:

յետոյ ի Վենետիկ, և հուսկ ի Բատուա, վասն զի Վենետիկոյ օդը աղէկ չէր դար մեծ մօրս։ Ուրեմն ևս ծնայ ի Բատուա, բայց մանկութեանս մեծ մասը Վենետիկ անցուցի, ուր հաստատուեցանք յետոյ, տարւոյն մէկ մասը անցընելով պապուս ու մամուս քով ի Բատուա։ — Ուսուցիչներս եղած են, նախ՝ Յակոբ Մանէլլա, և ասոր մահէն վերջ՝ Հենրիկոս Նենչիոնի\* ։

\* Այս սուգերն արգէն գրուած ու շարուած իսկ էին, երբ «Giornale d'Italia» թերթին տարւոյս ապրիլի 10 թիւն ստացայ Բանասեղծուհիէն, ուր իր մէկ նամակը կար, որ տեղեկութիւններ կու տայ իր մասին։ Ապրիլ 9ին՝ այր և կին՝ Փլարենտիա կը դուռնուին, (յայտրդ օրը Leonardo da Vinci Ակումբին մէջ՝ իր ամուսինը՝ Կուրտոյ Բուֆֆիի՝ բանաստեղծուհիին մը պիտի կատարէր Մաքսիմ Կորբիի մասին)։ Հոն ըստ փափաքանոց Ակումբին՝ ուր զուգարուած էր Փլարենտիայ մտաւորական և արուեստաղէտ բարձր գասակարգը, Վիկտորիայի բանաստեղծուհիներէն ինչ ինչ կատարներ կը կարգացուին, ծափերու և կեցցէններու որոտընդոտ շտառներուն միջեւ, ի ներկայութեան Վիկտորիայի և ամուսնւոյն. բայց ընթերցումէն առաջ նամակի ձեւով նեւեւալ տեղեկութիւնները կու տայ Ազանուր իր մասին. «Կրնայի խօսիլ մանկութեանս վրայ, որ ծաղկեցաւ գրեթէ արեւելեան երազի մը մէջ, ունկնդրելով ժամեր ու ժամեր, լսիկ Ձիջիկ, ուշադիր խոշոր աշքերով, նայրենարդձական երկայն նկարազրութիւնները նորս՝ որ կկած էր Ասիայէն՝ գետ ազայ, և որ լաւ կը յիշէր իր շողշողուն Ուայաբազա ամառանոցը, մեհնարական սիւներով, ընդարձակ ու զեղեցիկ գարատամնով մը, ուր արձակեմները կը բարձրանային երկնաբերձ՝ իրիկուններու ազադիւնին վրայ, և արձիւի ձագերն հիս կու գային վերջ՝ երկինքներու թափանցիկութեան վրայ։ Ու վերա, բիւրեզ օգին, գարբրով կոյս անտաններուն, Հնդկաց Ովկիանոսի մուսններուն և վայրենի զեղեցիկութեան մասին կը պատմէր եսանդեամբ, ու երթալով կը բորբոքէր, կը վտտէր իր հրաշալի տեսիլքին մէջ։

Ահաւաստիկ Վիկտորիայի ինծի հաղորդած տեղեկութիւնները, որոնց վրայ քանի մը հատ ալ ես իմ կողմէս կ'աւելցնեմ: Իր հայրը՝ Եղուարդ՝ Արրահամ Ազանուրի կրտսեր որդին հոս Վենետիկ կ'ամուսնանայ Իտալուհւոյ մը հետ, որմէ կ'ունենայ հինգ աղջիկ զաւակներ\*։ Իր դստերաց կրթութեանն և ուսմանը մեծ հոգ կը տանի, ժամանակին նշանաւոր վարժապետներուն յանձնելով զանոնք մարդելու հոգը. այս է պատճառը որ Վիկտորիայի ուսուցիչ եղած են՝ նախ Յակոր Ծանէլլա, երեւելի քերթողը, և ասոր մեռնելէն վերջ Հենրիկոս Նենչիոնի, նոյնպէս նշանաւոր քերթող: Եթէ կայ բան մը՝ որ պակսի Վիկտորիայի, այն ալ հայերէնի անգիտութիւնն է, զոր միշտ կ'աւաղէ, թէ ինչո՞ւ չէ սորված՝ իր հօրը ողջութեանը գիտէ անգլիերէն, ֆրանսերէն և ուրիշ լեզուներ. տեղեակ է ընդհանուր ազգաց գրականութեան և լայն մշակութիւն ստացած է: Փափաքած էի գիտնալ Վիկտորիայէ, թէ

« Ամեն ինչ էսս մտք ու կեզ կը բոյի ինքի, կը կրկնէր յաճախ. Ու Տնաց ինծի կայրենական արիւնին կեա՝ թելարանքը այն մրրկոտ պատմութիւններուն, բացի ծարաւ մը, արեւու մոլութիւն մը, զարշակք մը բոլոր մէկերուն, ամպերուն դէմ, զարնուրանք մը բոլոր սակմաներուն դէմ», եւ: Սոյն նամակին մէջ կը յիշաշատակէ նաեւ իր վարպետները. « Յակոր Ծանէլլա, ամենազնիւ կանաք, վշտացած և ճշուած ազերախտներէ... » և Հենրիկոս Նենչիոնի « Բխուցի և զգացումի այն մոզը, անսահմանութեանց այն զարմանազանջ վերայայտնիչը որ ունեցաւ արուեստին բոլոր իմացումները, կասկացողութիւնները և աստուածացութիւնները »:

\* Վիկտորիայի քոյրերուն մէջ ուրիշ բանաստեղծներ ալ կան, ըսյց իրեն չեն հաւասարիք:

որն էր իր առաջին քերթուածը, և կրք գրած էր. Հետեւեալ շահեկան տեղեկութիւնները կու տայ այս հարցումիս.

« Ստուգիւ չեմ յիշեր թէ որն է առաջին բանաստեղծութիւնս և որ թուականին գրած եմ, բայց կարծեմ փոքրիկ քերթուած մըն էր և 1875ին գրուած, զոր անմիջապէս նոթայի առաւ Պացցիինի երաժիշտը: Այդ առաջին տողերս զորս հոս կ'օրինակեմ՝ կը յիշեմ որ գրեցի այն ատեն, երբ ըսին ինձի թէ Լուսինը մարած երկիր մըն էր, նման մերինին, բայց առանց բնակիչներու, առանց ծովու և գետերու, առանց ծառերու, առանց կեանքի:

« Մեծ ցաւ եղաւ ինձի ու այս տողերը գրեցի, որոնք (վասն զի առաջին տողերս էին) մեծ ազդեցութիւն ըրին ծնողքիս և վարժապետներուս վրայ, և խնայող ալ տուին, վասն զի անցած ժամանակներու վրայ կը խօսէի, իրրեւ թէ մեծ տարիք մ'ունենայի. բայց փոքրիկներուն, մանուկներուն համար եւս լինցած տարին՝ անցած ժամանակ է. և ինձի համար՝ այդ անցած ժամանակները էին անոնք՝ որոնց մէջ կը կարծէի ես դեռ թէ Լուսինը արծաթագեղ զրախտ մըն էր՝ ուր հրեշտակները կը բնակէին: Ահաւասիկ ոտանաւորը.

### Լ Ո Ւ Ս Ն Ի Ն

Սըրտիս առջեւն են միշտ, Լուսին,  
Անցած դացած չըքնազ օրերն.  
Երբոր քաղցրիկ քու շողիւնին  
Կ'ուղղէի վեր ես իմ աչերն:

Լիճեր, լեռներ ու մարզեր բիւր  
Ձիճի՛ և անգորր ու զուարթարեր,  
Քու ծոցիդ մէջը կաթնաթոյր  
կարծէին թ' տեսնել բիւրեր:

Պարը տեսնել կը կարծէի  
Ես թեւաւոր բնակիչներու.  
Ո՛հ, Բնչաէս գո՛ղը կը խըրի  
Նրբ գո՛հ է սիրան՝ երազներու:

Սնեակ տըխուր և անմարդի,  
Ծով մը նըսեմ ու մոխրազոյն  
կը թըւի արդ ինձ արծաթի  
Քու սկաւառակըդ պազպաշուն:

Եւ արդ յիշող վիշտերով բիւր  
Թըրթած սամուկ նըշոյլներով,  
Քու շողիմիդ, Լուսնակ, տըխուր՝  
կը նեակեթ՝ վերն՝ աշքերով:

\*

Չորս կամ հինգ տարի մը կայ որ Վիկ-  
տորիա ամուսնացաւ Բերուճիացի Կուխտոյ  
Բումբիլի գրագէտ կոմսին հետ, որ երես-  
փոխան եւս է իտալական խորհրդարանին.  
որով իր դիւթական Վենետիկը թողլով Վիկ-  
տորիա՝ գնաց Տրասիմենի ամուսնուները երա-  
զելու՝ ձիթենիներու լուսնիստ ու խորհրդա-  
ւոր անտառներուն, ծաղկափթիթ այգիներուն  
միջեւ, բլուրներուն վրայ, և Տրասիմենի  
կապոյտ ծոցին ծիրանի ծուէններուն գոգը:

Կորով՝ եռանդուն գրչին, հո՛ւր, բոցավառ  
սրտին, աւիւն՝ աշխոյժ մտքին, խա՛նդ՝ ըզ-  
գայուն հոգւոյն:



Վիկտորիա Աղանուր Բոմբիլիի մասին սոյն համառօտ անդեկութիւնները տալէ վերջ, հոս արժան կը համարիմ թարգմանել քանի մը իտալացի վարպետներէ էջեր՝ որոնք Վիկտորիայի հանճարն ու արուեստը կը պանծացնեն, վերլուծելով Յաւիտենական Չրոյցին բազմակերպ գեղեցկութիւնները:



« Երբ, քիչ ամիսներ առաջ՝ աղնուական ու համեստ զրագիտուհի մը թելադրեց ինձի՝ Վիկտորիա Աղանուրով զրաղելու, անմիջապէս ըսի ինքնիրենս, թէ արդեօք հատորներ հրատարակած է. իբրեւ թէ հեղինակուհւոյ մը կիսագէտքը (profil) նկարել կարենալու համար՝ անհրաժեշտ ըլլային հատորներու դէզեր: Կռահեցի որ այսպէս մտածելով՝ գէշ կը մտածէի... »

« Վիկտորիա Աղանուր, փարթամ, աղնուական ու գեղեցիկ վէնետկուհի օրիորդը՝ թէեւ յաճախ յորդորուած՝ չէ ուզած երբեք հատորներ հրատարակել, և սակայն ո՞վ չի

---

\* Սոյն ուսումնասիրութեան նշխանն է Յովնանէս Գանեւացի, և զրած է սոյն տողերը՝ Աղանուրի քերթուածները զիս հատորով չհրատարակուած, Հրատարակած է նախ Pensiero Italiano (Իտալական մտածում) թերթին մէջ, և յետոյ իր « Profili di scrittrici italiane » (Իտալացի զրագիտուհիներու կիսագէտքեր) զրթին մէջ անցուցած: Գիրքը Աղանուրով կը բացուի:



ձանչնար զինքը գրական աշխարհին մէջ։  
 Ինքը չէ՞ միթէ հռչակաւոր հեղինակուհին  
 ա՛յնչափ անչափ չքնադագեղ ոտանաւորնե-  
 րու, ամենէն ծանօթ ու ամենէն գեղեցիկ  
 հանդէսներուն էջերուն մէջ ընդելուզուած՝  
 և որ անոնց ամենէն աւելի պատուական և  
 խանդակաթօրէն փնտռուած գոհարներն են։  
 Անոնք՝ որ սոսկ հետաքրքրութեան համար  
 կը կարդան, անոնք որ չափազանցուած ԴՅ-  
 clameներէ կը հրապուրուին, ու հաւատք  
 կ'ընծայեն սուտ ովսանեաներու, որոնք ան-  
 բանաւոր ու անպատշաճ կերպով անունի մը  
 շուրջը կը դիզուին՝ մինչդեռ ան կը խոր-  
 թացնէ և կը ձանձրացնէ մուսան՝ իմաստա-  
 սիրութիւն, գիտութիւն և մինչեւ քաղաքա-  
 կանութիւն ընելու, անշուշտ նկատի առած  
 պիտի չըլլան Աղանուրի բանաստեղծութիւնը։  
 «Եւ սակայն ո՞րքան բարձր, ո՞րքան վսեմ՝  
 է Վիկտորիայի ժպտող արուեստը։

«Աղանուրը Իտալիոյ առաջին բանաստեղ-  
 ծուհին է, խնդիր չի վերցնելու Դատաստանը  
 յանդուգն չէ, ուրիշները կտրեցին զայն։  
 Լարա կոմսուհին զայն մեր բանաստեղծու-  
 հիներէն առաջնագոյնը (la primissima) կո-  
 շեց, համակրելի ֆէքին՝ Յանֆոպայի թումը՝  
 ըսաւ թէ Վիկտորիա է մին այն կիներէն՝  
 որոնք արուեստագիտական կատարելութեան  
 անմատոյց ժայռերուն ամենէն աւելի մօտե-  
 ցած են. Ետլանտա՝ իմանալով որ ես Վիկ-  
 տորիա Աղանուրով պիտի զրաղէի, աճապա-  
 րեց գրեց ինծի՝ որ ես ճիշդ նշանին զարկած  
 պիտի ըլլայի, եթէ զայն Իտալիոյ առաջին  
 բանաստեղծուհին անուանէի։ Բռնեցի Եո-  
 լանտայի ձեռքէն ու իր դատաստանը ուզե-

ցի. զայն ազնուօրէն Հաղորդեց ինծի, որմէ չեմ ուզեր զրկել ընթերցողս «Վիկտորիա՝ րանաստեղծուհի է հոգիին մէջ՝ բարձր ու խոր ներշնչմամբը, գաղափարներուն իսկատուութեամբը (originalità), ձեւին յատկութեամբն ու փափկութեամբը, շարադրութեան սքանչելի կշռութեամբը՝ ուր իր մտածումը՝ առանց երբեք զոհուելու՝ աւելի սուր կը բուրէ: Ինծի համար (և միայն ինծի համար չէ) իտալական րանաստեղծուհիներուն մէջ առաջինն է, վասն զի ունի վայելչութիւն ու շնորհ, զգացում՝ առանց թացիկութեան (sentimentalismo), կորով՝ առանց անհարթութեան »:

Ու ինչ յօդուածներ չգրեցին Աղանուրի համար Նենչիոնի, որ (Մանէլլայի մահուընէն վերջ) իր երկրորդ վարպետը եղաւ, Տէ կուպերնաթիս, Տ'իզընկարտ: Ու ինչ լաւ բաներ չխօսեցան իր մասին Գարտուչչի, Ֆոկացցարոյ, Նամպրի, Ֆրատէլէզոյ, Սերասօ, Պարպիէրա: Ու չընծայեցին Վիկտորիա Աղանուրի՝ Բանծաքքի գեղեցիկ տողեր, խեղճ Մանէլլան իր քերթուածներուն վերջին տպագրութիւնը, և դեռ վերջերս՝ Նուանտա իր Խորհրդաւոր հարսերը: Ու Չէզարէ Բասգարէլլա չնուիրեց իրեն իր Չգայնական պտոյտը, և կրիլի՝ իր Ատիճէէն րանաստեղծութեանց հատորը: Եւ 96ի ապրիլին՝ ուրիշ պատուի մըն ալ չէ՞ր հասներ, այն է՝ Վենետկոյ Աթենական կաճառին գործօն անդամ ընտրուելու:

« Աղանուրի քնարերգականը կորովի է, ուժեղ, թրթռուն. կին մտածողի մը բնական, ճշգրիտ, ջինջ արտայայտութիւնն է.

քիչ բանաստեղծութիւններ այնքան գոհունակութեամբ կը կարդացուին ինչպէս Աղանուրինը:

« Չնաշխարհիկ բանաստեղծուհւոյն բոլոր քնարերգականները շունիմ՝ աչքի առջեւ, բայց անոնցմէ մէկ քանին՝ զորս ունիմ՝ ամենէն գեղեցիկներէն կը համարուին... Կ'առնեմ դիպուածով Սուրբ Մարկոսի ձիերը: Բանաստեղծուհին Վենետիկ կը բնակի, ու կը հոսի արիւնին մէջ պերճանքն ու հաւատքը հայրենական մեծութեան, յուշարձանները՝ որ փառքի դարերը կը յիշեցնեն, կը ներշնչեն անոր խանդավառ և անվեհեր աւիւն մը: Սուրբ Մարկոսի ձիերը հուր կը շնչեն անոր եռանդեան՝ քերթելու քերթուած մը լի կորովով ու մեծանձն զգացումով:

« Տեսքը այն յաղթանդամ ձիերուն՝ որոնց վրայ կը խտանան պատմութիւն և զրոյց, կը յիշեցնեն անոր էջեր վաղնջական, անմահ յիշատակի:

Այն ձիերուն՝ որ հրաշունչ

Յոյն հողին վրայ՝ բարկ խօշիւնին մէջ խաղմին,

կը տեսնէին անցքը պերճ

Քաջախիզախ համերանուազ հազներգուաց:

« Այսօր սակայն փառքի այն շողիւնը որ փայլատակեց այնքան դարեր՝ անհետացած է, որմէ ինքզինքը մահացած կը զգայ ու կը մռնչէ, մինչդեռ

կը մըռնչեն մեռելներն,

Չիերն հրաշունչ կը մըռնչեն կործնիւած,

Մըկանուածին պիեդ, կարչնեղ,

Պատրաստ միշտ պերճ ճեւղի, գափրի, գոփերու:

Յաւիտ. Չրոյց

\*\*\*

Կը մըռընչեն մեռնիներն...  
 Եւ անտարբեր անոնց մուռնչին կամ խաթուս:  
 Յամասորէն կը նընչին  
 Ողջերը քունը սասկալի վաստիմեան:

« Հայրենիքը երբ Յակոբ Մանէլայի յու-  
 շարձան մը կը կանգնէր՝ վինկինտացի դրա-  
 գէտին պատկերը ապագային յանձնելու հա-  
 մար, Վիկտորիա՝ յիշելով իր ծերունի ու  
 բարի վարպետը՝ որ 1896ին իր քերթուած-  
 ներուն վերջին տպագրութիւնը անոր կը  
 նուիրէր, որպէս զի այն հատորը միայն յի-  
 շատակ մը չլլար, այլ և հրասեր մը՝ հատարելոս  
 և հրատարակելոս իր քանաստեղծական եր-  
 կերը՝ որոնց այնքան զեղեցիկ նմոյշները տեսած  
 էր իտալիա, յարգալիբ սիրով, անձնանուէր  
 մեծարանօք կ'ըղերձէ ողջոյն մը, և մտարե-  
 րելով թէ ինչպիսի՞ դասնութիւններով վըշ-  
 տացած էր կեանքը այն մեծ մարդուն, ու  
 յիշելով սրբանուէր բարութիւնը, համակամ  
 համբերութիւնը որով ապրած էր ան և տա-  
 բած մարդկային նենգաւորութեան, կորովի  
 առնութեամբ կը գոչէ:

Հանգէտին երգ չեմ  
 Հընչեցներ կս արգ,  
 Ու ծագիկ, ոչ սարգ,  
 Ու դրօշ կը բերեմ:

Այլ մեռնամած, ազօթանըւէր  
 Կը նայիմ կս վեր:

Ու կ'ըսեմ. ո՞վ դուք  
 Ազատ եղբայրներ,  
 Մեռեալ եղբայրներ,  
 Ողջերն նէք սպասուք  
 Ունին խօսքի՛ մը, այն խօսքն արդեօք  
 Պիտի չըսէք դուք:

«Հրատարակած բանաստեղծութիւններուն մէջ՝ օրիորդ Վիկտորիան իր նախասիրածներն ունի, որոնցմէ հետեւեալ երկուքը՝ նախամեծարներէն են զորս իրենց ամբողջութեամբը հոս պիտի բերեմ. Վերնագիրներն են. Կ'երագե ծեր հոգին... և Երբէք<sup>2</sup>: Ամենագեղեցիկ են:

«Կազմութեան ինչ կատարելութիւն, ինչ հաճոյական նորութիւն գաղափարի: Կարդալով այս տողերը՝ ականջը հմայուած չի՞ զգար մարդ՝ խորհրդաւոր բառերու անուշակ մրմունջովը, չի՞ թուիր իրեն որ սողողուի, կախարդուի հոգին՝ ողբանուէր քնարումէն ձայներու՝ որոնք կը գերեն կը թմրեցնեն քաղցրութեամբ, մինչ ձեզի կ'ընկերանան երազներ գրոյցներու, ասպետներու, զէնքերու և սէրերու:

«Վիկտորիայի քնարերգականը չէ անոնցմէ՝ որոնք ամէն օր կը կարդացուին, շափազանց մեծ շնորհ մը պիտի ըլլար. կայ անոր մէջը նախանձելի, անհաւասարելի կատարելութեան մը փրուեստը, կայ ձեւին անթերի կատարելութեանը քով՝ գաղափարին զմայլելի ինքնատպութիւնը. ոչ մի ծթաւնք կամ նմանութիւն, բնաւ երբեք բռնագրօսանք, ոչ մի աւելորդ մտածումներ և խօսքեր, ամենեւին կարկատումներ և զոհողութիւններ:

«Քննեցէք Լոռօքիւնը, բանաստեղծական տեսիլքը զոր հրատարակեց Rassegna Na-

<sup>2</sup> Ուսումնասիրութեանս մէջ ամբողջ գրուած են: Մեր ընթերցողը կատարիս մէջ կը գտնէ արգէն:

zionale հանդէսին մէջ, և այսօր նոյն խակ  
հայերէնի թարգմանուած է Ս. Ղազարու  
Մխիթարեաններէն մէկէն\* . քննեցէք Գի-  
շերայիներ ու տեսէք թէ այդ քնարերգերը  
ամէն օր կարգացուողներէն են: Սյս երկու  
գոհարները կարգալով՝ անդիտակցօրէն ինք-  
զինքս անհուն խանդով մը լեցուած զգացի,  
և կատուած հոգիս՝ կարծես բաժնուեցաւ,  
մինչդեռ կը թուէր ինծի որ ես ալ գոչէի .

Ան գիշերը կողուտակ, խաղաղիկ  
Գիշերն ամբան... Հրծփուններ  
Գողարիկ, լուսեղ բարախուռներ սաստկբու,  
Բուրուռներ մեղմ, ա՛ն, մըտէք:

« Ու այն յափշտակութեան մէջ, տեսնել կը  
թուէի բանաստեղծը որ անյագօրէն կ'երկըն-  
նար պատշգամին վրայ, ուժգին գոչելով՝

Քաղցր է սուգիւ ձով ծրփանքին մէջ ազատ  
Եւսոյ իջնոց էակաց:

« Եւ յետոյ... և յետոյ լռութիւնը, որ  
յառաջելով կ'ըսէր ինծի կարծես .

Կը տեսնես. լուս թըռիւքով  
Երազներու լայնածիր,  
Բեւեռն ի՞մ է սառնապատ,  
Ի՞մ բոցակէշն տնապատ .

Քաղաքներն ի՞մ են գոռոզ  
Ձորս բարկութիւնն աստուածեան  
Կարծանեց, արդ քարաքոս  
Ու խոտ պատնն աւերն այն:

\* Ի՞մ գրաբար թարգմանութեանս կ'ակնարկէ:

« Բանաստեղծութիւնը՝ որով Ազանուրի այս երկու շարագրութիւնները կը զարգարուին՝ հրաշալի է. զգացումը նախ կը հանգչի հանդիսաւոր, խոր խաղաղութեան մը մէջ, ու ահանջը երկնցնելով կարծես կը լսէ՝ աշնքան մեծ է արուեստին քաղցրութիւնը՝ խոխոջանքն առուակի մը՝ որ կը կարկաչէ կը հոսի մերթ ընդ մերթ խորտակուելով թեթեւակի. բայց խաղաղութիւնը փութով կը խզուի, վասն զի քերթողին մտքին մէջ կ'արթննան անցեալին յանկուցիչ ու հսկայական յիշատակները, և ուշ կը դնէ՝ մեռած քաղաքներուն ներքեւ քաղոսած ժողովուրդին հօօր բարախոսմիսն, և մինչդեռ

Խաղերն օգին մէջը կ'ելլեն կորսուելու  
Թաւ ըստուերին մէջ, քաղցրիկ  
Եւ ահաւոր պատմութիւններ պատմելով,

և մինչդեռ

Մըտիկ կ'ընէ զիշերն անշարժ ու լռիկ,

գրգռուած կը գոչէ.

կը զգամ ես, ո՞վ գարեբու  
Վ իթխարի թեւ, բախիւնդ. ու նե՛տըդ ազատ  
Առգեւթներէ մարդկային  
Ժամանակին ոգին կը շուէ բաց դաշտերն...

Այսպէս հոգին դէպ ի ետ գաղթելով՝ վար  
ժամանակին հեռաւոր անհունութեան մէջ կը  
տեսնէ

Քաղցր ու խոժոռ ըստուերներ  
Դիցագներու, սուրբերու

## և Տանդէ

Որ կրցաւ ս'զլ ոչլ իջնել  
Դէպ ի մահուան զաւաններն.

կը տեսնէ Հոռմը, երբ

. . . . . նենդոս զնն  
Յիմարութեան աշն ստեն  
կ'արթըննար մուսա՝ աչքերուն մէջ Ներոնի,

և կը լսէ որ խելայեղ կեսարը քղամիդը ցե-  
խին մէջ քաշկըռտելով, կը մոնչէ. ինչ որ  
յի ծախր՝ կը կտարեմ:

«Յետոյ քերթողին մտածութիւնը կ'եր-  
թայ, կը թռչի հոն ուր

Իրիկունները սակի՝  
կը սրցուն լինջ միմարէներն ու ժրկիթթ...

կը յիշէ սեղանակապտութիւնները... ու կը  
մտածէ

. . . . . մեծ և արխուր  
Ազատութեան նըշանակ  
Ահաւոր խաչը կը կանգնէր Գրիստոսի,

ու կ'երեւակայէ

Բիւզանդիոն կը ժըմտի  
Նըմդեկացեալ յաղթականին աշխարհի.

«Հոս Վենետիկ իրեն կը քաշէ երագողին  
ուշադրութիւնը՝ և հոյակապ վերյուշումներ-  
րուն մէջ ցաւագին յիշատակ մը կը մթազնէ  
անոր միտքը, երբ կը մտածէ թէ



Ի Գամբոֆորմիոյ սպանուած  
 Վե՛՛ն ծերակոյտը կը լըռէր, և ստար  
 կը պարզուէր գրո՛ւ մը արխուր  
 Ի Սուրբ Մարկոս՝ նըկարուած սեւ ու գեղին:

« Բայց անմիջապէս կը սրտոտի՝ և անարգ  
 դաշնագրին, նախատալից բանակցութեան  
 յիշատակին՝ կը յաջորդէ յիշատակը սիրելի  
 հայրենիքին փրկութեան, ձեռք բերուած  
 ազատութեան, ու հրճուալից կը գոչէ:

Մարկերայի ողմբածիզ  
 Որստացին այն օր հրակայթ թընդանօթք.  
 Ձողերէն վար զլորեցան  
 Արծիւ ու գրօշ շարգուփըշուր խառնիխուռն:

Միակ կեցցե՛ մը խուփեց  
 կուրծքերէն գուրս. կայծակ քաջաց աչքերէն.  
 Եւ լըսուեցաւ չի՛նջ ոգին  
 Մէ՛ջ մեռելոց երգին թըրթռումը ցընծում... »

« Վիկտորիա Աղանուր կոմսուհին դժբախ-  
 տութիւնն ունեցաւ իր հայրը կորսնցնելու,  
 « քաղցր բարերար մը՝ որ Արեւելքէն (Աղա-  
 նուրները ծագումով հայ են) Վենետիկ բերաւ  
 բարութեան մեծ լոյս մը », և նէ ընկճուած  
 անյատակ տխրութեան մը տակ, ամենաքըն-  
 քուշ բացատրութեամբ իր մտքին առջեւ կը  
 նկարէ կորսնցուցած ծնողին պատկերը: -  
 Հոս իր բանաստեղծութիւնը բարձունքը կը  
 թողու, ու պարզագոյն՝ սրտի մօտիկ լեզուով  
 կը խօսի, և դասական եղերերգութեան անու-  
 շակ հոսանք մը կը բղխի իր ականակիտ,  
 շողշողուն, հիանալի տողերէն, որոնց մէջ  
 կայ համադրական, յաջող վերյուշումը այն  
 համակրելի, ազնուական, մեծարելի դէմքին,

չոսյլումովը նահապետական՝ ճերմակ մազերու, որ զինքը պատարագիչ քահանայի մը կը նմանցնէին, առաքելալի մը, սուրբի մը՝  
 Լսեցէք, ի՞նչ մեծ վայելչութիւն, ի՞նչ աշխոյժ, ի՞նչ արուեստ

Արդ կը նաեղիս: Հանգէսներէ ճանճրացած,  
 Հետու քաղքին պերճանքներէն, զիւզական  
 Գերեզմանին մէջ ուզեցիր նընջել գուն:  
 Քընտրանիք քարին վըրայ չի հընչիք  
 Անթափանցիկ կամար շիրմի մ'հայակապ,  
 Ու քաղցր սկնարկը կ'արդիւնէ երկընքին  
 Որ կը հըսէ անոր վըրայ: Շուրջ ունիս  
 Դուն ծաղկընէր առոյգ. ապրիլ սմուսն մէջ  
 Խընկարոյր հոյն անոր կ'անցնի վըրայէն,  
 Ու քարեզուս կ'իջնէ լուսնակը գէղ նն

\* Առթիւ մէկ ուրիշ նարցումիս՝ զոր ուղղած էի Վիկտորիայի՝ գեռ նատարը թարգմանելու գիտաւարութիւնը շունչեցած՝ թէ «նատարին մէջ ս'ը քերթուածն աւելի՛ նահելի, սիրելի է իրեն» և այդ նախասիրուած քերթուածը թարգմանելու գիտումով, պատասխանեց ինձի նետուսալ բաներով, որոնք ակն յայտնի կը պարզեն անոր պաշտամը իր նորը նամար: — «Մէկ չէ, այլ շատեր աւելի սիրելի են ինձի, ուրիշներ լուսազոյններուն մէջ կը գասեմ: Այսպէս ուրիշն անոնց մէջէն՝ զորս աւելի՛ կը սիրեմ, վասն զի սրտէս հլած են (ուրիշներ երեսակայութեան ծնունդ են, և արուեստի սեսակէտով կընան մեծազոյն արժէք մ'ունենալ, բայց սա տարրեր ինզիր է), անենն աւելի սիրածս ՀՕՐՍ նամար երգած քերթուածս է: Կ'ապահովցնեմ դձեզ որ զայն մեծ մասամբ արտասուելով զրեցի: Հայրս պալտած եմ, վասն զի իր նոցին իրաւցընէ սուրբի մը նոցին էր: Անոր մասին ինչ որ ըսի ճշմարտարիան էր, զուտ է՛մարտարիան, առանց մեռէ չափազանցութեան, շանացած եմ նկարել անոր բարոյական կիրառէ՞ցը խղճամիտ էջգութեամբ, վախնալով որ չըլլայ թէ խանդարեմ՝ զձին յատակութիւնը՝ նոյն իսկ նշանով մը կամ լուսով մը զոր չգանէի յիշողութեանս մէջ, որ լեցուն էր այն սիրական պատկերով»:

Գիշերային ըստուերներուն մէջ՝ քնարանգ  
 շամբուրիւու. և այն աստղերը, սիրուն  
 Այն աստեղներն յիշելով քու նայուածքներդ  
 Երկայն, և քու կիսցումներդ երկայն,  
 Անոր վերայ կեցած փայլակ կը դրկին  
 Եւ պատգամներ աստուածային դէպ ի վե՛  
 Հողիդ՝ որ բնաւ չեղաւ այնպէս գիտակից  
 Ու երանիկ՝ ըզգալով իր բարտխերն՝  
 Ողջ մէկ կուէն Տիեզերքին՝ յի՞նչ Աստուած:

«Ընտանիքի անուշակ քնքշանքներուն դիւ-  
 րամատոյց ու բաց սրտէն կը խուժէ գորո-  
 վանքի զեղումը, և ահա Հրածնշտը՝, ահա  
 ողջակէզը սիրոյ ժպիտին ու գգուանքնե-  
 րուն՝ սուրբ և նուիրական սեղանին վրայ,  
 ուր կը վառի կենդանի և մշտեռանդն որ-  
 դիական սիրոյ բոցը:

«Բնութիւնը՝ իր տեսարաններուն անհուն  
 և յանկուցիչ զանազանութեամբը քերթողին  
 զգայնութիւնը կը ցնցէ, և անոր նկարել կու  
 տայ գոյնով ու կեանքով լի նկարներ:

Ամէն երակս աստղաութիւն կը թընդէ,  
 Ու իմ սրբտխ ամէն մէկ վառ զարկին մէջ  
 Տիեզերքին սրբտին թընդիւնը կը զգամ:

«Այսպէս կ'աղաղակէր Աղանուր օր մը,  
 ամառ ատեն, սեւեռուն՝ պատշգամին վրայ,  
 նայելով ծաղիկներուն ու խոտերուն, և մինչ-  
 դեռ կ'անձրեւէր, և

. . . . պատուանները դէպ ի բաց՝  
 Հրակէզ, յամառ տօթին այն խուն դազարին՝  
 կ'հլէին պարտէզէն թարմ շունչն ու բոյրեր  
 կենդանացած ծաղիկներուն, խոտերուն,

\* Տես Հատորիս մէջ,

կը մտածէր.

Ըլլալ տունի, ըլլալ տերի, ըլլալ ցօղուն  
 Եւ տաղնապին մէջ հրամուս...  
 Մխիթարանք մ'ունենալ այսպէս երկընթէն...

« Սիրո՞ւն քաղցրութիւններ և անուշակ  
 պարզութիւններ թէ՛սկրիտեայ և Վ. իրգիլի՛  
 ձեզ կը յիշեմ... »

« Սակայն այսչափով չեն սահմանափա-  
 կուիր արժանիքները քնարերգականին Աղա-  
 նուրի, որուն բանաստեղծութիւնը ամբողջա-  
 կան է և միշտ գեղեցիկ. գեղեցիկ, վասն  
 զի ուրիշ ոչ մէկի նմանելու տառաւելութիւնը  
 ունի. գեղեցիկ՝ վասն զի ունի իր մէջը գե-  
 դուն, վստահ, լուրջ և յանդուգն քնարեր-  
 գութեան մը ձիրքերը »

« Վ. իկտորիա Աղանուր բանաստեղծական  
 հոգի է, խանդը միշտ վառ, երեւակայու-  
 թիւնը աշխոյժ, լայն ինքնարդիւնութիւն,  
 դատողութեան սոյնութիւն, մտածոտը վեհ  
 զնայումանց մէջ խրոխտօրէն հոշարեւ, սեփա-  
 կան պատկերներ և սահուն և քնքշոտ բա-  
 ցատրութիւն »

« Վ. իկտորիա արձակ ալ լաւ կը գրէ, և իր  
 համբաւը անցած է արդէն սահմանագլու-  
 խը, ապացոյց այն՝ որ նշանաւոր գրագէտներ  
 պատիւ կը համարին իրենց թարգմանել մեր  
 կորովի բանաստեղծուհին, T. Alexander,  
 անգլիացի գրագիտուհին՝ այնքան գնահա-  
 տուած Ռըսքինէ, թարգմանած է Հօրս քեր-  
 թուածը, Պ. Մէյէր, գերմանացի, Սաքէր  
 Մասոխ, — մէկ քանին յիշելու համար —  
 ուրիշ կտորներ թարգմանեցին, նշանաւորն  
 Հ. Ղ. Աւիշան հայերէնի թարգմանեց իր

Չատիկը\*։ Տիագ Բլազա, շատ կտորներ՝ սպաներէնի։ Ռիէզի յունարէնի՝ իր Սեր չի քերթուածը։

« Եթէ Վիկտորիա Աղանուր գիջանի յորդորներուն՝ որ կ'ըլլուն իրեն, եթէ յաղթէ իր յամառ կամշոտութեանը, իր չափազանց համեստութեանը, և հրատարակէ՝ իր քերթուածներն հատորի մը մէջ ամփոփուած, քննադատութիւնը պիտի գտնէ ինքզինքը բարձրագոյն մտքի մը առջեւ, իզական հանձարի մը, որ արծուօրէն կը թռչի ուրիշներուն վրայ, և ընթերցողները, որ բազմաթիւ պիտի ըլլան, հմայուած պիտի գոչեն մեր ողբացեալ Կոմսուհի Լառայի պէս. «ճ՛վ գեղեցիկ, ճ՛վ հմուտ. ճ՛վ իտէալ մեր Վիկտորիան »։

Երբ սոյն ուսումնասիրութիւնը հրատարակուեցաւ նախ *Pensiero Italiano* (իտալական մտածում) թերթին մէջ, *Marzocco* թերթը որ Փլորինտիա կը հրատարակուի, և իտալացոց դրական առաջին թերթն է՝ և որոնք արուած ածականներն են միշտ *autorevolissimo* (ամենազինակաւոր), *spettabilissimo* (ամենայարգելի), իր առաջին տարւոյ 44րդ թիւին մէջ այսպէս կը գրէր.

« Հիացումին դոր կը յայտնէ նեղինակը (Յովհաննէս Գանեսայցի) ազնուական դրագիտուելոյն համար՝ կը մասնակցինք մենք ալ. մենք եւս կը համարինք որ Աղանուրը՝ անվիճելիօրէն առաջին՝ իտալեոյ ողջ բանաստեղծութիւններուն միջև՝ լուսազոյն գիրք մը կը գրաւէ նաև զեղեցիկ երկրին մէջ այսօր ապրող բանաստեղծներուն միջև... » եւն, ու փափաք կը յայտնէ որ հատորի մը մէջ ամփոփուին ու հրատարակուին.

Ճիշդ նոյն կարծիքը կը յայտնէ և Հոսի *Fanfulla*

\* Սխալ ըլլալու է այս տեղեկութիւնը. կամ ինքի անձանօթ է Ալիշանի թարգմանութիւնը, իմ գրաբար թարգմանութիւնս 1908ին է. այդ տողերը գրուած են 1898ին.

Թերթը, ի՛յ, տարի, Թ. 882, երբ կը գրէ. «Յովհ. Գանձևացցի Pensiero Italiano Թերթին մէջ զեղեցիկ յոգուածով մը երկարորէն կը գրագի վ՛նեհակուհի ազնիւ և հոյանուն բանաստեղծուհիով: Գանձևացցի կը համարի՝ և մեղի կը թուի իբրևամբ՝ թէ վ՛րկտորիա Աղանուրն իտալիոյ ողջ բանաստեղծուհիներէն առաջինն ըլլայ, և արգի բանաստեղծներուն միջև լատաղսն գիրքերէն մին գրուէ:»:

Յանֆուլան ալ կը փափագի որ առանձին հատորով լոյս տեսնեն Աղանուրի քնարերգականները «Ըսի միշտ ինքնատարզ մտածումով և չքնադազեզ՝ ընտիր մեւովն ու ունովը», ևւն:



Ռումէոյ Ա. Կալլենկա, 1903ի մայիս 28ին բանախօսութիւն մ'արտասանեց ի Բերուհիա վ՛րկա. Աղանուրի բանաստեղծութեանց մասին, զոր արդէն մեծագոյն մասամբ թարգմանած էի Բազմավէպի 1903ի, 10րդ թիւին մէջ. ուրկէ կ'արտասուեմ հոս.

«վ՛րկտորիա Աղանուր, կը գրէր Հենրիկոս Գասդէլնուովոյ, երբոր հանճարեղ գրագիտուհին հատորի մը մէջ ամփոփեց «ցիր ու ցան ծաղիկները, հիւսելու համար միակ պսակ մը ու դնելու համար զայն նոր գերեզմանին վրայ իր մօրկանը՝ որ գգուանքը եղաւ, պաշտումը եղաւ իր կեանքին», վ՛րկտորիա Աղանուր պէտք չունի ներկայացուելու: Իսկ այսօր, երեք տարի ետք առաջին տպագրութենէն, այսօր, կ'աւելցընեմ, ամենեւին պէտք չունի ներկայացուելու, այսօր, երբ իտալիոյ մէջ չկայ անձ մը՝ քիչ շատ մշակուած և սիրող գեղեցիկին՝ որ կարդացած ու խոնոնած չըլլայ իր հատորը:

«Եւ ոչ իսկ իր քերթուածները պէտք ու-

նին մեկնուելու, վասն զի անոնց մէջ գա-  
ղափարներու բարձրութիւնը չի մթազներ  
երբեք բացատրութեան յստակութիւնը, ահա  
զօրութիւնը իսկական, մեծ բանաստեղծու-  
թեան. բանաստեղծութիւն մը՝ զոր կ'ըմբռնէ  
մարդ առանց շափազանց յոգնութեան մտքի,  
որ կը խօսի սրտին ինչպէս և մտքին, և է  
խոստովանութիւն մը անկեղծիկ՝ եռանդուն  
զգացումներու, զգացուած տենչանքներու,  
որոնք կը յայտնուին անբռնազրօս, որով և  
կարող կ'ըլլան ունկնդիրը յուզելու: Եւ այս  
բանիս մէջ Աղանուրը կը հետեւի արժանա-  
ւորապէս իր վարպետին՝ Ծանէլլային: Որուն  
համար (կը յիշէ՞ք) ըսաւ Գարսուչչի. « Ան-  
կարելի կը թուի մեր դարուն համար, որ  
նոյն իսկ երբ գեղեցիկը կը քաղէ, ճիգով  
մը կը քաղէ, կը կոտորտուի, կը նազի ու  
կ'ընդողնէ Տրասոնի նման »:

« Այս դիւրութեամբ և յստակութեամբ,  
բայց և շատ հեռի հասարակ պարզութենէն  
որ արդիւնքն է մտածումի ոսնութեան և ոճի  
անստուգութեան, նէ՛ աւելի քան ուրիշ բա-  
նով՝ կը մօտենայ իր վարպետին: Ուրիշ տե-  
սակէտներով կը հեռանայ անկէ: Կը խուսէ  
անոր առջեւէն, կախարդուած վտանգաւոր  
եղջերուաքաղերէ, յաճախ ստախօս երազ-  
ներէ, զոր Ծանէլլա՝ Աստիքելլոյի քերթողը,  
մեկամաղձոտ քահանայն, շճանչցաւ և շուզեց  
ճանչնալ. երբեմն, ոգեւորուած հոգեկան ծա-  
ծուկ ազդեցութեամբ մը, կամ բոմանդիկ  
կերպով տժգունած հեռաւոր ուրախութիւն-  
ներու յիշատակովը, երբեմն, քաջայանդուզն  
այժմէութեամբ իր գաղափարին ու մտածու-  
մին՝ կը գերազանցէ զանիկա: »

« Անկէ դաստիարակուած, և ի բնէ յօ-  
 ժարեալ՝ ներշնչումը ստէպ բարոյական վախ-  
 ճանի մը յանգեցնելու, դիւրութիւնը սան-  
 ձելով և ուղղելով արուեստով. նէ՛ հետեւելով  
 այն ճամբուն մէջ՝ զոր գծած էր « աջողակ  
 հետեւողը բարինեան և մանծոնեան աւան-  
 դութեանց, ձեռովը՝ դասական, թէեւ արդի  
 մտածումով տողորուն », Վիկտորիա, իր  
 քերթուածներուն մէջ այլաբանութեամբ կը  
 ստուերագրէ՝ յաճախ վարդապետութիւն մը,  
 մտացածին անձերու ձայնովը, կամ իր իսկ  
 հառաչովը կ'ողբայ՝ վարպետ ձեռքի յան-  
 կարծահաս հպումներով զայն՝ որուն « կը կա-  
 րօտինք ամենակարճ այս աքսորին մէջ » .  
 տեղի աալով յաճախ սրտի ձայնին՝ կը պատմէ  
 գաղտնի կռիւները հողւոյն անկեղծ պար-  
 զութեամբը անօր՝ որ ինքն իրեն, կը մտածէ  
 վիճակը իր կեանքին, յիշելով կարճ ժամերը  
 ուրախութեան, և երկայն ժամերը ցաւի և  
 վշտերու. երբեմն՝ յանդուգն վարագաթեւ  
 ճախրանքով՝ որ անծանօթ մնաց իր վարպե-  
 տէն՝ կը սլանայ ամենէն աւելի ազնուա-  
 կան բարձունքը քաղաքական և մարդկօգուտ  
 (umanitaria) բանաստեղծութեան . բայց  
 միշտ, նոյն իսկ երբ այնպիսի նիւթեր երգէ՝  
 որոնք շատ ծանր պիտի ըլլային առանց քեր-  
 թողին համակրանքին, կը գրէ նէ այնպիսի  
 նորութեամբ, և այնպիսի ներդաշնակու-  
 թեամբ, հարստութեամբ պատկերներու, ըզ-  
 գացումներու փափկութեամբ, որ նիւթը կար-  
 ծես հրաշքով կը թեթեւնայ, կ'իջնէ ծանր  
 գաղէն՝ որուն վրայ դրած են զայն փիլիսո-  
 փաներն ու ընկերականները, և կու գայ խօ-  
 սել մեղմօրէն մարդոց սրտերուն :



« Կը յիշէ՞ք՝ Մանէլլայէն՝ իմաստասիրական և գիտական քերթուածները, այն՝ ըստ Գարտուչչիի, « ընտիր և պանծալի թարմութեամբ, Վիրգիլօրէն գեղեցիկ » քերթուածները, հռչակաւոր Գեղօնն ի խնցեմորքն բրածոյ, Սուգի պարանոցին բացումը, Մանրադետ և Հեսադետ, Բնութիւն և Գիտութիւն, Ճարտարարուեստ, ինչպիսի բնականութեամբ և պարզութեամբ կը բացատրեն ամենայանդուզն գաղափարները: Այսպէս եթէ առնէք Աղանուրի թեմերի վարսամը, Պատշգամեն, Լուսարիւն, որոնց մէջ քերթողական մտածումը յիրաւի կը դիմագրաւէ իմաստասիրական մտածումի թեւերուն վրայ, պիտի գտնէք բնականութիւն և պարզութիւն ամենախորին յղացումներուն մէջ իսկ: Բայց Վիկտորիա՝ թէեւ իր վարպետին՝ որ կը պանծար իր աշակերտուհւոյն վրայ՝ ունէր ջինջ պարզութիւնն ու վճիտ ոռնութիւնը, և միտումը՝ ներշնչումը բարոյական վախճանի մը դարձընելու, բայց՝ խօսելով Գասդէլնուովոյի հետ՝ Վիկտորիա չի հրաժարիր, և ոչ իսկ եթէ ուզէր պիտի կարենար հրաժարիլ, իր ուժեղ ու կորովի անձնականութենէն. և թէեւ՝ գուցէ չըլլայ իր քնարերգականներուն մէջ հատ մը որ հաւասարի Մանէլլայի երեք կամ չորս շարադրութեանց արուեստագիտական կատարելութեանը, բայց պիտի համարձակէի ըսել որ Վիկտորիայի երանգապնակը աւելի բազմերփեան է, իր զգացումը՝ աւելի հոծ, և իր մտածումը՝ երբեմն՝ աւելի խոր: Իր տողերուն մէջ միայն միտքը չէ որ կը խօսի, կը խօսի նաեւ, և ստուգիւ յաճախակի, սիրտը, և ամէն մէկ տունէ կը բուրէ ան-

ճառելի բոյրը իր զգայուն հոգւոյն, քնքշելի գգուանքներուն իր սրտին: Տխրանոյշ շունչը սիրոյ կու տայ իր քերթողական գործին կենսական շերտութիւն մը՝ որ կը պակսէր Մանէլային. կ'երգեն իր քերթուածները ինչպէս Վարսամի զարմանագործ գորութիւնը, մարդկային փառամոլութեան անիրաւութիւնը, կ'երգեն նոյնպէս զարնանային իրիկուններու զմայլանքը, երազները սիրահար հոգեակներու, սիրական ձեռքի մը սեղմումը: Կ'երգեն յոյզերն ու գորով: Մարդկային կեանքին յաւիտենական այս հակասութիւնը, խնդութեան և արցունքի այս աղբերակը, ցանկալի և ահարկու, փարելի և ատելի, և հուսկ ապա ողբալի՝ իրբեւ կորսուած մեծ քաղցրութիւն մը:

«Վիկտորիա չէ՛ այն քերթողներէն որոնք մթին և ասեղծուածային այլարանութիւններով, պարբերութեանց անսովոր դարձուածներով, մոռցուած բառերու խճողումներով, կը ջանան պարտելի իրենց մտքին սնամէջ դատարկութիւնը արուեստական փրոցուսոյց կերպերով: Ան՝ անոնցմէ չէ՛:

«Իր քնքուշ հոգին, հազիւ շուրջը դարձուցած երիտասարդական նայուածքը, գուշակեր է անհուն տխրութիւնը մեր այս կեանքին: Փորձը աւելի եւս պարզեր է թաղծոտ տեսիլքը. առոյգ հանճարը խոկացեր է ճակատագրին վրայ յաւիտենական այս ողբերգութեան. և երգեր է դաշնակաւոր ձայնը: Աչքերն ալ՝ որ գիտեն՝ գոգցես աստուածային շնորհիւ՝ հարցարանել գաղտնիքը երիտասարդ տունկերուն ու Սպրիւը կը ծաղկաւէտեն, գաղտնիքը աստեղազարդ գիշերներուն,

լացեր են. բայց ոչ լացը յուսահատութեան.  
անոր՝ որ իր առջեւը չի տեսներ ուրիշ բան՝  
բայց եթէ խաւար աղջամուղջ, այլ մեւամաղ-  
ձիկ լացը անոր՝ որ կը տեսնէ ցնդիլը շատ  
մը յոյսերուն, ոչ ամենուն: Մեծ է խտիրը,  
տեսարք, որ կայ, ռոմանդիկ տխրութեան և  
յոռի տեսութեան միջեւ:

« Իր բանաստեղծութեան մասին կը գրէր  
Տոմենիգոյ Զիամբուլի. « Ընթերցումդ աւար-  
տելուդ՝ միտւած կը մնաս սուրբ կախար-  
դանքի մը մէջ, որուն դէմ ի զուր է մաքառիլ,  
վասն զի արդի մտածումին սքանչելի յայտ-  
նութիւնները կը համառօտէ, վասն զի իր  
մէջ կը ծրարէ մեր քաղաքականութեան թա-  
քուն խորքերը, գերագոյն նրբութիւնը, մտա-  
ւորական վճատութիւնը, բարւոյ եռանդը և  
արհամարհանքը՝ ռամիկ տիրապետութեանց  
դէմ: Քանի՞ տարի է որ մեր մատենագրու-  
թիւնը չէր արտադրեր գեղեցկութեան այս-  
պիսի հրաշակերտ մը: Ո՞ր դարը ելլելու ենք՝  
գտնելու համար քոյր մը՝ մեծագոյն՝ քան  
այս ամենանոր հետազօտիչը սրտերու: Իր  
և ուրիշ արդի գրագիտուհիներու միջեւ կար-  
ծես աստեղային միջոցներ կան. իր և հինե-  
րու միջեւ կը հոսի ընդարձակ լեթէ մը, ուր  
ներշնչուած գեղեցիկ գլուխները կը ննջեն  
հանդարտօրէն՝ աստղերուն աղօտ շառայլովը:  
Իրենց բանաստեղծութիւնը, չափաբանու-  
թիւն մըն է կամ ընկերական տեսութիւննե-  
րու, փաղաքշտ քնքշանքներու, ամենօրեայ  
տարփանքներու, կամ պատմական յիշա-  
տակարան մը՝ որ երբ բաղդատուի՝ կրնայ  
մեծագոյն արժանիք մը տալ այս քնարերգա-  
կաններուն: Յիրաւի, մեր քնարերգութիւնը

քիչեր ունի որ կ'ապրին, որոնց վրայ ամէն ազգ պէտք է նախանձի. Գարսուչչի, Քիարինի, Կրաֆ, Բաւքուլի, Զօկացցարոյ, Մացցոնի, Մարրատի, Բանցաքքի, Տ'Անունցիոյ. արժանի են յիշուելու նաեւ Կրացիա Բիէրանդոնի-Մանչինի, Ալինդա Պրունամոնդի, Ատա Նէկրի. բայց եթէ ունի Աղանուր աշխոյժ կորովը ոմանց, վճիտ պարզութիւնը, յանդերու ճօխութիւնը, պատկերներու ինքնատպութիւնը, կը յաղթէ միւսներուն այն սրբազան կրակովը՝ որ կը հոսեցընէ երակներուն մէջ խորհրդաւոր սարսուռ մը, այն անսահման սարսափելիովը՝ որ անհունը կը խորհրդանշանէ: Կրնայ ըսուիլ իր հանճարին համար.

«Il sait qu'il est aiglon, le vent passe, il le suit»

«Գիտէ՛ թէ արծուի ձագ է, կ'անցնի կ'իջն, ետեւէն ինք»:

«Քաղցր է ուրեմն երգը Վիկտորիա Աղանուրի, քաղցր՝ թէեւ մեղամաղձիկ ծրարի մը մէջ պարուրուած, թէեւ ծրուած խորհրդաւոր ստուերով մը՝ զոր չեն կարող բացատրել իմ խօսքերս. Aussi malaisée à définir qu'à oublier. Որովհետեւ քնքուշ քերթուածները քերթողներուն՝ որոնք՝ նման Աղանուրի, գիտեն սքանչելապէս բարեխառնել իրականը դաղափարականին հետ, տեսնուած իրերը երազուածներուն հետ, որոնք կը տեսնեն երկիրս՝ ոչ ինչպէս կ'երեւի ան ռամկին, այլ, պիտի համարձակիմ ըսել, իրենց հոգիին մէջէն, իրենց հոգւոյն ջինջ լուսովը լուսաւորուած, կ'ըսեն, անոնց բուն նշանա-

կութեան ուշադրութիւն դնողին, շատ բաներ, զոր նոյն իսկ խօսքերը չեն կարող բացատրել: «Il y a bien des choses inconnues qui entrent malgré tout» կ'ըսէ Մեդեոլինք: Բառերը կը նկարագրեն իրերը այնպէս ինչպէս մենք կը տեսնենք զանոնք. բայց ամէն իրերու երկրորդ, խորհրդաւոր բնութիւնը՝ չի տեսնուիր, կը մտառուի. և միայն երբեմն՝ հոգեկան ինչ ինչ մասնաւոր պայմաններու մէջ. և այսպէս՝ ինչպէս որ կը վրիպի մեր խեղճ զգայարանքներէն, կը վրիպի նաեւ մեր նկարագրական արուեստէն. բայց մեծ քերթողի մը տողերուն մէջ կը գուշակուի, կը զգացուի Կ'երեւի և կ'անհետանայ եթէ ջանանք կեցընել, թիթեանիկի փափուկ թեւերուն պէս, մատներուն մէջ կը չքանայ, որով ի զուր քերթողական գործի վրայ խօսող մը կը ճգնի գաղափար մը տալ անոր մասին:

«Աղանուրի քերթուածներուն մէջ իրերու խորհրդաւոր այս հոգին կը զգացուի զգայնութեան, մտառութեան այնպիսի նրբութեամբ, որ շնորհուած է միայն ընտրեալ հոգիներուն. և կու տայ ամբողջ քերթողական գործին (չեմ գիտեր թէ քերթողուհին գոհ պիտի ըլլայ ըսածիս) ռոմանդիկ ստուեր մը, որուն վրայ նա, ուրիշները թող մտածեն ինչպէս որ կ'ուզեն, չեմ յագենար զարմանալէ:

\*  
\* \*  
\*

«Գրքին առաջին մասը ինչպէս կ'ըսէ խորագիրը *Leggenda Eterna*—Յաշխտենակասն Չրոյց-քերթուած է սիրոյ. դժբախտ սէր, ի

դերեւ ելած յոյսեր, կորսուած ուրախու-  
 թիւններ: Պիտի զգաք այս քերթուածներուն  
 փափկութիւնը: Առաջինէն մինչեւ վերջինը՝  
 երկայն հառաչ մը կը թուին: Պիտի զգաք  
 անպատմելի տխրութիւնը յուշքերուն, եր-  
 ջանիկ անցեալին: Պիտի զգաք մեղամողձու-  
 թիւնը կարճ ժամուն, վասն զի գիտէ թէ  
 պիտի սրանայ: Եւ յետոյ, հետեւելով հատու-  
 րին, Միջանկեալին—Intermezzo—մէջ պիտի  
 գտնէք հին արդելոցի մը անդորրութիւնը.  
 ամայի միայնութիւնը, աշնան անձրեւը, դար-  
 նան քաղցրութիւնը: Յետոյ Չարքնոսին—  
 Risveglio—մէջ, ուր դրուած են ամենէն կու-  
 րովի բանաստեղծութիւնները՝ անգուլ ճիզը  
 մարդոց որոնք կը տքնին ելլել վեր փառքի  
 լեռը, մեծերուն ցնորքը, մահուան անգութ  
 քմահաճոյքը, խորհուրդը խոր գիշերուան:  
 Չայնէրը խոր գիշերուան: Շիթ շիթ ծո-  
 րումը աւիշկին՝ կոճղերուն մէջ: Պտուկներ  
 րուն բացուելը: Ծովուն ողբը: Մարդասպան  
 ծանրաշնչութիւնը ճահիճներուն: Պիտի մղէք  
 նայուածքնիդ անտառի մը մէջ՝ ուր կը բնակի  
 վհուկ կին մը. հին ամրոցի մը մէջ՝ ուր կը  
 վխտան երազական հոգեգէշներ: Եւ երբ  
 ձեր հոգին հետեւի քերթողուհւոյն հոգին  
 հրաշալի այն ուղեւորութեան մէջ, տողերուն  
 քաղցրահնչակ երաժշտութիւնը, երաժշտու-  
 թիւնը մերթ յամր մերթ շտապուն, մերթ  
 տխուր մերթ զուարթ, մերթ տկար մերթ  
 զօրաւոր, այնպէս ինչպէս կ'ուզէ գաղա-  
 փարը, պիտի բարձրանայ ձեր ականջին,  
 հաճոյական, վճիտ աղբիւրի մը կարկաչին  
 նման, ականակիտ աղբիւրի մը, որ՝ ես կը  
 մաղթեմ՝ շատ և շատ տարիներ պիտի պատմէ

տակաւին ուրիշ առակներ մեզի՝ որ այնքան կը սիրենք զինքը, ուրիշ խօսքեր ճշմարտութեան և երազանքի»:

. . . . .

\* \*

Favilla (Կայծ) թերթին խմբագիրը, Լ. Տիրերի, տարւոյս մարտի պրակին մէջ՝ բանաստեղծուհւոյն նկարովը՝ գեղեցիկ և նոր ուսումնասիրութիւն մը հրատարակեց, և է հետեւեալը:

\*

« Եթէ Վիկտորիա Աղանուր Բոմբիլի գրած ըստ կամ գրէր Յիշատակներու գիրք մը, ասի անտարակոյս արուեստի գործ մը պիտի ըսար... Ինչ Յռչագիրք կրնանք երեւակայել որ գրէր, կամ գրած ըստ, համարինք թէ՛ մասամբ: Բայց յանդգնութիւն պիտի չըսար կամ ստոյգ յիմարութիւն՝ երեւակայելը գործ մը՝ որ գուցէ և ոչ իսկ մտքէ անցած է, որ հաւանօրէն պիտի չգրուի երբեք, կամ՝ եթէ գրուած իսկ է, պիտի չչնորհուի հասարակութեան մտաւորական և հետաքրքիր ցանկութեանը:

« Վասն զի քննադատը՝ որ նպատակ ունի՝ ըստ կարելոյն՝ բանաստեղծին ու անոր գործին ոգին ըմբռնելու, անոր ներքին յօժարութիւններուն, ներշնչումի աղբիւրներուն, արուեստագիտական գեղեցկութիւններուն գաղտնի ու անբացատրելի պատճառին և անոնց հմայքներուն խորը թափանցելու, մեծ

օգնութիւն մը պիտի ունենայ՝ երբ ցուացած տեսնէ՝ ինչպէս հայլիի մը մէջ՝ բաց ի Ֆիզիքական ձեւերէն, հոգեբանական բնադրոշմները, բանաստեղծին բնաւորութիւնը, միտքը և զգացումները, կարենալ տալու համար ընթերցողներուն անթերի և բանաւոր դատաստանը գործին՝ որուն վրայ կը խօսի: Մէկ խօսքով, բարեբաստութիւն մը պիտի ըլլար քննադատին համար, եթէ ձեռքն հասնէր բանաստեղծին ներքին Յուշատարը, որուն վրայ դատաստան կտրելու կոչուած է: Ասի չգոյէ այդպիսի յիշատակարանի, անհրաժեշտ է գրքին դիմել, գործին՝ որուն մէջ կը հայելանայ գրողին հոգին:

« Որով ոչ միայն քննադատները, այլ նաեւ ընթերցողները՝ որոնք՝ իրենք ալ քննադատներ են և յաճախ լաւագոյն (թէեւ առանց ի պաշտօնէ ըլլալու), իրենց ուշադրութիւնը կը կեդրոնացնեն այն կէտերուն վրայ՝ որոնց մէջ գրողն ինքն իր վրայ կը խօսի, իր ուրախութիւններուն և իր տաղանապններուն, և կամ հեռուէն կասկածիլ կու տայ, որ այս ինչ անձի մը տակ ուղած ըլլայ ինքզինքը ակնարկել և իր գէպքերը: Ուրեմն տղայական և անմիտ հետաքրքրութեամբ մը չէ որ կը մղուի ժողովուրդը ճանչնալ փափաքելու ամենափոքր մանրամասնութիւններն իսկ որոնք կը վերաբերին իր նախասիրած մէկ գրագէտին կամ արուեստագէտին. և յիրաւի եթէ խնդիրը հռչակաւոր և իրեն սիրելի անձի մը մասին չըլլար, փոյթն ալ պիտի չըլլար. բայց իր գիտնալու այս փափաքը առաջ կու գայ այն յոյսէն՝ թէ պիտի գտնէ ան այդ-լուրին մէջ՝ թէեւ փոքրիկ եղելու:



թեան մը, գործին աւելի դիւրին մեկնութիւնը, աւելի նշգրիտ թարգմանութիւնը, որ կարծես շողալ կը թուի անոր առջեւ աւելի կենդանի և աւելի խօսուն, աւելի ամբողջ, աւելի որոշ, երբ յայտնի են իրեն՝ զայն շարադրողին կեանքն ու զգացումները:

« Երբ ենթակայական (subjectif) բանաստեղծներու վրայ է խնդիրը՝ անկարելի չէ յաջող մէկ վերակազմութիւնը իրենց ներքին ոգւոյն, և Աղանուր գրեթէ իր բոլոր երգերուն մէջ ենթակայական է: Եթէ փոխանակ քննադատական-կենսագրական փոքրիկ ակնարկներու՝ զոր առաջադրած եմ գրել՝ երկայն աշխատութիւն մը պատրաստելու դիւրութիւն ունենայի, անկարելի պիտի չերեւար ինծի, անոր ոտանաւորներուն օգնութեամբը՝ իր հոգւոյն գծերը վերարտադրելու, որոնք իր իսկ յայտնութիւններէն կը ցայտեն: Չեռնարկը դժուար պիտի ըլլար, վասն զի խնդիրը նիւթական աշխարհին գոյներն ու գծերը գործածելը պիտի չըլլար, այլ բոլոր գաղափարներու, զգացումներու և երազներու վերացական աշխարհի մը: Դժուարին՝ այո, բայց ոչ անկարելի: Առ այժմ՝ պիտի ջանամ ցուցնել ընթերցողներուն Յաշխտենական Չրոյցին հեղինակուհւոյն աւելի յատկանշական և աւելի ցայտուն ձիրքերը, որոնք՝ ինծի կը թուի՝ վրիպած ըլլալու են իր բոլոր քննադատներէն\*:

\* Անոնցմէ մին, Gaston Choisy, այն գառաւտանին մէջ՝ զոր ստորեւ առաջ պիտի բերենք, ակնարկած է անոր, բայց մեզի կը թուի որ լիատու է անոր արմէնքն ու կարեւորութիւնը:

« Վիկտորիա Աղանուր քնարերգական անսողիւտ խառնուածք մըն է. իր ոճը շղուտ է, կենդանի, խկատիւյ, իր մտածումը և իր պատկերները յանդուզն են, իր նախադասութիւնը՝ յաճախ քանդակեայ՝ միշտ ինքնարուխ և վճիտ, խորշող թացիկ նրբութիւններէ. արդի՝ առանց նոր ձեւապաշտներու (manieristi) և նոր անկածներու (decadenti) յիմարութիւններուն, իր ոտանաւորը միշտ ոտանաւոր է, կերպակերպ, սահուն, աշխոյժ, ինքնարուխ. իր քնարին գերիշխան լարը՝ սիրոյ լարն է, և անկէ դուրս կորդած ձայները՝ դրուպատուրի հառաչներէ ու ողբերէ աւելի՛ խոցուած հոգւոյ ճիչեր են, որոնք կը տարածուին ու արձագանգ կը գտնեն բոլոր ազնիւ հոգիներուն մէջ։

« Երբ վիշտը կ'ընկճէ զանի, ալ ո՛չ մէկ բանի հոգ չ'ըներ, այլ կը գոչէ։

... . . . Բայց է՛նչ փոյթ  
 Է ինձի, է՛նչ փոյթ արուեստին, խօսքերուն  
 ձըլմարտութիւնը։ Ահաւոր և միակ  
 ձըլմարտութիւն՝ յիշատակաց մըշտական  
 Տանջանքն է այսու... »

« Սիրոյ լարէն գատ՝ ուրիշ ալ ունի անիկա. գութը՝ դէպ ի թշուառները, դէպ ի տկարները, շարչարուողները, և խրոխտ արհամարհանք մը դէպ ի բռնակալները։ Կան քանի մը էջեր, ա՛յնքան առլի սլաքաշեշտ նետերով անիրաւութեանց դէմ մարդոց և օրէնքներուն՝ որ մեր օրով զանոնք կը կառավարեն՝ որ արժանի են ծաղրուած, ոտնակոխ և հեծող ամբոխին երախտագէտ հիացմանը։

« Իր շանթաճարող կշտամբանքները նախ-  
 ճիրներու հեղինակներուն դէմ, թնդանօթի  
 հերոսներուն դէմ, որոնք կուրցած են իշխա-  
 նութեան ու աշխարհակալութեան անմիտ  
 գինովութիւններով, կարող են տիեզերական  
 եղբայրութեան նոր գաղափարներու առա-  
 քեալներուն միջեւ վաստակիլ անոր առաջին  
 աթոռներէն մին: Իր «Եսայի» երգը մարդկ-  
 օգուտ (umanitario) քերթողներուն մինչեւ  
 ամենաբարձր գահոյք մը կը շնորհէ իրեն,  
 ոչ իտալիոյ միայն, այլ քաղաքակիրթ աշ-  
 խարհին: Իր նախասիրութիւնը անիծեալ  
 «Եսայ»ին համար՝ անդրանկութենէն կո-  
 դոպտուած ու դատապարտուած՝ նենգաւոր  
 կերպով իր Յակոբ եղբորմէն յետադասուե-  
 լու, կը պարզէ մեզի որ անոր աչքին՝ անի-  
 րաւութիւնը երբեք չ'արդարանար, և թէ  
 հարստաճարուածները՝ նենգուածները, նոյն  
 իսկ երբ օրէնք ու կրօնք հակառակ են անոնց,  
 շեն դադրիր ունենալէ անոր համակրութիւնն  
 ու նախասիրութիւնը:

« Թոյնիկ սադրանքը քերթուածին մէջ  
 դառն ու կծու դատապարտութիւն մը կը  
 գտնենք այն օրէնքներուն դէմ՝ զորս հզօր-  
 ները դրած են տկարներուն շալակը, աւելի  
 քանի մը առանձնաշնորհեալներու շահերուն  
 ի պաշտպանութիւն, քան թէ ամենուն. որմէ  
 անոր մէջ կեանքի մեծանձն արհամարհու-  
 թիւն մը, և գրեթէ թովչանք մը՝ զգացուած  
 մահուան համար, ըղձացուած՝ իբրեւ վախ-  
 ճանը այնքան կեղծաւորութեանց և այնչափ  
 աղէտներու:

« Հրաշալի է Պատշգամեն երգը: Գիշեր է.  
 Նէ՛ պատշգամին վրայ՝ կը նկատէ աստղա-

զարդ երկինքը, կը հիանայ տիեզերքին ան-  
զորբութեանը վրայ, երբ ահա

. . . . . կասկածոս  
կը հընչէ փոյ մ'անզորբութեան  
Մէջ խոր... Լուսիմը, բրնձի քունն,  
Հո՞ս սեղեկի մը ծանրը շունչն,  
Հընչեանն ստոյգ է կը պատմէ  
Գիշերուան... .

« Այն ատեն կարեկից կ'ըլլայ նեխահոս  
զինուորանոցներու մէջ փակուածներուն վը-  
րայ, ու անոնց դառնալով՝ կը գոչէ.

Ո՛վ եղբայրներս, ինչո՞ւ անգժէ  
կը խըչին այս ժամուս քաղցրիկ  
Արբեցութիւնն. ուրիշն ինչո՞ւ  
Պիտ աւելի հանգարտօրէն  
վայելէ դոյն. ինչո՞ւ պիտի՝  
Անպատարապար՝ թըշնամիէ  
Զգախէ, գոռոց հրակշնիքէն  
կամ հըտգուցքէն ժողովարգին  
կամ հալածչաց բուռն թափէն,  
Ի՛ր, թէ անոր՝ յիմարութիւնն  
Յաղթէ, ինչքն ալ նոր ստացուածոց,  
Եւ աւելի լոյն տէրութեանց՝  
կարեանայ ինչքն ալ հըսչակելի՝  
Լուրն ազգերուն՝ որոտումի  
Բարբառներով. և ունենայ  
Պատրաստ ըզմեզ, ո՛վ եղբայրներ,  
Երիտասարդ բալոր արիւնը  
Թափելու, և լան պատու  
Մայրերը, լայ մեր սրիւրգն  
Ու նախնիքներ մաղթէ բալոր  
Աշխարհի. Ո՛վ անմեզ ստաղեր,  
Լուսակարկաշ ստաղեր, ընէք.  
— Ամբարբշտ գործ չէ ասիկա:  
Զէ՛ աւելի վայել շամբուշ  
Գազանագոյն դազաններուն  
Քան թէ մարգոց՝ բարձր մըտքով՝  
Որոնց առջև լոյս կը սըփուէ  
Բանն՝ երկրաւոր ցոյցին մէջէ...

և ոչ միայն կ'ողբայ տեսնելով այնքան երիտասարդներն՝ որոնք կորզուած դաշտերէն ու գործարաններէն, և զինուած՝ խողխողելու համար իրենց ուրիշ եղբայրները, բայց կը ճակատի նաեւ աւելի դժուարին հարցերու դէմ:

... Ո՛վ աստղեր ամբիժ ու ջինջ,  
Դուք լաւ դիտէք որ ատանց այս  
Փառքի մոլի ծարաւներուն  
Վ աստիաարակ ժանտ հրասուկին,  
Որ գարիբէ ի վեր լեցնել  
Կը չըրգի միտքը մարդերուն,  
— Մարդկային այս վընէրն անյայտ, —  
Պիտի կըրնար իւրաքանչիւր  
Ոք ունենալ պատառ մը հաց,  
Ունենալ շիթ մը սէր, ատանց  
Կըռիւներու, ատանց գըմնէ  
Խըժգըժութեան և գըժընդակ  
Գներութեան, Չէ՛ աշխարհը այս.  
Արեւն ամէնքը չի՛ տալցնէր.  
Չի՛ հասունցներ հունձքն ամենուն  
Համար...

« Եւ որովհետեւ իրկրի վրայ խաղաղութեան և մարդկային եղբայրութեան վարդապետութիւնները տարածողներուն թշնամիները՝ պատճառարանութիւններէ աւելի, նախատինքներով ու ծաղրով է որ կը կռուին անոնց հետ, ուրիշ գեղեցկագոյն երգի մը մէջ « Այգը », կ'ըսէ նէ.

Քու հըշմարիտ կեանողաց գունդ մ'ուրիշ  
Կը կըռուի այսօր մըտածման զէնքերով.  
Բայց թանձըր մէջ մը կը պատէ սըրտերն, ո՛հ,  
Բայց աւելի քան այն ատեն, ո՛վ Յիսուս,  
Անգութ են քու որդիքդ, ու չեն գազրիբ դեռ  
Անարգանքի փայտին վըրո՛յ վատչուէր  
Բեկեռելու քիչ բայց հըզօր զինուորներդ,

Որք կ'որոտան անգուշ երկրի ակունքին.  
 — Վ՛սյ ձեզ որ ձեր եղբայրներուն ուսին վրայ  
 Ձէք վարաներ անկ թեաներ գընկու.  
 Բնաներ՝ որոնց ժանրութենէն կը սասկաք.  
 Եզուկ ձեզի որ կը մերժէք ազոթքներն  
 Ու կը կորզէք այրիներուն խոնարհ յարկն.  
 Ամի՛տք է կ'ոյ՛րք. վ՛սյ է եզուկ ձեզի թիւր՝  
 Որ շիրիմներ ու կոթողներ կը կանգնէք  
 Մըտածումի կրօնաներուն, ու կ'ըսէք.  
 Ո՛հ, մեկը մեռցե՛րը մեր յիկն ազտեղն  
 Անոնց արեան մէյ, է սակայն անապատ  
 Գազափարի քարոզներուն կը պարսէք  
 Անարգանքներ ու քարուսկանք: —

Մ՛տ է այգն,  
 Հնուց ան ելէք — կը գոչեն գետ ու կ'երթան  
 Առաքեալներն լուսոյ ու գետ իբրբ ձոն  
 Կ'ընդունին ծագրն, ու գէտ ի խնջը կ'երթան  
 Դեռ անվեներ...

« Ու այդպիսի զգացումներ, այդպիսի տաք  
 ու խորունկ համոզումներ կը գտնենք այն-  
 պիսի գրագիտուհւոյ մը մէջ, որ ծննդեամբը,  
 ընկերական հանգամանքովը, հարստութեամ-  
 բը, ազգականութիւններովը՝ նշանաւոր է.  
 ուստի և մեծագոյն արժանիք ունի և մեծա-  
 պէս դրուատելի է:

\*

« Վիկտորիա Աղանուր ծնաւ ի Վենետիկ\*  
 կոմս Եղուարդէն և կոմսուհի Յովսէփինա-  
 յէն, որոնք սերած են երեւելի, հարուստ,  
 հին ընտանիքէ՝ պարսիկ\*\* ծագումով, որ

\* Սխալ է այս տեղեկութիւնը. Վիկտորիա Բառուս  
 ծնած է:

\*\* Այս սեւով Վիկտորիայի մայրն ալ պարսիկ (!) ծա-  
 գում ունի, որ անտեղիներուն անտեղին է: Վիկտորիա,  
 որոշակի իբ չոր ազգութիւնը լայտներով, այլ և այլ  
 թիւր կարծիքներու տեղի տուած է. կուուած է ևնդիկ,

սպա վենետկեցի եղած է շարք մը բարե-  
գործութիւններով: Աշակերտուհի եղաւ նախ  
Մանէլլայի, և յետոյ Նենչիոնիի, որոնցմէ  
սորվեցաւ գրելու արուեստը, գալով բովան-  
դակութեանը՝ զայն ինք իրմէն հանեց դուրս:

« Իր քերթուածներէն շատերը թարգմա-  
նուած են ֆրանսերէն, անգլիերէն, գերմա-  
ներէն, սպաներէն, և հիմա Յաշտենական  
գրոյցին ամբողջական թարգմանութիւնը կը  
կատարուի հայերէն լեզուով:

« Իր Յաշտենական Զրոյցին հրատարակու-  
թիւնը կատարեալ գրական դէպք մը եղաւ:  
Ուրիշ շատ գործեր՝ ցանուած այլ և այլ Հան-  
դէսներու մէջ, Յաշտենական Զրոյցին առա-  
ջին և երկրորդ տպագրութենէն վերջ, և զորս  
կը մաղթենք ըստ կարելոյն և շուտ հաւա-  
քուած տեսնել, կը պարզեն՝ ըստ կարծեաց  
շատերուն, որոնց կ'ընկերեմ և ես լի հա-  
մողմամբ, որ իր արուեստը վերելքի մէջ է,  
մանաւանդ մտածումի յարաճուն կորովի ու-  
ժեղութեամբ:

« Յաշտենական Զրոյցով զբաղողները  
խիստ շատ են, բայց հոս մէկին դատաստանը  
միայն պիտի բերեմ, Մարրատիին, վասն զի  
Մարրատի կորովի քննադատ ըլլալէն զատ,  
ամենաքաջ ալ բանաստեղծ է: Ահա.

«... Իտալական արդի բանաստեղծուհի-  
ներուն միջեւ՝ առաջնութեան պատիւը ալ  
վիկտորիա Աղանուրի կը պատկանի... Յա-  
շտենական Զրոյցին վրայ շատերը խօսեցան

պարսիկ, անգղիացի. միշտ միայն Արեւելք, Արեւելեան  
բացատրութիւնները չեն բաւեր: Արեւելքի մէջ միայն  
հայը չէ որ կը բնակի:

արդէն և այնպիսի դովեստներով, որ ինծի աւելցնելու նոր բան չի մնար, բայց միայն ստոյգ հանութեամբ մը հաստատել յաշողութեան օրինաւորութիւնը... Գաղափարակաշունթիւն (idealità) մը միշտ վսեմ ու լուրջ, կազմութիւն մը ճշգրտութեամբն ու պարզութեամբը՝ անթերի: Ուստի Վենետիկեցի բանաստեղծուհին արուեստագէտ մըն է շատ բարձր՝ բոլոր մեր արդի ամենէն աւելի նշանաւոր բանաստեղծուհիներէն:

« Աննիէ Վիւանդի աշխոյժ հանճարեղութիւն մ'ունի, բայց ձեւովը՝ շատ խեղճ, և Ատա Նեկրի՝ որ քնարերգական թափ ունի՝ չունի բաւական արուեստ զայն սանձելու և արգիլելու որ ստէպ հակարանաստեղծական երկարաբանութեանց մէջ շղիտորի: Աղանուրի քնարերգականներուն մէջ ուրիշ բնագրոջմ մ'ալ կայ հիանալի և սիրուն, որուն երեւումը փափաքելի է տեսնել կանանց բանաստեղծութիւններուն մէջ. իդայնոսփիանը (femminilità), ինչպէս կ'ըսուի այսօր, և ոչ թէ թեթեւամիտ իդայնութիւնը հէք Լարա կոմսուհւոյն, և ոչ ալ շափաղանց քմայքոտ (capricciosa) իդայնութիւնը Վիւանդիի. այլ իդայնութիւն մը ամօթլեած և խիստ, կրքոտ և ազնիւ, որ կարծես ներքին բոյրն է Վիկտորիայի բանաստեղծութեան, և իրբեւ կնիքը՝ իր քերթողի անձին »:

« Նաեւ Գարաուչչի\* մեծ համարում ունի

\* Իտալիոյ — և ըսենք նաեւ բոլոր արդի աշխարհի — ամենէն մեծ բանաստեղծն է՝ իտալացւոց մէջ իր նմանը գտնելու կամար՝ պէտք է հլլել մինչև Լէոբարտի ու Տանգէ:



Աղանուրի վրայ, այնպէս որ երբ ամուսնացաւ նէ կուխտոյ Բամբիլիի հետ, Քարտուչչին գրեց Վիկտորիայի. « Մտերիմ մաղթանքս լի հոգիէս կը թռչի վրադ, ապագային վրայ: Աւ այսուհետեւ կեանքի կռիւնները կը կռուիս՝ կռթնած ազնուական և հզօր բազուկի մը, որուն արժանի էիր. մրցանակդ՝ Մուսաներուն քովն է: Ave et salve, anima dulcissima. GIOSUÈ CARDUCCI ».

« Օտարներէն՝ որոնք անոր վրայ խօսեցան և որոնք նոյնպէս բազմաթիւ են՝ կաստոն Շուազիի կտորը միայն պիտի բերեմ, *Revue*ին մէջ հրատարակուած, որ է հետեւեալը.

« Օրիորդ Աղանուր դեռ նոր հրատարակեց « Յաւիտենական Չրոյցը: Քերթուածները յաճախ այնպիսի քնարերգութիւն մ'ունին, որուն գաղափարը շունի մարդ: Անոր բանաստեղծութեան մէջ կայ դառնութիւն, բարկութիւն, խեղութիւն: Սակայն բոլոր « յոռետեսութիւնը չի դիմանար հինգ վայրկեան աղուոր արեւի մը, ու այն ամենէն « ոչ ինչ կը մնայ ապրիլի առտուան մը անուշակ քաղցրութեան հանդէպ:

« Ուրեմն, ոչ ինչ Ատա Նեկրիի մը պինդ կարծրութենէն. ոչ ինչ Լէոբարտիի մը « վերջնական անհնարին թախիծէն:

« Բայց եթէ գերազանց քերթողը ան է՝ « որ իր հոգին ամէն հովերու կը յանձնէ, « և որուն սիրտը կը թրթռայ բացէն եկած « ու է դոյզն շունչէ, Օրիորդ Աղանուր բանաստեղծ է վեհագոյն աստիճանի »:

« Վիկտորիա Աղանուրի վրայ իտալական և օտար անթիւ թերթեր խօսած են. ոչ մէ-

կին մէջ սակայն կրցած էի անոր ծննդեան թուականը գտնել\*։ Ուստի փափաքելով տեղեկութիւն մ'առնել այդ մասին, աչք առի բուն իսկ կոմսուհի Վիկտորիայի հարցնելու, և նէ պատասխանեց. « Գիտէք դուք որ Տիկինները կը լսեն կամ կը ստեն միշտ այն թուականը։ Լաւ, ես պիտի ըսեմ Չեզի որ Ամերիկայի թերթ մը՝ հրատարակելով իմ մէկ նկարս, ներքեւը շատ քաղաքավար գովեստներ գրեց, ծննդեանս տարին 1868ին հաստատելով... Կը խոստովանիմ Չեզի՝ որ, թէեւ ոչ ամենաձիշդ (non rigorosamente esatta), այն թուականը ինծի շատ հաճոյ անցաւ, և եթէ դուք ուղէք կրկնել զայն, ոչ ոքի գէշ պիտի ընէք, ինծի՝ հաճոյք։ Եթէ արժան դատէք՝ կրնաք հրատարակել այս իմ պատասխանս, որ պիտի նպաստէ՝ զիս ուրիշ հետազօտութիւններէ ազատելու։ Կը ժպտի՞ք։ Ե՛ս ալ »։

« Եւ արդ, ազնուուհի Տիկնոջ հաճոյք ընելու համար, կ'ընդունիմ Ամերիկայէն եկած տեղեկութիւնը, նոյնը ընելու են նաեւ ընթերցողներս։ Ականջը օղ կենսագիրներուն։

« Այսու հանդերձ, ամենահաւատարիմ լուսանկարը՝ որով զարդարուած է Favilla-ի այս պրակը, պիտի նպաստէ՝ ամէն մեկնութենէ աւելի՝ ցուցնելու որ բնութիւնը շոայլ մայր մը եղած է երեւելի բանաստեղծուհւոյն հանդէպ։ Պայրընի նման, ժառանգեց

\* Յօդուածագիրը ժանօթութեան մէջ 74է աւելի միայն խաւրբէն թերթերու և լրագիրներու անունները կը գնէ. և 17 ալ և ալ լիզումներէ, որոնք զբաղած են Վիկտորիայով։

նէ աղնուականութիւն, հարստութիւն, գեղ, հանճար. ուստի և շէր կարելի հոչակաւոր շղառնար Աս ամենուն վրայ աւելցուցէք անհամեմատ սիրելութիւն մը ու բոլոր հրապոյրները վենետկեան շեշտին, որ զանի համեղ խօսող մը կ'ընեն, և կիսադէմքը պիտի ամբողջանայ »:

\*

Յաշտենական Չրոյցին առաջին տպագրութիւնը քիչ ատենի մէջ սպառեցաւ, և երկրորդ տպագրութիւնը հրատարակուեցաւ. հետեւեալ քանի մը դատաստանները զոր մէջ կը բերեմ՝ կատարուած են երկրորդ տպագրութեան առթիւ:

\*\*

« Տարօրինակ գիրք, շքեղօրէն խօսուն, և սակայն լեցուն մարդկային ճշմարտութիւններով, կնոջական խոստովանութիւններով. թանկագին խոստովանութիւններ՝ զորս շափական արտայայտութիւնը կը թոյլատրէ խրոխտագոյն կերպով փակ հոգիներուն: Եթէ բանաստեղծուհւոյն անունը (արդէն հոչակաւոր դարձած) ճակատին վրայ չըլլար, այլ և այլ էջերու մէջ կարելի էր տարակուսիլ՝ զգացումին ու ձեւին առնական կորովին պատճառաւ՝ որ հրատարակչական խաղ մը ըլլար կամ քօղը կասկածոտ գրական մարդատեցութեան մը: Բայց հետեւեալ էջին մէջ կասկածը պիտի ցնդէր՝ ուշադիր դիտութենէն հոգեբանական ինչ ինչ գծերու,

որոնց քնքուշ շնորհի մասին խարուիլ անկարելի է »:

ՃԻՒՄԻԻՆՈՅ ՖԷՐՐԻ (Giustino Ferri)

« Բանաստեղծութիւն... յաւիտենական »

« Կը կոչուի Չրոյց, և ընդհակառակն՝ բարախուն է կեանքով, կիրքով, իրականութեամբ: Արուեստ մշակողները և բոլոր ճաշակի տէր անձինք հաճոյքով պիտի լսեն երկրորդ տպագրութիւնը Չրոյցին Բումբիլի Վիկտորիա Աղանուրի, որ այսօր իտալիոյ բանաստեղծուհիներուն թագաւորութեան մէջ զաւազանը ձեռքն ունի: Առաջին տպագրութիւնը քիչ ժամանակի մէջ սպառեցաւ, հաղուադիւտ պարագայ, խնդիրը բանաստեղծութեան վրայ ըլլալով, այնպիսի ժամանակ մը որ դրականութեամբ կը պանծայ: Երկրորդ տպագրութիւնը կը փնտռուի անձկանօք: Կ'ուրախակցինք կորովի և ազնիւ բանաստեղծուհւոյն, և աւելի իտալական արուեստին »:

« Առաւօր » (Il Mattino) Նաբոյի

« Լուր մը որ հաճոյք պիտի պատճառէ բանաստեղծութեան բոլոր մշակողներուն և սիրողներուն. Վիկտորիա Աղանուրի Յաշիտենական Չրոյցին երկրորդ տպագրութիւնը հրատարակուեր է: Ճերմակ ածուխով նշանելու պարագայ մըն է, որ ոտանաւորներու հատոր մը՝ քանի մը հազար օրինակներով հրատարակուած, սպառի քանի մը ամիսներու հոլովումին մէջ: Այս ուրախ բաստին արժանացան Վիկտորիայի քերթուածները, որ՝ գրեթէ ակամայ՝ թոյլ տուաւ որ հրա-

տարակուհին, և քանի մը ամիս վերջ իմացաւ, որ ուշ մնացողները՝ իտալացի թէ օտար՝ ի գուր նոր օրինակներ կը խնդրէին:

Իտալական քննադատութիւնը՝ երբ գիրքը լոյս տեսաւ՝ միաձայնօրէն՝ գովեստներու և հիացումներու տարափով վճռեց որ հեղինակուհին իտալիոյ բանաստեղծուհիներուն միջև՝ առաջին տեղը կը գրաւէր...»:

« Կիրակօրեայ Ծափուլ »  
(Fanfulla della Domenica)

« Ով որ կ'ուզէ լսել իր մէջ թրթռումը նըշմարիտ և անկեղծ բանաստեղծի մը հոգւոյն, թող այս հատորը կարդայ. ով որ կ'ուզէ արուեստագիտական բարձր և զուարթ բերկրանք մը զգալ, թող սքանչանայ այս բանաստեղծին արուեստին վրայ: Ես ուրիշ բան չեմ կրնար ընել՝ բայց եթէ գոչել բարձրատ բարձր և ուժգին: Վիկտորիա Աղանուր վսեմական և քաջակորով հոգի մ'է արուեստագէտի և բանաստեղծի...»:

« Կիրակ. Ժողով. լրագիր »  
(Gaz. del Popolo della Dom.)

« Շատերն այս ազնուական տիկինը իտալիոյ առաջին բժնաստեղծուհին կոչեցին. Պրուենամոնդի բանաստեղծուհւոյն անհետանալէն վերջ, պիտի ըսէի մանաւանդ՝ որ լաւագոյններն իսկ իրմէ շատ ետ կը թողու, վասն զի կը միացնէ իր մէջ երկու յատկութիւններ, որոնք քիչ անգամ միասին կը գտնուին. ախորժակներու և գաղափարներու ներքին բանաստեղծութիւնը, ու կազմութեան արտաքին բանաստեղծութիւնը:

Քախալը՝ խտացընելով սաստիկ զգայուն հոգ-  
ւոյ մը մէջ՝ ինչպէս է Աղանուրինը, սէր,  
կիրք, վիշտ, ուրախութիւն, երեւակայու-  
թեան յանգուզն սլացքներ, գաղափարներ  
ու կորով, ցայտեցուցած է անկէ՝ կայծի մը  
պէս՝ անկեղծ ստանաւորը, որ միշտ բանաս-  
տեղծութիւն է, վասն զի իրականութիւնն է  
կեանքին՝ որ կը յայանուի կնոջական քաղցր  
ու կորովի անձնաւորութեան մը մէջէն»:

«Նոր խօսք» (Nuova parola)

«Վիկտորիա Աղանուրի Յաշտննական  
Չրոյցը կը շարունակէ իր յաղթական պտոյտը  
թերակղզիին լրագիրներուն և հանդէսներուն  
մէջ: Կապուանայի, Քէքքիի, Զիամբուլիի և  
ուրիշներու դրուատիքներէն վերջ, ահա եր-  
կայն խանդավառ յօդուած մը Նոր Ծրադիա-  
քաղ (Nuova Antologia) Հանդէսին մէջ:  
Հենրիկոս Գաստէլնուովոյին է, որ կը վեր-  
ջանայ սա խօսքերով. «Ուրիշներ (և իրենց  
համար հպարտութեան բուն պատճառ եղաւ.)  
արուեստին կեղծիքներուն մէջ փնտռած են  
կեանքի տաժանելի իրականութեանց սիո-  
փանք մը, եղկելիներ, մերժուածներ, հե-  
տեւած են իրենց գաղափարականին տատաս-  
կալից ճամբէ մը: Վիկտորիա, պաշարուած  
ամէն դիւրութիւններով, հովանաւորուած  
ամէն շնորհներով, ուրիշ նոյնչափ երկիւղալի  
հակառակ թշնամիներ ունէր իր դէմ. պէտք  
է դիմադրէր մոլորութիւններուն աշխարհի՝  
որ քիչ առանձնաշնորհեալներու կը նուիրէ  
առատութեամբ իր պարգեւները, անոնցմէ  
ուրիշ բան չիսնդրելով՝ բայց միայն անխոր-  
հուրդ հաւանութիւն մը. պէտք է զգոյշ:

արթուն կենար մեծաշուք սրահներու շքն-  
թանքներուն հանդէպ, որոնք զինքը փառքե-  
րու բարձունքը պիտի հանէին, եթէ հաւա-  
նէր անոնց հանդէսները պճնազարդել, ըլլալ՝  
թերեւս՝ անոնց Յուշատետրերուն և հովա-  
հարներուն հանելի Մուսան: Կուսեցաւ նէ  
և յաղթեց: Պահեց ամբողջ՝ ամբիժ իր ան-  
կախութիւնը, և փախչելով հրճուողներու  
մրրկալից շառաչներէն, որոնք շնն թողուր  
սրտին և ոչ իսկ իր բարախումներն զգալ,  
նախամեծար համարեց կարկառել իր ականջն  
իրեններուն, որոնք կը լսուին լուսթեան մէջ,  
ու բիրերը սրել դէպ ի ուրունները՝ որոնք  
առանձնութեանց մէջ կը տեսնուին»:

«Մարցոպո» (MARZOCO)

«Հենրիկոս Նենչիոնի այս վճիռը տուաւ  
Վիկտորիա Աղանուրի մասին. «Վենետ-  
«կուհի այս բանաստեղծուհւոյն ոտանաւոր-  
«ները նշանաւոր են կիրքով ու կորովով:  
«Ունի առնական հանճար և կնոջական սիրտ  
«իր պատմական երգերէն ինչ ինչ տուներ՝  
«եզական ուժգնութիւն մը ունին. մինչդեռ  
«իր քնարերգականներէն ոմանց՝ մէջ նոթը  
«այնքան սուր կը թրթռայ, որ անմիջապէս  
«կի՛նը կը ճանչնանք հոն»:

Եւ ինչպիսի՛ կին, — կ'ըսէ իր մէկ յօդուա-  
ծին մէջ Անճէլոյ Օրվիէդոյ. — Կի՛ն մը՝ կա-  
րող անհատական սէրէն վեր բարձրանալու,  
տիեզերական այն մեծ սիրոյն որ տրոփել  
տուաւ Շէլլէյի սրտին, երկրի ու երկնքի բո-  
լոր էակներուն համար»:

«Լ'Աթենո» — Փլորենտա  
(L'Ateneo)

« Ոտանաւորներու այս նշանաւոր հատարին հեղինակը կին մըն է, որ իր սեռին պատկանաւոր գրական յատկութիւններէն զատ, ունի նաեւ մասնաւորապէս արական սեռի սեփականութիւն համարուած պարզելները. զօրութիւնն ու կորովը: Կը հիանայ մարդերը կնոջական ներշնչմամբ գրուած շնորհի ու քնքշանքի գոհարներու քով կը հանդիպի կտորներու՝ որոնք բոլորովին առնացի շունչ մը ունին: Տիկին Վիկտորիա Աղանուր բանաստեղծական բարձրագոյն կարգի խառնուածք մը ունի: Քնարին ամէն լարերն ալ միեւնոյն յաջողութեամբ կը թրթռացնէ: Եւ ինչ նիւթի վրայ ալ գրէ, ըլլայ պատմական, ըլլայ նկարագրական, կամ իր ուրախութիւններն ու ցաւերը երգէ, կը դանէ մարդ այն անկեղծ յուզումը, հոգւոյ այն սլացքը, ըզգացումի հոծութիւնը՝ առանց որոնց չկայ բանաստեղծութիւն՝ իրաւցնէ արժանի այս անուան ։»

ՄՕՐԻՍ ՄԻԻՐԷ (Maurice Muret)

« Վիկտորիա Աղանուր իտալիոյ կը վերաբերի, ինչպէս կը վերաբերի Ուկոյ Ֆոսգոլոյ: Գուտար աղնուական հայու մը և իտալուհի մօր մը, յոյն հոգւով Վենետիկ ծնաւ: Լճակին սիւքերը, մեր լեզուն, որ անոր համար մայրենի լեզու եղաւ, Մանէլլայի հրահանգները, ընկերութիւնը որուն մէջ ապրեցաւ, զանիկա իտալացի աղնուուհի բանաստեղծ մը ըրին. մանաւանդ թէ՛ ինքնատապութեանը համար՝ առաջինը մեր ապրող բանաստեղծուհիներէն... »

« Վիկտորիա Աղանուրի ոտանաւորները



կարծես թեւի բախիւններ են. մերթ՝ կոչիրրիի, որ՝ մեղուօրէն՝ հետ կը թռչի, հետ ծաղիկներէն մեղր կը քաղէ. մերթ՝ գողտրիկ աղաւնեակի որ իր վարուժանէն բաժնուած կը վերադառնայ՝ թեւարեկ՝ ամայի բոյնին մէջ միայնակ հեծելու. մերթ վարազաթեւ արծիւի՝ որ յետ նայելու վեր, դէպ ի արեւը՝ որ տաքցուցած է իր գեղեցիկ հանճարը, գերապանծ թռիչքով մը կը ճախրէ դէպ ի կապոյտն անսահման: Իր քերթուածներուն մէջ կը զգայ մարդ կարծես շունչը մերթ փայփայող զեփուռին ապրիլեան օդով, մերթ խորհրդաւոր հառաչքը աշնանային հովին՝ տերեւաթափին. մերթ հիւսիսակին փոթորկոտ սոյլը՝ մարդասպան ձմրան մը ահռելի հոգեգէշներուն մէջէ: Իր այս երգերէն ամէն մին կը թուի ձայն մը, յաճախ աղաղակ մը բնութեան. կարելի է ըսել որ բնութեան ամէն գոյն և ամէն ձայն թափանցած ըլլայ այս հիանալի բանաստեղծուհւոյն հոգիին մէջ՝ տալու համար անոր իր լեզուն: Ինչ որ իր կեանքին մէջ զգեսցած է բանաստեղծուհին, կը պարզուի այնպիսի խօսքերով, որոնք ամէնքը խորապէս յուզուած բնութեան մը խորհրդաւոր ցնցումներէն բղխուած ըլլալ կը թուին:

« Եւ արդ որ փառքի լուսաւոր լերան գագաթը բարձրացած է, մեր բանաստեղծուհւոյն այս ճաճանչուն հոգին կը նշողէ հոն վճիտ լուսով մը, իբրեւ վառվառուն աստղը մեր մտաւորական Ուիմբոսին, որուն՝ վեր մինչեւ կատարը հասնիլը իրաւցընէ շատ քիչերու տրուած է: Նէ շատ բան կը պարտի՝ իր շնաշխարհիկ հանճարէն դուրս՝ նաեւ իր

արուեստին անկեղծութեանը, սքանչելի բարեխառն համաշնչութեանը որ կայ իր ներքին մտածմանն ու արտաքին անխառն ու թափանցիկ ձեւին միջեւ, որով զարդարած է զայն, ուշ դնելով ինքն ալ միշտ՝ նման Տանդէի, բանաստեղծութեան մէջ վարպետներու վարպետին, երգել և նշանել՝ ինչպես ներսը կը զգայ:

ԱՆՃԷԼՈՅ ՏԷ ԿՈՒՊԵՌՆԱԴԻՍ  
(Angelo de Gubernatis)

\*

Ընթերցողը ծանօթանալով Աղանուրի և իր քերթուածներու մասին այսքան տեսութեանց և դատաստաններու՝ կատարուած խալիական վարպետներէ և լրագիրներէ, գուցէ փափաքի քանի մը խօսք ալ մեր լրագիրներէն լսել<sup>\*</sup>: Գոհացընելով այդ փափա-

\* Հ. Ղ. Ալիշան իր Հայ-վ հնեա դարին Յոսանջա-րանին մէջ՝ ծանօթութեան ձեւով (էջ Ժ) վիկտորիա Աղանուրի մասին նկատեալ դատաստանը կ'ընէ. «Կենդանի Հայ-վ հնեա նեղինակ մի է նա, բանաստեղծ՝ ոչ միայն ներքազաց այլ և խորագրած, և քերգող, այսինքն նմուտ խալիական լեզուի տաղաշափութեան, որով դրած է և դրէ. և ի նորումս, զարմանալի վիկտորիա տաղ մի նրատարակեց խալիոյ նշանաւոր La Rassegna Nazionale բանասիրական օրագրին մէջ, Լուսարիս կոչմամբ. զոր՝ զիշերոյ սիրական նկատէ. բայց չկան (թերևս յամանց կարծեցեալ) սիրարանութիւնք, այլ բնութեան և մարդկային կենաց վերացեալ դազափառք՝ զուզուորութեամբ զիշերոյ և լուսութեան զգացման, Արգարիւ բարձր և ոչ գիւրսնաս իմաստ մ'է, որպէս և շարագրութիւնն. որով իր բնական շափէն և վիճակէն այլ վեր կ'երևի նեղինակն. որ է ազնուական և շափա-

քը, պիտի խնդրէինք մենք ալ մեր կարգին, որ անմեղադիր ընէր զմեզ՝ եթէ (առանց ինչ յապաւելու՝ ստիպումովն անողոք հարկի մը) համարձակինք դնել հոս այդ գրուածները, կատարուած Գեղոսնիի մէջ հրատարակուած մեր Թարգմանութեանց առթիւ: Կը գրէ Իրատունը թերթը, (Վառնա 1904. Դեկտ. 11, թ. 95):

«... Բայց ըստ մեզ (Գեղոսնիի) այս Թարգմանական փորձերուն ամենէն շահեկանը Հ. Ա. Ղազիկեանինն է որ այս վերջերս իր վրայ առած է իտալահայ Վիկտորիա Ագանուրի քերթուածները հայացնել: Հոս նըրբազգաց և կոկիկցած գրչի տէր բանահիւս մըն է որ մէկ ուրիշ այլապէս ինքնատիպ և բարձր բանահիւսի մը սրտին յոյսերուն և մտքին խոյանքներուն Թարգմանը կ'ուզէ ըլլալ հայ լեզուի մէջ:

«Եւ ես վստահ եմ թէ բնագիրը այս արձագանգումին մէջ քիչ բան տուած է: Կան հոս ու հոն մթութիւններ և անհարթութիւններ ինչպէն նաեւ կէս լուծուած դժուարութիւններու ակն յայտնի հետքերը<sup>2</sup>: Չարաչար գործածուած է մէկ տողի մէջ սկսուած նախադասութիւն մը անակնկալ կերպով ընդհատելով միւս տողին մէջ

---

Կա օրիորդ մի, մեր հանրածանօթ Կայազգի Սամուէլ Մուրատայ՝ գասեր և փեսային թոռն (գուտար Եգուարգայ) Վիկտորիա Ագանուր, Vittoria Aganoor, Ասուրիսի գրութեանցն Կամար պատուեցաւ նա այս տարի, Վենետիկոյ Իռչակեալ գիտնական Արենակոն ժողովոյ (Ateneo Veneto) ընկեր ընդունուելու»:

<sup>2</sup> Կը փոփոքէի որ նշանակուած ըլլային այդ տեղերը:

շարունակելու ազատութիւնն որ քչին մէջ  
համ՝ բայց իր յանախադիպութեամբ միայն  
ձանձրոյթ կու տայ\*։ Քերթուածէ քեր-  
թուած թարգմանական աւիւնի անհաւասար-  
ութիւն մըն ալ նկատելի է\*\*։ Եւ սակայն  
ինձ անուրանալի կը թուի թէ Հիւրմիւզները  
և Բաղրատունիները՝ — չքսենք Աւիշանը —  
իրենց վերարկուն և իրենց անստղիւտ շք-  
նորհքէն խոշորկէկ պատառ մը ժառանգ են  
թողած իրենց այս ժրջան և զգալիօրէն  
աճող սանին։ Բաւական սահուն է «Սել-  
լայի Հովերը» (կարդա՛ չոյխար), սիրուն է  
«Խօսակցութիւն»ը որուն վերջին երեք տո-  
ղերը դժբաղդարար չեն յաջողած\*\*\*։ Շատ  
լաւ է «Եսաւ»ը, «Ողջոյնը», «Վերադար-  
ձը», և ո՞ր մէկը համբե՛նք։

ՕՐԻԹՆ

\* Նոյնպէս նա կը փափաքէի որ գրուած բլլային  
զոնէ էջերը։

\*\* Աս կրնայ հիշդ բլլալ. ասոր զազանքը զուցէ  
կարելի բլլայ բնագրին մէջ փնտսել։

\*\*\* Հոս ուրախ եմ որ նշանակուած է տեղը, և  
ասով ընթերցողը պիտի կրնայ զազափար մը ասնել նաև.  
բնագրին լեզուին ու սէին։ Ամբողջ տան բնագիրն ու  
թարգմանութիւնը կը դնեմ։

Noi ridiamo anche, ridiamo  
forte, e la gioia  
brilla negli occhi al baleno  
vivo d'un motto  
fine. *In che abisso del core*  
*Chi dunque intanto*  
*Scoppia in un pianto diretto?*

Կը ժիժաղինք մենք նաև,  
Կը քեքքըլանք, ու սրամիտ  
Խօսքի մ'ալխոյժ փայլակով

Ուրիշ քանի մը տողեր եւս Շիրակի յար-  
դելի խմբագրութիւնը նուիրեց իր « Հանդէս  
Հանդէսներու » բաժնին մէջ (1905, Թ. 2.  
էջ 150), և են հետեւեալները:

« Գեղումիի այս համարին գլխաւոր հրա-  
պոյրը կը կազմեն, գրասէրներու և գեղար-  
ուեստասէրներու աչքին, Վիկտորիա Աղա-  
նուր իտալահայ քերթողուհւոյն քերթուածոց  
հայացումը՝ Հ. Արսէն Ղազիկեանէ: Քանի

Այսերնուս մէջ կը ցույց  
իտնդն: Ո՞վ ուրեմը սըրտին  
ի՞նչ սնդուսդին մէջ արդեօք  
Հեղեղորեն կ'արտասուէ:

Անուասիկ ընազիրն ու թարգմանութիւնը, ուր կը  
նտարեմ տնայնոց համարուած տողերը. թէև ինծի կը  
թուի որ հայերէնը ճիշդ հայելին է իտալերէնին, լու-  
սանկարուածը: Բանաստեղծուհին մէկ նախազասութեան  
մէջ երկու նարցում կ'ընէ. որ՝ եթէ ամբողջ ստանա-  
ւորը մտադրութեամբ կարգացուի՝ քիչ մը կը պարզուի:  
կարելի է նոյն ընազիրը աւելի լաւ թարգմանուի. ևս  
չյաջողեցայ լաւագոյնը ընել: — Այսպիսի և ասիկ աւելի  
մթին տողեր կան Վիկտորիայի ստանաւորներուն մէջ,  
լեզուն ալ՝ շատ գիւրիմեհերէն չէ, ի բաց առեալ պատ-  
մական քերթուածները: Դարձեալ եթէ անգիպէինք  
այնպիսի տողերու՝ որ մեզի տնւածանելի ըլլային, ընա-  
կան է պիտի գիտէինք բուն գրողին, — Վենեսական Բե-  
րուսիա ժամերու խնդիր է —, ինչպէս և գրեցինք ինչ  
ինչ կէտերու մասին. և կ'ըսեմ իսկ՝ իբր արացոյց ընա-  
զրին խրթին լեզուին ու գծուարանականայի մտքին՝ որ  
երկու տեղեր նոյն իսկ բանիմաց իտալացիներու ան-  
հասկանալի ձեացին, և սախալուցայ գրել կեղիկակին: —  
Բայց ևս նրապարակու կը յայտնեմ շնորհակալութիւնս  
թէ « իրաւունք յի և թէ՛ յարգելի « Օրիօն » ի՛ ազնուու-  
թեամբ ինծի ցոյց տուած իրենց զնահատումին համար:

մը տարիէ ի վեր կ'իմանայինք Սղանուրի նորածին համբաւը, զոր կրնանք ասկէ ետքը, համոզուած, փառքը անուանել: Կը հասկըցուի անշուշտ թէ յարարերական արժէք մը պիտի չբաւէր մեզ խանդավառելու համար: Լեւնեապոլիսի գեղեցկութիւնը ոչ իտալական բանաստեղծութեան մէջ միայն և ոչ, մեծագոյն պատճառաւ, հայկականին մէջ՝ (եթէ հայերէն հեղինակուած ըլլար) կը սահմանափակուի. տիեզերական բանաստեղծութիւնն է որ նոր երկով մը ճոխացած է — այսինքն զգացումի նոր երանգով մը վրձինի նոր *toucher*ով մը արտայայտուած: Դժբաղդարար այս սիւնակները շեն ներեր քաղուած քներով բաժնել տալու մեր հիացումը «Շիրակ»ի ընթերցողներուն. կը դռնանանք առ այժմ ըսելով թէ, կին բանաստեղծներու քով հազուադէպ խորութիւն մը ու երբեմն կորով մը՝ բնութեան զգացումին հետ, կը միանան հոն վեհանոյշ արտմութենէ մը ծնած փափկութեան ու ազնուականութեան:

«Թարգմանութիւնը, զոր կատարած է Հայր Ղազիկեան, գործ մըն է՝ արժանի հեղինակին: Սեղմ ու առոյգ տողերով, բնագրին հաւատարիմ մնալու յայտնի ճիգին վըրայ աւելցուած արուեստին մտահոգութիւնը՝ ստանաւորի թարգմանութեան կատարեալ օրինակ մը պիտի ըլլար ան, եթէ միայն, յօդերը անխնայ վանուած չըլլային, չգիտցուիր ի՞նչու\*, ու բառադարձութեան\*\* ազա-

\* Ես ալ չեմ գիտեր թէ որո՞նք են այդ վանուած յօդերը:

\*\* Բառադարձութեան մասին կարելի էր ընդարձակ

տութիւնը մերթ հոն շարաշար կիրարկուած  
չըլար: Իր աշխարհարարը, բարեբաղդա-

խօսիլ, բայց արգէն Յոսարարան չափազանց երկարե-  
ցաւ. ուստի գիտել պիտի տամ միայն որ ինչ նարուած  
կանոն մը չէ այն. և եթէ զործածեցի քանի մը տեղ  
Ազանուրի այս քերթուածներուն մէջ ինծի աւելի լաւ  
թուեցաւ այսպէս բառազարմել, քան անհարթ սողեր  
գուրս կանել. քանի որ Նախնիք որինակ ունէի: Ենթ-  
կալին՝ որ մեր նախնեաց մէջ ամենէն կոկիկ ու ճաշա-  
կաւոր սողաշափն է, նեաեւեալ ձեւերը կը զործածէ  
Արարչութիւն մէջ.

Ամոռք անեղ սաստուածութեան՝  
Համազոյ երբորգութեան.  
Հողիք կրեղէնք և սղասաւոր՝  
Հրեշտակաց գիծուորութիւնք.

Աստուած անեղէն

Ժողովեալքս ի կրամարու՝  
Ծառայի քո յաշխարհէ.  
Այլ պաղատիւք առ Հողեղէն՝  
Մէք արկարքս և կողեղէնքս.

(Նոյն՝ Բանք յափաւ էջ 267), ևն:

Ինչպէս կը տեսնուի, ստանաւորը ութսուտան է, և  
ըն վանկը պիտի անցնի յփշորգ տողերուն տառային ան-  
դամը քառասովանկ ընելու. այս ոճով են իմ քանի մը  
կամ բառազարմութիւններս ալ: — Այս ոճով է նաեւ  
նեաեւեալը՝ զոր Բազրատունին կը զործածէ Սաւազ ող-  
բերգութեան մէջ. (Ճայակք Ողբ. էջ 511).

ՄԵԼՔՈՒ

Ո՛վ Յընծու՝

ԳԱՒԻԹ

Ո՛վ կայր...

ՅՈՎՆԱԹԱՆ

Ո՛վ օր յաշող.

ՄԵԼՔՈՒ

Ո՛վ փեսայս.

Հայկական ողբերգական չափով տող մըն է այս խօ-

բար, հետու է ըլլալէ այն տափակ ու անդոյն  
լեզուն, զոր հետզհետէ կը հարկադրեն կոր

սակցութիւնը, որուն երկրորդ անգամը կազմուած է՝  
սասնիկն անգամին (ԴՆ վանկովը, Այս բառազարմէ կա-  
նոնը՝ թողով կին լեզուները՝ խալերէնի մէջ ալ կայ,  
Հեանեալ ցոյտուն օրինակը S'Անունցիոյի «Poema  
Paradisiaco» գրքին՝ «Առ սանտուն» գրած ստանա-  
ւորէն կ'սանեմ (էջ 4)։

e la fronte rugosa che s'inchina,  
ove la semplice anima indovina  
si rivela talor quasi divina-  
mente in un raggio...

Ինչպէս կը տեսնէ ընթերցողը, divinamente (սա-  
տուածօրէն, սաստուածապէս) բարը երկուքի բամբիւր է,  
բառին կէտը յանդ ալ ընկնով. մեր Շնորհալիին զործա-  
ծէն շատ աւելի յանդուզն կերպով։

Ուրիշ քերթնոյ մըն ալ՝ Սեփերինոյ Ֆէրրարի՝ իր  
Քրիստոս ազգասի կերպարանքով ՝ քերթուածին մէջ կը  
զործածէ նոյն ձևը։

Lacero il vidi approssimarsi e lenta-  
mente sedersi al ciglio della porta:  
la mano sul ginocchio bianca e morta  
d'una ferita ritenea l'impronta.

Հոս ալ lentamente (յամբօրէն) բարը նոյնպէս եր-  
կուքի ճեղքուած։ Անտարակոյս այսպիսի յանդուզն ձև-  
ւերու սաւեղ զործածութիւնը ներհիլի լէ՛՝ ստանաւորի մը  
կամ երկուքի մը մէջ. խնդիրը կը փոխուի երբ սաս-  
նաւորներու հաստի մը մէջ դանուին քանի մը կատ։  
Ուրիշ աստիւ տեսանք Հոմերոսի, Հայկի մէջ դանուած  
այս տեսակ և աւելի անսովոր ազատութիւններ, որոնց  
մասին կ'իմէ կարկ ըլլայ՝ կրնայ խոսուիլ դեռ ուրիշ  
տեղ. — Առ այժմ շիրմ շնորհակալութիւններս կը յայտ-  
նեմ Շիրակի մեծարգոյ իմքազրութեան՝ իր բարեացա-  
կամ ազնուութեանն ու զեանաստեղծան տողերուն համար.  
որոնք խրախոյս պիտի ըլլան մեզի՝ աւելի խնամով և  
աւելի կարեւոր այս կարգի զործերու ձեռնարկելու ազա-  
րակին։




կարծես մեզի, աշխարհաբարի մեր հին քա-  
րենորոգիչներէն» ոմանք ու իրենց սերունդը  
անսպառ՝ յԱրտասահման և ի Թուրքիա»:

Գարձեալ նոյն Շիրակի Յրդ Թիւին մէջ  
(էջ 231) Բագմալեպի մէջ հրատարակուած  
ստանաւորներուն առթիւ գրուած է.

«Հոյակապ են Վիկտորիա Աղանուրի քեր-  
թուածները, և գերազանց, կատարեալ՝ Հ.  
Ա. Ղազիկեանի Թարգմանութիւնները, զորս  
կը զգանք բնագրին հաւասար, համարժէք,  
քանի որ մեզի տպաւորութիւնը կու տան  
հայերէն զգացուած, հայերէն գրուած ըլլա-  
լու, առանց օտարախորթ շեշտի և Թարգ-  
մանածոյ հանդամանքի»:

---



# ԱՌ ՅՈՎՍԷՓԻՆԷ ԲԱԶԻՆԻ ԱՂԱՆՈՒՐ

Մ Ա Յ Ր Ի Մ

## Սիրելի Մայր,

Բոլոր իմ հին ու պնդագրուի դժկամակու-  
րիւններու յաղթեցիր շորս բասով. « Ինձի  
համար հրատարակէ զայն »: — Ահա ուրեւն  
քնարերգակոններու հատորը: Ո՛վ որ իմա-  
ցած է իմ կամշտ մերժումներս վարպետներու  
և բարեկամներու դրդումներուն, և հրատարա-  
կիչներու քաղաքավար հրահրներուն հանդէպ,  
պիտի ըսէ արդ ժողովածու ժպիտով մը: —  
« Ահա ուրեմն վերջապէս, առասպելական լե-  
րան երեւելի մուկը »: — Բայց ես մտքովս  
հատորս ձեռքերուդ մէջ կը տեսնեմ, հոգիս ձեռ-  
քերուդ մէջ — կը տեսնեմ որ կը ժպտիս...  
և կը բռնէ ինձի . . . . .  
. . . . .

Վենետիկ, '99

Մայր, այս ընծայականը կը սահմանեի  
քեզի, երբ վշտի գիշերը դեռ չէր իջած հոգոյս  
վրայ... Չտեսար դուք ընծայականը, չտեսար

դռան հաստորը... Բայց անդ միայն քոս նոր  
 կեանքիդ մէջ, միայն անդ քոս հոգեկան հզօր  
 տեսիլքովդ կրցար կարգաւ ամբողջ գիրքը՝ իր  
 նսեւն խորքին մէջ, տեսնել տարտաւ մտա-  
 ծռամները, բազմակերպ երեւակայութիւնները,  
 կրքերը՝ որոնցմէ դուրս ելաւ տող աս տող,  
 յամր ու քաղժոտ, անոնց ստոռերն հետք տա-  
 նելով. հիմա միայն որ շաւ եւս կը ձանչնաս  
 զիս ու շաւ եւս կը սիրես, ամփոյր ուրիշնե-  
 րոս գովասանքին կամ սպարաստին, բազոսկնե-  
 րովս՝ յիշողութեանս մէջ՝ զքեզ գրկելով, զայն  
 քեզի կը նուիրեն:

ՎԻԿՏՈՐԻԱՆ

Վենետիկ, սպրիլ 1900



# Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

## Ե Ր Բ Ե Վ

**Է**ՌՈՒՍՆԱԿԻՆ տակ ձիաւորները հազար,  
կարծես փողէն հաւաքուելու կանչուած,  
կ'երթան սրավար, հառաչակուլ, սանձարձակ,  
Սեւ ձիերուն բաշին վըրայ վայրահակ:

Կոյր, խենթ, աղուոր բլուրներուն վրայ չեն  
[տեսներ

ինքնանըւէր անկախ կուզերն որթերուն,  
Եւ ոչ հիւղերն ուր հանգըստի հրաւէրներ  
կը պըլպըլան՝ անփը մրափող լիճերուն:

Ո՛չ, ո՛չ: Միայն, լուսանըշոյլ, թեւաւոր,  
Ջարհուրելի գեղեցկութեամբ գեղեցիկ,  
Իշխանական, քընքըտ ձայնով կը կանչէ  
Երազն այնքան տարիներէ երազուած:


Հոն վա՛րն, հեռո՛ն յամառօրէն կը կանչէ,  
Եւ մըրըկայոյզ հըրոսն հեռո՛ն կը թըռչի  
Դիւրահաւան, ուր անգութ խօսք մը պիտի  
Մարէ կըրակը բոցավառ իղձերուն:

Կեցած է խօսքն ահռելի՝ խորքն անդունդին՝  
 Որ կը քաշէ անյագօրէն, կը կըլլէ  
 Ու գիշերին թովչութեանց դէմ խրոխտելով  
 Անդրաշխարհեան ըստուերներու կը վազէ:

Բայց ի՞նչ կ'արժէ. ի՞նչ փոյթ: — Երազը կ'սըտէ:  
 Ընդունանչն է ամէն ինչ: — Ի՞նչ փոյթ: Յառաջ,  
 Եզրայրներ, օ՛ն, հս ձեզի հետ եմ, ու ձիս  
 կը մըտրակեմ, կը մըտրակեմ յուսահատ:



ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ ԶՐՈՅՑ







Ա

## Ս Ի Ր Ո Յ Ե Ր Գ Ը

Կըրնայ՝ ուրեմըն խօսք մը, խօսք մը թոթով՝  
Ջոր դողդոջուն շըրթունքը ցած կը մընչէ,  
Աւելի քան քերթուած մ'արժեւ, խոստանալ  
Աւելի քան խոստում մը լաւ ու է։  
Կըրնայ՝ նըկուն ճակատ մը՝ ցած այն ձայնէն  
Բարձրանալ, ջինջ նըշողել՝ իբր թէ գայն  
Պատէր պըսակ մ', ու կըրնայ տալ ցընծութիւն  
Մ'անքան վըսեմ՝ որմէ զըրեթէ հոգին  
Ճընշուած մընար...։ Ես կը կարծեմ թէ այսօր  
Սըրտերէն պէտք է կորզուին դառնութեան  
Յիշատակներն ամէն, այլ եւըս կուշտ է  
Ճակատագիրը մարդկային արցունքով...  
Եւ իրաւ այսպէս է. երբեք չունեցաւ  
Երկիր այսչափ ծաղիկ, երկինքը չեղաւ  
Ո՛չ կապուտակ այսպէս, ո՛չ ալ այսպէս մօտ։

## Տ Ա Ր Ա Կ Ո Յ Ս Ի Ե Ր Գ Ը

Գիշերային զմայլման մէջ լուռ է երկինք.  
 Ինչպէս թէ խոր մոռացման  
 Մը դիւթական անծայր քողին մէջ ծրարուած՝  
 Աշխարհը խոր քուն կ'ըլլայ:

— Կը բերնօ, սիւ լուսնակ, սըրտին՝ որ անոնց  
 Կը սպասէ՝ քաղցըր լուրերն:  
 Իս կը սիրէ՝ — կ'ըսէ. — Ո՛ւշ է, կը շտապեմ.  
 Զայն աստղերուն հարցուր դուն: —

Աստղերէն մին կարծես ինծի կը նայի  
 Գըթած այքով ... — Ո՛հ, ըսէք,  
 Զիս կը սիրէ՞ դեռ. — և անոնք. — Ո՛ւշ իսկ է,  
 Արշալոյսին հարցուր զայն: —

Ահա՛ արխուր՝ կ'ելլէ ծովէն արշալոյս  
 Մինչև ոտքերն ըսքողուած:  
 — Կը սիրէ՞ զիս: — Եւ ան կ'ըսէ. — Զեմ գի-  
 [տեր,  
 Զայն ամպերուն հարցուր դուն: —

Եւ ամպերուն աղջամուղջին յարաճուն  
 Կը հընչէ ձայնըս ահա ...  
 Կ'ըսեն ինծի արցունքնիրով յորդահոս.  
 — Հէք սիրտ ... ներէ՛: —

9

## ԱՏԵԼՈՒԹԵԱՆ ԵՐԳԸ

Ե՛ն՛վ կը փախչի իրիկուան ցուրտ բալերո՛ւն  
 Մէջ օրիորդ մը դալկահար աշտերով .  
 Չունի արցունք ա՛լ շըլմորած աչքերո՛ւն  
 Մէջ՝ այլ մահուան ահեղ և մեծ որոշումն :

Անդին զըւարթ բարեկամաց մէջ դիւրին  
 Յաղթանակներ և տարփանքներ սին կ'որսան  
 Մոռացկոտ սիրտ մը ցուրտ . անդին կը հընչեն  
 Գովեստներո՞վն անոր խուցեր բազմամբոխ :

Անդունդներէն՝ յանկարծ՝ կ'ելլէ դեւ մը դուրս  
 Եւ գիշերուան մէջէն կ'անցնի՝ բարձրագոյ .  
 — Յուսահատի մը պէս լայի՛ր դռն իցիւ  
 Այն գո՛ւր սիրող օրիորդիկը մեռած : —

## Օ Ր Ի Ո Ր Դ Ի Կ

Ապրիլ էր երբ ըզքեզ ճանչցայ  
 Այն մատնիչ ամսըւան մէջ,  
 Որ նորածիլ սիրոյ արբշիւ գինովութեամբ  
 Ամէն բան քընքուչ գոյնով կը նըկարէ...  
 Ապրիլ էր երբ ըզքեզ ճանչցայ :

Ու քեզ տեսայ ցանկէն անդին,  
 Կը դառնայիր փոշեթաթախ  
 Որսէն. մինակ էիր, էիր լուռ մըտախոհ...  
 Երկշուտ բարեւ մ'ինձ դարձուցիր...  
 Ըզքեզ տեսայ ցանկէն անդին:

Որսէն կը դառնայիր. գլխարկիդ վրայ՝  
 Լայն, թըխորակ՝ գարգմանակ  
 Մը թաւարծի. թաւիչ ճաքէդն,  
 Հրացանն ուսիդ ու... Ինձ աղուոր երեւացիր  
 Գլխարկին լայն եզերքին տակ:

Կը դառնայի անտառակէն, ուր արջատակ  
 Էի գացեր ետ քաղելու.  
 Իրար գրկած ճիւղերուն մէջ ճամբուս՝ քեզի  
 Երեւայի պիտի վըհուկ մ'անտառային,  
 Պըսակուած այն թարմ ու աղուոր արջատակով...

Եւ էր, աղէկ կը յիշեմ, էր արեւամուտ...  
 Ու մարգերէն վեր կը բուրէր  
 Մանգաղուած ծոթրիններու շնչը առողջ,  
 Անուշակ հոտն՝ որ կը յաղթէ ամէն հոտի.  
 Եւ էր, աղէկ կը յիշեմ, էր արեւամուտ...

Բայց այն քաղցրիկ գարունն անցաւ.  
 Միայն ձըմնոն ըզքեզ տեսայ  
 Փոքրիկ սրահի մը մէջ, և, սհ, էիր դուն շատ  
 Տարբեր՝ զգեստին մէջ իրիկուան,  
 Լայն շապկեզրով ու թոյրաթուխ քու փողկա...  
 [պով...]

Մըտածեցի ես այն օրերն անփոյթ, անհոգ  
 Եւ այն պարերը գեղջկական,  
 Այն երազներն... այն ըղձանքներն ու այն յոյ-  
 [սերը

Սիրահար դեռափըթիթ զոյգ սրտերու,  
 Ու մտածեցի ես այն օրերն անփոյթ, անհոգ...

Ո՛վ զով ապրիլ, ո՛վ առողջ հոտ ծոթրիններու...  
 Ամբոխին մէջ ռամիկ կատակ մը լըսեցի  
 Դենէ, տեսայ, անարգ միմոս, որ շարժուձեւըդ  
 Մաղդական՝ նախ քու ծիծաղըդ կը շարժէր ...  
 Ո՛վ զով ապրիլ, ո՛վ առողջ հոտ ծոթրիններու:

Նոր խեղկատակ խօսքեր մըտքիդ մէջ դարբնելով  
 Զըզարձուցիր դուն ինծի ուշ...  
 Ես զոփացի՛ իրբը մեռել մը տեսնէի  
 Սիրուն մեռել մը՝ բայց սիրուած անօգուտ տեղ  
 Այն անտարբեր ու ծիծաղուն ամբոխին մէջ:

Սեւ քօ՛ղ մըն էր ինկան սըրտիս վըրայ  
 Սարսափն յանկարծակի:  
 Եւ ով որ ինձ ըզքեզ հարցուց այն վայրկենին  
 Յանդըզնեցայ պատասխանել թէ - Չեմ, ձանձ-  
 [նար:

Սեւ քօ՛ղ մըն էր ինկաւ սըրտիս վըրայ:

## Վ Ե Ր Զ Ա Պ Է Ս

Ուրեմըն վանդն... անտառն անուշ արեւով  
կը հըրճուի...: Շան բաներ ունիմ ըսելիք,  
Շան բաներ: Քեզ պիտի տանիմ բարձրաբերձ  
Մառերուն տակ, հեարս, միմակ հետս: Եկուր:

Գուցէ թէ... — ո՞վ գիտէ — մէկէն պիտի ես  
Զըկարենամ խօսիլ...: Գուցէ վերջապէս  
Հեարդ մինակ, պիտի փընտոսեմ խօսք մ'ի գուր...:  
Շան լաւ. մըտիկ պիտի ընենք այն ատեն:

Պիտ' ունկընդրենք մենք խարշափուն ճիւղերուն  
Սուր սօսաւիւնն՝ ըզզըլխանքին սոսկումով...  
Ոչ մի ակնարկ, ոչ մի զըզուանք սիրային,  
Տըժգոյն դէմքով դալկահար զերդ հոգեմարք:

?

Հըպարտութիւնն ինչ որ սըրտին թելադրեր  
Էր սպասումի օրերուն մէջը երկայն,  
Մոռացումի օրերուն մէջը երկայն,  
Ատելութեան ժամերուն մէջը (այո՛ւ  
Ատելութեան), այսօր մոռցեր եմ ըլլոր:  
Եւ յոյսերով խաբեպատիր և ցաւով,  
Անհուն գանձին համար որ ինձ արժեցիր  
Եթէ քեզ օր մը գորովով սիրեցիր,  
Քեզ կը պաշտեմ արդ տըռփանքով մը վայրագ:

Դու միայն իմ ուրախութիւնս ու տանջանքս,  
 Որ աչքերուդ մէջ խանդակաթ ու տըրտում՝  
 Այնքան ունիս իշխանութիւն թովելու:  
 Դու որ կը զգամ կ'ապրիս ամէն պերճութեան  
 Մէջ, դու միայն, դու միայն այն իմ երբեք  
 Չընըւածուած ոգիս կըրցար ընդունել:

## ՈՂՋՈՅՆ

Արդ վերջապէս կը լըռեն  
 Իրերն ամէն. կը լըռէ  
 Երկիր...: Դըշխոյ, գերուհի  
 Ինչ կ'ուզես զիս համարէ,  
 Ա՛յս է վայրկեանը, ասոր  
 Աշխարհ ամէն կը սպասէր:

Հարիւր դար է կը սպասէր,  
 Ու կը հարցնէր պմէն ոք.  
 Ինչ կը սպասէ, և ինչո՞ւ  
 Այս հիացումը յամառ,  
 Ա՛յդքան վառուիլն աստղերով,  
 Ջերդ ջահերով տօնական:

Ահա ժամուն տենդը ջերմ  
 Նոր զարկերով կը ցընցէ  
 Ալաւտունքն ու հովին մէջ  
 Կ'անցնի պատգամն...: Ո՛վ սէր իմ,  
 Միակ իմ սէր, լըսեցի՞ր  
 Ողջոյնը դուն երկընքին:

## Ո՛Վ ՔԱՂՅՐ ԳԻՇԵՐ...

Ո՛վ քաղցրը գիշեր, ո՛վ գիշեր վըճիտ,  
 Նըմանդ ուրիշի մ'անյնքան հեռաւոր...  
 Ո՛վ դուք նայուածքներ երկայն, և ո՛վ դուք  
 կըցկըտուր խօսքեր, սըրտին մէջ զըսպուած  
 Ո՛վ ուրախութիւն...  
 Կը կըրկնէր ինձի. — Մ'իշտ, Մ'իշտ — ու հո,  
 Կ'ըմպէր այն խոստումն: [գին

Ան թոյնը կ'ըմպէր,  
 Կեանքին ու սիրոյն օրհնենք կարգալով...  
 Արդ ան՝ երկընթի ջինջ պարզութեան տակ,  
 Ուրիշ սըրտի մը որ սիրահարուած  
 Տեղի կու տայ, ան՝ կը համարձակի  
 Սուտ խօսքը կըրկնել...  
 Եւ ուրիշ սիրտ մը կը հաւտայ անոր:

## Վ Ե Ր Ա Դ Ա Ր Ձ

Երբ վերադարձաւ սենեակն ամայի,  
 Հարցուցին ստուերներն ամայի բոյնին.  
 — Կը սըտէ՞ր ուրիմըն յոյսը քաղցրիկ.  
 Լըմընցա՞ւ ուրեմն երազն ալ յետին... —  
 Նէ նըստաւ մընաց անշարժ, հեռաւոր  
 Պատկերներու մէջ աչքերը մըխուած.  
 Յետոյ վերջապէս՝ ծածկելով փոքրիկ  
 Չեռքերուն մէջ դէմքն ըսկըսաւ հեծել:



## ԵՐԿՈՒ ՆՈՅԵՄԲԵՐ

Ո՛հ, երազել կարենայի եթէ դեռ...  
 կարենայի ըսել ինձի տակաւին.  
 — Ան կը սիրէ զիս, ան միշտ զիս կը մտածէ.  
 Ան կը նայի այս ջինջ օրերը և զիս  
 կը մտածէ, կը նայի  
 Պարզ գիշերներն այս, ու 'նդ առաջ կու գայ ինձ  
 Սիրատարփիկ իր մտածու՞ն...  
 Այս լուսացայտ կեանքն՝ անոր  
 Գեղեցիկ չի՛ թըլիր թէ ոչ լոկ ինձմով,  
 Եւ լոկ ինձի հետ. բոլոր ինչ կայ ուրիշ՝  
 Յիմարութիւն, յիմարութիւն, ապշութիւն,  
 Եւ բառ մը զինքը չի վառեր, չի սփոփեր  
 Եթէ չըգայ իմ բերնէս...  
 Զըմեռն երկիրքը ծածկելու երբոր գայ  
 Գորշ թեզանով մ'ամպերու,  
 Ու երկրի վրայ տեղան, երկայն անձրեւներն  
 Ու թաղծութիւն, շուրջն անձիս  
 Զոր կը սիրէ ան պիտ' ըլլայ արեգակ,  
 Տաքուկ ալիք մ'արելու.  
 Հրատուր շունչը սըրտակաթ իղձերուն,  
 Փայլակնացայտ բոցն իր քընքուշ խօսքերուն  
 Շուրջն իմ անձիս՝ զոր կը սիրէ անիկա...  
 . . . . .  
 Ահաւասիկ Նոյեմբեր.  
 Գերեզմաննոցք կը բացուին...  
 Ո՛հ, եթէ դեռ կարենայի՛ երազել:

Կու գայ ձըմենն՝ արեւն ըզմեզ կը թողու...

Երագեւ ճէ կարենայի՛ հթէ դեռ:

Կու գայ ձըմենն՝ արեւն ըզմեզ կը թողու...

Դանդաղ անձրեւը կ'իջնէ,

Գերեզմաննոցը կը բացուին.

Կը դողանջէ զանգակ մ'անվերջ ու անծայր...

## ԶՄՈՍԱԾ ԿՈՒԻԲՐԻԻ ՄԸ

Ո՛վ դու փոքրիկ մեռել, քեզ

Աղիտարեր հղաւ շատ՝

Խայտաճամուկ ըզգեստիկը

Զըմրուխտի, յակինթի ...

Ուրախ զըւարթ էիր շատ,

Շատ երջանիկ էիր դուն,

Ու բախտն հթէ աշխարհի

Բերկրանք կու տայ՝ կարճ կու տայ:

Մութ անդունդին վերեւէն

Դէպ ի լեռները լուսեղ

Կը ճախրէիր ապահով.

Կը կարծէիր քուկըդ դուն

Կապուտակ ծովն ու երկինք.

Կը կարծէիր դուն անանց՝

Բերկրանքն ու խինդն այն անհուն,

Ու դուն չէիր գիտեր որ

Մի միայն սուգն է անանց:

Ըսէ ինձ փոքր ըսպանուած,

Ան երջանիկ ատենին՝

Որ Աստուծմէ արբուած էր

Քեզ՝ լայն երկինքն յուզելու  
 Թեւիկներովըդ քու ժիր,  
 Ինչ տեսար, մէ, ըսէ ինձ,  
 Լեռնէն անդին ու անդին,  
 Ծովէն անդին ու անդին ....

Թեւերըդ դեռ, հէջ սիրուն,  
 Բաց կը բռնես. դէպ անոյշ  
 կը թըռչէիր դու սիւքերն,  
 Ազնւական երազի  
 Մ՛ ետեւէն, մարդն, հըզօրն երբ  
 Թըռիչքըդ սուր կը կըտրէր  
 Քեզ մահուչափ խոցելով ....  
 Ո՛հ, մարդը որքան վատ է:

Իմ եղկելի հէջ թըռչնակ,  
 Ժամանակ մ՛ ինձ ալ, գիտես,  
 Եթերն ազատ թըռչարան  
 էր, ունէի ես թեւեր,  
 — Թեւեր յանդուզն ու կարշնեղ —  
 Երիտասարդ երազներս,  
 Բարախումներըս հրաբոց,  
 Անմահական և յոյսերս:

Ես ալ թռիչքով հոլաթեւ  
 Սիրատարփիկ երազի  
 Մ՛, արշալուսի մ՛ ետեւէն՝  
 Ո՞ր կը ժըպտէր ինձ հեռուանց,  
 Զարնըւեցայ, և սըլաքն  
 Ինձ կը նետէր-թըշնամի  
 Մը քուկինէդ շատ հըզօր,  
 Այն որ իշխան է երկինքն

Միտար արեւն աչքիդ մէջ,  
 Անտառային բոյրերուն  
 Զեղումին մէջ, ու շեղաւ  
 Ժամանակ իսկ բաղձալու  
 Ան կորսըւած հըրճուանքներն....  
 Ինձ՝ դըժընդակ տազնապին  
 Համար՝ որ զիս կը լափէ  
 Կը մընայ կեանք մը ամբողջ....

### Ա Պ Ր Ի Լ

Եթէ մօտիկդ ըլլայի  
 Ու քեզ ըսել կարենայի ինչ որ ես .  
 Կը զգամ, ո՛վ բուռն հառաչանքս .  
 Ըսել թէ ա՛լ մի միայն քեզ կը մտածեմ,  
 Թէ ամէն տեղ ա՛լ միայն քեզ կը տեսնեմ .  
 Ըսել քեզի բարախումներն ու վիշտեր...  
 Դուն ալ կարծեմ, ո՛վ իմ տանջանքըս, պիտի  
 Զիս սիրէիր խանդակաթ :

Կու գայ գարունն ու սըրտին  
 Թափն ու աւիւնը կորովի կը դառնայ :  
 Կը զգացուի տենդ մ'որ մըտերիմ Լուսնի տակ  
 Կը խուժէ դուրս մարդերէն  
 Զեռք ձեռքի տուած, և աչքերնին դարձուցած  
 Յաւէժական դէպ ի կամարն երկնից թուխ,  
 Մինչ երեսնիս կը զարնէ օդն Ապրիլի :

Զոփալ սիրոյ սարսուռով...  
 Մընալ լուռ մունջ, այսպէս, առանց նայելու  
 Թ'ուղին որքան երկայն է

Աստուածային այն երազին մէջ՝ մինչդեռ  
 Համարձակ սիւքը նըշխին հետ ծաղկած  
 Կը համբուրուի՝ համբոյրներով քաղցրաբոյր,  
 Գըզուանքներով ջերաջերմ,  
 Առանց շուքի կասկածանքի, ամօթոյ...:

?

Երբ առաջին անգամ տեսայ հս ըզքեզ,  
 Հոգիս հարցուց ինքն իրեն. —  
 Ձիս չըդիւթեց կախարդանքն այն ակնարկին.  
 Եւ ի՞նչպէս, երբ, և ո՞ւր տեղ:

Երբ խօսեցար, մըտքիս մէջ  
 Հընչեց աղօտ արձագանգն  
 Ուրիշ ձայնի մը և ուրիշ մի խօսքի  
 Չեմ յիշեր ո՛ւր տեղ լըսուած...:

Տարօրինակ յիշատակին չէ և ո՛չ  
 Մէկ ձեւն յըստակ և որոշ...  
 Կը մըտածեմ, կը մըտածեմ հս ի զուր. —  
 Որ՞նչ էր այն ձայնը և խօսքը ի՞նչ էր...:

## ՍԱԼՈՆԻ ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կը ծիծաղէր ան... աչքերուն մէջն հոգին,  
 Չեռքերը՝ մէկը միւսին մէջ սեղմուած  
 Եւ ծունկերուն վըրան զամուած հաստատուն,  
 Նէ կը խօսէր՝ դաշըն ձայնով՝ հասցեկապով.

Փոյթ չընկելով աչքն ու անմիտ մեկնութիւնն  
 Այլոց, իդձի մը մէջ բոլոր ամփոփուած,  
 Դուրս փոխուած զինք շրջապատող ամբոխէն  
 Իբրև երկինք մը անիծուած արըշուութեամբ:

Կը ժըպտէր ան... Եւ կինը սէգ, կաթոգին  
 Որ էր այնքան տարի՝ իբր որդ մը թագուն՝  
 Պահած սըլտին մէջ սէրն՝ ու էր իսկ տեսած

Իր ուղեբերուն առջև ամբոխը մերժեալ,  
 Անդու կ'ըսէր. կը մըռընչէր, կ'աղաչէր  
 Մորմոքելով ցաւէն... և ան կը ժըպտէր....

## ՇՈՒԿԵ ԿԱՌԻՔԻՆ ՄԷՋ

Գիշերուան մէջ կ'երթայ հեքոտն ուրուական  
 Բոյրին մէջէն այգիներու ծաղկաւէտ,  
 Գիշերուան մէջ կ'երթայ և իբրը գերի  
 Կը քաջքըչէ մարմինս յաղթողն ետեւէն:

Միայն մարմինս... անձը տըկար և տարտամ.  
 Բայց հըզօրէն որ կայծակներ կը պոռթկայ՝

Մէկ հարուածով թեւին փութով կը սլըրծի  
Ան՝ զոր հանգոյց երկրաւոր չի բանտարկեր,

Ու թեւաւոր դէպ ի հղբայրը կ'երթայ  
Որ ընդ առաջ կու գայ իրեն խանդակաթ .  
Ազատօրէն կ'ընարէ ազատ ուղիներ  
Տիրապետող ծովուն, լերանց վըրայէն :

Այն, ուրուն որ կը սուրհայ խռովայոյզ՝  
Տանի՛ հեռուն սարսուռն արբշիւ ըզզացմանց .  
Վըրդովն ու ծուփ և դըժընդակ տենդին զոռ,  
Ու վայրենի նեարդերուս թափն ուժընդակ .

Ու գայ քեզի՛ ծաղկապըսակ, փողփողուն  
Խօսելու քեզ առանց խօսքի սիրոյ վրայ  
Բոլոր հոգիս, հոգիս միայն, ու փընտէ  
Քուկինդ՝ անոր փարի, ու վեր սըլանայ :

## ԱՍՏՂԵՐՈՒՆ ՏԱԿ

Կը քընանան դաշտերը, ձայն չի լըսուիր :  
Քայլ մը միայն, որ թէ ուր .

Կ'երթայ լաւ չեմ որոշեր,  
Քայլ մը թեթեւ, դաշնակաւոր ու երազ,  
Գիշերային լըռութեան մէջ կը լըսեմ :

Կ'երթայ, կ'երթայ գիշերային ուղեւորն,  
Ու թէեւ կանգ չ'առներ բնաւ,  
Ու թէեւ միշտ նոյն արագ  
Ու զուգաչափ կերպով ուղին կը կըտրէ,  
Գիշերուան մէջ հեռանալն ես չեմ լըսեր :

Կ'երթայ, կ'երթայ, կ'երթայ, իբրև թէ քովէս  
Անցնէր միշտ, միշտ, ու փախչէր  
Միշտ հալածչէ մը. կ'երթայ,  
Կ'երթայ ցընորքն ըստուերներու մէջ զանխուլ  
Որ կը քալէ թընդիւններովը սըրտին...

Կը զգամ կը զգամ որ անցնելու ատեն ան  
Կ'ըմպէ կաթիլ մը կեանքէս.

Խոհանքներէս կը գողնայ

Երազ մը, կայծ մը աչքերէս. կ'աղտեղէ  
Փոշիներով գեղազանգուր սեւ մազերս...

Կը զգամ կը զգամ որ հեռաւոր սըրտերու

Կը տանի ան մտացութիւնն իդներուն

Ջոր բախտն ըրաւ վեր ի վար,

Մտացութիւնն առանց վաղուի քաղցր աւուրց,  
Եւ իմ անձիս՝ զոր կը տընդեմ յիշել ես:

### « Պ Ա Յ Ծ Ա Ռ Ա Ս Տ Ղ Ե Ր »

Պայծառ աստղեր,

Դուք կը ժըպտիք

Ու չէք գիտեր

Այս իմ վիշտերըս գաղտնի

Այս արցունքներս իմ աղի...

Մտիւուն մէջ ձեր կտրընթարդ

Խաղաղութեան՝

Արդեօք զանխուլ բազիններ կան

Որոնց վըրայ կը շողշողաք

Դուք միշտ զըւարթ

Միշտ անգիտակ

Մտներն ինչպէս խորանին վրան....



“Կ'ԵՐԱԶԷ ԾԵՐ ՀՈԳԻՆՆՆԸ”

(Անժամօրուհւոյ մը օրագրէն)

Կ'հրազէ ծեր հոգին... Եկուր, <sup>ճ՛հ</sup>, երթանք  
 Լաութիւն ու ստուեր փընտոննք՝ ինչպէս այն  
[ատեն,  
 Ձեռք ձեռքի տուած, հանդարտ իրկուն մ'ապրիլի,  
 Առանց բընաւ խօսելու:  
 Դալկահար դէմքըս պիտի  
 Ըսպանուհւոյ պէս ծածկեմ  
 Խըլատեռի մը մէջ սեւ,  
 Ու խորշոմներն իմ թարշամած երեսիս  
 Պիտի շտեսնես, և ոչ ալ իմ գորշ մազերս:

Ու ժամուն քաղցր ըստուերներուն մէջ պիտի  
 Օրիորդի աչքերուն պէս գեղեցիկ  
 Դառնան ասուք. հոգիս անոնց մէջէն (<sup>ճ՛հ</sup>,  
 Ո՛հ, քօղարկուած յոգնած բիբերս՝ որունք շատ  
 Ու շատ լացին...) պիտի շանթէ դեռ փայլակ,  
 Ու դեռ պիտի յիշենք մենք,  
 Թօփշանքին մէջն ապրիլի,  
 Ըզմայլուները անցեալ,  
 Ու հաւատքի, աղօթքի պէտք մը պիտի  
 Գրուէ հոգին քաղցրութեամբ...

Գարնանային գիշերուան մէջ հրթալ, <sup>ճ՛հ</sup>,  
 Խունկին, բոյրին մէջէ նախկին վարդերուն,  
 Եւ խաղաղիկ՝ ծղղրիդներու՝ երգերուն:  
 Երթալ այսպէս լըռիկ, ձեռքի սեղմումով՝

Իրերը մինչ կը նիրհեն՝  
 Եւ հեռաւոր սիրոյն ալիքը հըզօր՝  
 Իբրեւ աղբիւր մը որ յանկարծ ջինջ ու զով  
 Դուրս կը ցայտէ ապառաժէ մը հրակէզ,  
 Ժայթքել հրաշտ մեր սըրտէն:

Չմ՛ս կարծեր դուն որ պիտ՛ աննէ յարութիւն  
 Սէրը թաղուած... Ո՛հ, ըզգայի ժամ մը գէթ  
 Արեւցութեան, վայրկեան մը գէթ մոռնայի  
 Հոգւոյն կըրած տառապանքներն ու տանջանք:  
 Ո՛հ, ըզգայի դեռ սըրտիս մէջ թափն, եռանդն  
 Հազար կեանքի՛ որոնք Աստուածը կ'օրհնեն,  
 Աստուած՝ որ տուաւ մարդոց հասակը ծաղիկ,  
 Եւ մարգերու հայրենիքին տուաւ Ապրիլ...

Հովը կու գայ ու կը բերէ ինձ բարակ  
 Հոտ մ'անտառի. գիշեր կ'ըլլայ, ու հանդարտ  
 Դաշտերուն վրայ կը տարածուին ըստուերներ:  
 Խազ մը վըճիտ կը բարձրանայ. կը կրկնուի.  
 Ու կը փոխուի գեղգեղանքի յանկարծոյն,  
 Ուրախաւէտ մոլեգնութեամբ մ'անծանօթ  
 Մեզ՝ որ թըրծուած ենք սըտութեամբ ու տիղ-  
 [մով...

Մըտիկ կ'ընէ գիշերն ու այն նըլազէն  
 Կ'ըմպէ զմայլումը... Երբ հոգիս կ'երազէ:

## Օ Ր Ա Գ Ի Ր

## Ա

Ահաւասիկ եմ միայնակ վերջապէս...  
 Լըրացաւ օր մըն ալ ահա. դարձեալ ես  
 Քաջքըչեցի ուրուս ժամեր ու ժամեր  
 Մարդոց մէջէն. ծիծաղեցայ, խօսեցայ.  
 Ուրիշներուն փայփայեցի մանուկներն  
 Հանդարտ անձի մը դանդաղիկ շարժումով.  
 Պտոյտներ ըրի ուղիներուն ես մէջէն  
 Ջոր կը սիրէր ան, այլոց հետ, ու տեսայ  
 Իրիկուան քօղը որ կ'իջնէր հեռաւոր  
 Լեռներուն վրայ, այն լեռներուն՝ զորքս ան՝  
 Ուրախութեամբ փայլուն ու վառ աչքերով  
 Նըկատեց, ձեռքը ձեռքիս մէջ խառնըած...  
 Օդին վըրայ գուշակութիւն ալ ըրի,  
 Հունձքերուն վրայ, այգեկութին մօտաւոր,  
 Զըւարթ հոգւոյ մը զուարթ շեշտով... վերջաւ  
 Ահաւասիկ մենիկ մնջիկ... Աւասիկ [պէս  
 Օր մ'ալ... Մինչեւ երբ, ս'վ Տէր:

## Բ

Հին դարակի մը մէջ զըտայ ես այսօր  
 Ջեռագիր երգ մը հինօրեայ. դըրուագեր  
 Էին որդերը նորանշան զարդերով  
 Կարծր ու դեղին թերթը, քըչիկ մը մաշած  
 Քըչիկ մըն ալ լուսանցքներէն ոլորուած:  
 Գրակալին վրայ դըրի, կարդալ ուզեցի:

Տեղ տեղ խազերն անյայտ էին, աւրըած,  
 Եւ ես առջին բոլորովին վայրահակ  
 Մեծ նեղութեամբ կը հանէի: Բայց նախկին  
 Իսկ խազերէն՝ տազնապններու բուռն ալիք  
 Մ'ինձ ընդ առաջ կարծես խուժել ըսկըսաւ...  
 Չգացի ուժգին եւս յուշքերու սեղմումն ես,  
 Կ'ըսէր պարերգը հին ինձի երկու խօսք,  
 Միայն երկու խօսք. — Ա՛յ բընան, ա՛յ բընան —  
 Խազերը այն երկու բառերը միայն  
 Կ'ըսէին... Թերթը գոցեցի, աչքերն ա՛լ  
 Չէին տեսներ...

Հեռաւոր օր մ', ո՛վ գիտէ  
 Մէկը բացաւ այս դեղընցած թուղթն անշուշտ  
 Գրակալին վրայ փետրահարին՝ նըկարձն  
 Շուրջը բոլոր հովուհիներ պսակազարդ,  
 Կաղկազըւարճ մարգերու վրայ՝ վարդազոյն  
 Չգեստներով, անիը կտրալտի լըճերու...  
 Ան օրն արեւը երկրի վրայ կը ժըպտէր  
 Գուցէ, գուցէ օրիորդ մ'էր՝ աչքն ու միւսք  
 Լուսաճաճանչ՝ նըստած դիմացը դափին...  
 Խազերն անշուշտ ուրիշ խօսքեր ալ ըսին  
 Անոր, անշուշտ իր վառվըռուն հասակին  
 Երգեցին քաղցըր փաղաքշանք մ', երգ մը, լո՛կ  
 Խոստում անչափ և նենգաւոր. — Ա՛ս վաղիւ:

Գ

«Վաղիւ» — ... Վազն ի՛նչ պիտի ըլլայ. ի՛նչ  
 [հըրաշք  
 Պիտի կըրնա՞յ յարուցանել շիթ մը յոյս.  
 Պիտի կըրնա՞յ ճեղքուիլ երկիրն ու բանալ

Գամուած դագաղ մ' , ու վերըստին վառվըռին  
 Երկու մարած աչքեր, բերան մը կընքուած  
 Բացուի դարձեալ ու խօսի... ճր կարծըր քու  
 Պիտի կըրնան՝ ինչպէս երբեմըն՝ ձեռքեր  
 Սեղմել դարձեալ իմիններս... այս. ահա ես  
 Պիտի մտածեմ վաղն, ինչպէս այսօր, երէկ  
 Եւ միշտ... Այսպէս պիտի անցնին միշտ օրերն  
 Ու ամիսներն ու տարիներն. ու պիտի  
 Ստիպուիմ անդորըր դէմքով միտ դընել ես  
 Կեանքին պարտուց, սովորութեանց, բարքերուն.  
 Ժըպաիլ անոյշ զըրոյցներուն, մըտածել  
 Զգեստներս, խօսիլ... Ժամերն ինծի համար են  
 Այսուհետեւ նըման, գիշերը միայն  
 Է աւելի գուցէ դժընդակ ու տանջող:  
 Կը մըտածեմ մանկութեան խոր, հանգուցիչ  
 Անոյշ քուններն, ու այն թողլիք քուններուն  
 Մոռացումներն երկարածիգ...

7

Կ'անձրիւէ

Հոտ վարը, խեղճ մեռեալ, ցուրտ է, խաւար է  
 Անշուշտ, բայց հոս ցըրտագոյն է, աղջամուղջ,  
 Հոս երկրի վրայ՝ ուր տերեւներն են դեղին  
 Բուր՝ կերթան հովերուն հետ, ու կ'իյնան,  
 Կը թօթափին, կը համակուի երկինք թուխ  
 Ցուրտ հանդերձով: Հոս վերը կան սառոյցներ,  
 Անապատին մէջ այս անծայր, ուր մինակ՝  
 Աննըպատակ այլ հետ՝ հոգի մը կ'երթայ  
 Ուր մոլոր դէպ ի խաւար մը անհուն,  
 Մըրըրիկէն՝ որ չի դադրիր՝ կոշկոճուած,  
 Վըշտերու այս ձըմնուուն մէջ...

## Աւասիկ

Հոս են բոլոր իր նամակներն. հոս կ'ապրի  
 իր ջրդուա ձեռքն ու կը գըրէ հապըշտասոյ  
 Հոս վերն անուանըս, կը գոցէ, կը կընքէ...  
 Երէկ չէր... Են բոլոր ներմակ ծրարին մէջ...  
 Զանոնք հս ինչ հեքով բացի հեռաւոր  
 Այն օրերում, և ինչպիսի՛ ցընծութիամբ:  
 Ահա, ասոր կողմերէն մին պատըռտեց  
 Թըղթահատ փայտը անհամբեր... Անոր հս  
 Երկը հրկայն օր սպասեցի ամէն ժամ,  
 Եւ, գիշերն ալ, կ'երազէի զանիկա.  
 Կամ կը հասնէր և էր այլոց ուղղուած,  
 Կամ կ'երկըննար ձեռքը զանի բըննելու  
 Եւ կը տեսնէր որ գերդ շոգի կը ցընդէր...  
 Հասաւ ան հուսկ ուրեմըն... Հեռըս քանի  
 Մը բարեկամք կը խօսէին խընդագին.  
 Կը յիշեմ, զայն հանդարտ դէմքով մը առի,  
 Վար դրի, ուսերըս դարձուցի դէս ի լոյսն,  
 Ու աւելի գիտ ուշադիր կեղծեցի  
 Այն խօսքերուն՝ զոր միտքն ալ չէր հասկընար:  
 Ներսըս թընդիւն մ'որ բոլոր զիտ կը ցընցէր.  
 Զըտեսա՛ւ մէկը շըրթներուս դողդոջելն:  
 Անշուշտ զանոնք ըստիպեցի հս խաղաղ  
 Նուրբ ժըպիտի մը... Յետոյ, ո՛հ, վերջապէս  
 Մինակ, խլեցի թուղթն...

Ամէն ինչ լըմընցած

Է ալ, ամէն ինչ ընդունայն ու գրեթէ  
 Կը վարանիմ թերթն հանելու արդ անկէ...  
 Ահա առջեւըս, բայց աչքերը միայն

Բառ մը կըրնան կարգալ. իսկոյն կը քօղէ  
Ամպ մը աչքերս... Է բառը քաղցր ու անզուժ  
Իբր յիշատակը զըզուանքի մը զոր բնաւ  
Երբեք երկու մեռած ձեռքեր չըկըրնան  
Պիտի նորէն ընծայիլ մեզ. — Սիրուհի. —

Ձ

Ու պիտի գայ նորէն Գարունը... Զըւարթ  
Իրիկուններն Ապրիլի դեռ պիտի գան.  
Պիտի դառնայ օդն հոտերով տոգորուն,  
Եւ խընդուժեան աղաղակով մը բարձրէն  
Պիտի անցնին ծիծեռնակները...

Է

Կարդանք:

Ու մեր բոլոր մըտածումները պըղտոր -  
Խորասուզուին ինչպէս թէ խորքն անդունդի  
Մ'ուրիշինէն: Բարձրեալ հոգի մը առնէ  
Մերինն ու իբր ասփին: մէջ զայն ըստիպէ  
Միտ դընելու իր ձայնին: Գիրքը՝ որուն  
Չեն կըտրատուած լուսանցքն ու ծալք՝ կը կար-  
[գայ

Հրաւէր... Արդեօք մէջն ունի՞ խօսք մ'ըստփոփիչ...  
Օն դիպուածով բանանք: Ահա. — « Այն որ մեր  
Նախորդներուն համար եղաւ պարզամիտ՝  
Հանապազորդ խընդրանք, փոյթ  
Գաղափարին, ճըշմարտութեան ու փառքին,  
Անզուսպ հոսանքը մեր դարուն ըրաւ զայն  
Վըկայագրեալ շահավաճառ մը հիմա,  
Շահավաճառ մ'անմիտ, յիմար խօսքերու: —

Ստոյգ և տըխուր... Բայց ի՞նչ փոյթ  
 ինծի, ի՞նչ փոյթ և արուեստին՝ խօսքերուն  
 ճըջմարտութիւնը: Ահաւոր և միակ  
 ճըջմարտութիւն՝ յիշատակաց մըջտական  
 Տանջանքն է այս... Պիտի կըրնամ ես մոռնալ  
 վայրկեան մը գէթ. պիտի կըրնամ ես հրքեք  
 ճերմակ ամպերն՝ իբրեւ թեւեր ըսպիտակ,  
 եւ արեւակն ու ծագիկնիր, մարգն ու ծով,  
 ինչպէս հրքեմըն՝ դեռ դիտել զուարթօրէն,  
 Առանց ներսէն լսելու դառն այս հարցումն.  
 — Եինչո՞ւ աշխարհն արդ կը ժըպտի: Բերկրաւէտ  
 ինչո՞ւ է դեռ ամէն բան: Ի՞նչ կ'արժէ ալ... »:





ՄԻՋԱՆԿԵԱԼ

1854

# Դ Ա Շ Տ Ա Ն Կ Ա Ր Ն Ե Ր

ՀԻՆ ԴԱՐԱՍՏԱՆԻՆ ՄԵՋ

Ո՛հ երփներփին տարածուն  
Քընքուշ գոյներ մարգերու,  
Երկնակապոյտ քլուրներու  
Կատարներով վարդագոյն.

Ո՛վ գողարիկ սիւք իրիկուան,  
Ալիքներ հեզ ու հանդարտ,  
Իմ հասակիս մանկական  
Հոգին ինձի տըւէք արդ:

Ան միտքը կոյս ու ցընծուն  
Տըւէք քանի մը ժամեր.  
Ան սիրտն անմեղ անվեհեր,  
Քոլոր սիրով աւլըցուն:

Մոռցիր հոգի իմ դու արդ՝  
Դըժբախտութեանց փորձառու՝  
Թէ մարդ ըստէպ սուտ կ'երդնու,  
Կը մոռնայ շատ ըստէպ մարդ:

Ըրէք որ տաք խօսքի մ'ես  
Կարենամ, ո՛հ, տակաւին  
Չօնել հոգւով սիրակէզ  
Հաւատքս հաստատ, բընաւին...

Ո՛վ գողարիկ սիւք իրիկուան,  
Ալեակներ հեզ ու հանդարտ,  
Իմ հասակիս մանկական  
Հոգին ինձի տըւէք արդ:

## ՎԵՆԵՏԿԵԱՆ

## ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԱՓՕՐ ՄԸ Ի ԳԱՆՆԱՐԷՃԻՈՅ

Կ'անցնի թափօրն յամբ: Ընկերհաշտ պետութեան  
 Գուցէ նաւերն՝ որ յաղթողները ծափեն՝  
 Օր մ'ուրիշ կերպ չէին շարժեր շուրջառնիր  
 Եւ ուրարներ՝ ի լոյս հանգրին այգերու:

Կամուրջին վրայ է թափօրն: Այսօր սակայն  
 Օրը կ'մեռնի քնէած ալեաց մէջ լօռուտ,  
 Բայց խաղաղիկ մոռացօնք մ'արդ կը գրաւէ  
 Սարսափն հղող ազգն հեռաւոր Ասիոյ:

Բարձր ամենուն վրայ լուսոյ մէջ կը սըփռէ  
 Հովիւն՝ երկնից ներողութիւնն երջանիկ  
 Հօտին վրայ մեծ աստուածային նըշանով:

Լըճակներուն մէջ մեծագոյն ճաճանչ մ'ալ  
 Կը փայլակէ և օրհնութիւն կը կարդայ  
 Գարբաչիոյի, Ճիամպէլիինի արուեստին:

## Ո Ի Ր Ո Ի Ա Գ Ի Ծ

Կարմիր լուսնակն ու կըլոր  
 Կը բարձրանայ հեռաւոր  
 Մարգերէն վեր, զոր գիշեր  
 Մոխրի գոյնով է ներկեր:

Դաշտավայրին այն անհուն՝  
 Գորշ հաւասար երփն ու գոյն,  
 Պայծառ գիւղի մը ուրուն  
 Լոկ կը կոտրէ պըսպըղուն:

Կը ժըպտի լի լուսինն այն  
 Պայծառութեան. կալին վրան  
 Անշարժ՝ կ'հաջէ մի սեւ շուն  
 Լուսնի վըրայ սեւեռուն:

## Դ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Ր

Հոս հոն դաշտին մէջ դէպ երկինք կը ցըցուին  
 Ուղղորդ ճիւղերը տունկերուն ուժասպառ:  
 Կ'անձրեւէ. լայն ամայութեան վրայ տըխուր՝  
 Կը ծանրանայ լըռութիւն:

Այսպէս երբեմն արցունքներ լուռ կ'անձրեւեն  
 Աւեր, ամայ անհունութեան վրայ հոգւոյն,  
 Մարդոց ձեռքերն այսպէս երկինք կը ցըցուին  
 Աղերսաւոր ու անզօր:

## Մ Ր Ր Ի Կ Կ Ա Ր Կ Ո Ւ Տ Ի

Տարափին տակ կարկուտին  
Տըխուր գանչերը կ'աղօթեն զանգակին  
Դարերու մեծ ձայնով. — Տէր  
Անցնի պատիճն ահագին:

Դադրէ, ո՛վ Տէր, զարնելէ  
Ան որ երկրի վըրայ լոկ հաց կը խընդրէ.  
Դադրէ խըստիւ քանդելէ  
Ինչ բանի վրայ որ մարդ իր յոյսը դրեր է:

Է շատ տարի որ կը կրեն,  
Շատ տարի քեզ կը հայցեն, Տէր գերակայ,  
Եւ ալ յոգնած կը հարցնեն  
Թէ կ'ստ Դուն, վիշտն արդեօք Քեզմէ է կու գայ,

Թէ ամայի անապատ  
Մըն է երկինք՝ զոր իր վըշտի օրերուն՝  
Մարդ բընակչօք կը լեցնէ  
Գերեզմանի ունայն վըհէն սարսըռուն:

Տարափին տակ կարկուտին  
Տըխուր գանչերը կ'աղօթեն զանգակին  
Ձայնովը մեծ՝ դարերու.  
— Գթուի՛ն, գթուի՛ն, Տէր, մարդկային  
[չուառանքին, —

Ու ահա լուսինը վերջին  
Ելօքն լեցուն սկաւառակն իր կը ցըցէ.

Ու ովկիանին ամպեղէն

Վրան՝ վարն ահա պարզը տակաւ ծայր կու տայ :

Հեզիկ՝ մարդոց կը ժըպտի

Ու կ'ողողէ դաշտերը լոյսը պայծառ .

Հեզիկ զերդ սաստ մայրենի՝

Հանդէպ ժըպիրհ բամբասանքի մը վատթար :

Յաւիտենից ձայնը մեծ

Լայն շողիւնին մէջ հանդարտիկ կը լըռէ .

Տակաւ ամէն ձայն՝ ծովուն

Մէջ գիշերուան անդորրութեան՝ կը նիրհէ :

## Ի Ր Ի Կ Ո Ւ Ն

Մարգերուն մէջ վարն ըստուերները կ'երկըննան  
կաղամախին . խորասուզուած խաղաղաւէտ  
իրիկուան մէջ դաշտագետինը կը ձըկտի  
կը տարածուի մեղեսթիկի դէպ ի խոր ծովու :

Յետին մեռաւ գեղջուկին խազն երկարածիգ :  
Լըռեց արտոյտն օդին մէջ վերն , ու չի լըսուիր  
Բայց թէ միայն հըծծիւն մը լոկ , շըշունջ մը  
[լայն  
Խոտերուն տակ , ճիւղերուն մէջ սաղարթախիտ ,

ինչպէս երբեմըն տաճարին մէջ կը թըրթուան՝  
Մինչ վանականք՝ երբ սաղմոսներն երզըւած են՝  
Դասը թողլով կը հեռանան յամրընթացիկ  
Յետին աղօթքը ցած ձայնով մըրմընջելով . . .

Կը վերանայ օրհասական ծաղիկներու  
Արտաշընչումը կը տրբւած խոտերէն... Ինձ  
Կը բարձրանան յուշքեր սըրտէն, բուրումը ձեր  
Ո՛վ անցելոյն մեռած խամրած դուք ծաղիկներու

## Տ Ե Ս Ի Լ Ք

Գիտեմ պալատ մը հինաւուրց պատերով  
Գերեզմանի երեւոյթովը տըխուր.  
Հիմէն տանիք կը պատէ զայն թուխ մամուռ.  
Բակը լեցուն բաղեղներով, եղինով:

Խորշոմերես հանի մը ներսն՝ ինքնամիտօ՛վ  
Վառարանին առջեւ մարած, ամայի,  
Տըղայական շեշտով մ'անդուլ կը պատմէ  
Չըրոյց մ'որուն ոչ ոք ականջ կը դընէ:

## Ս Է Լ Լ Ա Յ Ի Հ Ո Վ Ի Տ Ը

Հովիտ մը կայ երջանիկ  
Բարձր ու չըքնաղ կատարներով պըսակուած.  
Իր երկընքէն աստղերը գաղտ փայլակներ  
Կը շանթեն վար կանաչագեղ դաշտերուն,  
Ու այգուն նախկին նըշոյլներուն՝ կը փըթթին  
Ծաղկուկք՝ որոնք երկնից ժըպիտը ունին:  
Փափկիկ դըրախտ մ'է ուր Աստուած հաճեցաւ  
Սըփռել շուքեր, շուրեր ու զուարթ, թափառոտ  
Թիթեռնիկներ, ու պիտի դուն ըսէիր  
Թէ կը տիրէ խաղաղութիւնն հոն յաւէրժ....



Բայց ամայի ճամբուն մէջէն, խորքէն մուկ  
 Ուղիներուն անտառաց մերթ կը լըսուի  
 Հոգն որ կ'ողբայ կամ կը մռնչէ ուժգնակի  
 Իբրեւ գուժկան մահու, և մերթ կը հասնին  
 Քեզի յոգնած ճիւղն յետին թըռչնիկին,  
 Զոր նենգաւորն արծիւ սեղմած է կուրծքին  
 Դըժոխորկոր, և ամէն մէկ անձաւի  
 Կու գայ կ'երթայ դառն և երկայն արծազանգ  
 Մը որ օր մ'ալ գուցէ երկինք կը հասնի...

### ԱՄԱՌՆԱՅԻՆ ԴԱՇՏԱՆԿԱՐ

Փըպիրհ բոցեր դաշտագետնէն մացառուտ  
 Կ'անցնին, խոտերը կը խանծեն. շըրմուղի  
 Մը հին հեռուն փլած աւերակը սեւ, մուկ,  
 Ծռած տիտանի մը լայն ըստուերը կը թուի:

Միայն ճըպուռն եղանակովը իր սուր  
 Կը վըրդովէ միջօրէին թըմրութիւն.  
 Մըռունչ կամ երգ ժարդու լըսել դուն ի զուր  
 Կ'ուզես բնութեան այն ձանձրոյթին մէջ ան,  
 — հուն:

Կովադիացը կը փախչի քարէ քար,  
 Մինչ կը հընչէ կըռինչը վերն ագռաւին՝  
 Կատարը հին կործանական շինուածքին.

Հեռուն, ահա կու գայ գոմէշ մ'յամբաբար  
 Մինակ՝ ու մեծ այն անապատը կ'ընէ  
 Աւելի մեծ՝ որուն վերեւն արեւն է:

## ԱՆՁՐԵԻ

Կ'անձրիւէր. պատուհանները դէպ ի բաց՝  
 Հրակէզ յամառ տօթին այն խուն դադարին՝  
 Կ'ելլէին պարտէզէն թարմ շունչն ու բոյրեր  
 Կենդանացած ծաղիկներուն, խոտերուն.

Կը դադրէր երանգներու աղմուկն ու շփոթ  
 Այն հայցըլած կաթիլներուն քօղին տակ.  
 Եւ ծարաւ բունծերն անյագ կը խըմէին  
 Հացիներու, դափնիներու բոլորտիքն.

— Ըլլալ տունկ, ըլլալ տերիւ, ըլլալ ցօղուն  
 (Կը խորհէի) և տազնապին մէջ հրանուա .  
 Միտիթարանք մ'ունենալ այսպէս երկընքէն... —

Պաաըզգամին վրայ երկընցած՝ թուփերուն  
 Կողկին, խոտին կը նայէի սեւեռուն...  
 Եւ անձրեւը կը զարնէր իմ մազերուն:

## ԱՊՐԻԼԻ ԵՐԳԸ

Ձայն մը կ'երգէ. — Ո՛վ դուք մարդիկ ցաւագին,  
 Կու գամ, կու գամ: Յոյսին բացէք սըրտերնիդ,  
 Բացէք բացէք սենեակներուն փակ դըռներն  
 Եկող հասնող վարդերու ծանըր բեռին:

Կու գամ կու գամ: Ամէն ժայռեր, անապատ  
 Կը ծաղկին. օ՛ն, վեր գըլուխնիդ կորակոր

Ու ժըպտեցէք. ես հրաշագեղ հանդէսին  
կու գամ. կու գամ երազներով բեռնաւոր:

Աւելի դեռ հաստատ, լուսեղ Մայիսի  
խոստումը ձեզ կը բերեմ: Ո՛վ տըխրասոյզ  
Սըրտեր, լըքեալ, յաղթուած և կամ չըսիրուած,  
Ո՛վ դեղեկոտ մարդկութիւն, օ՛ն, քեզ խրախոյս:

### ՀԻՒԱՆԴ ՔՐՈՋՍ ՀԱՄԱՐ

Ո՛վ դու ճիւղիկ դեղձիի,  
Ատեղազարդ, լայնասփիւռ  
Ու զով մարզին բեր դու բոյր  
Քըրոջըս, բոյրն Ապրիլի  
Եւ տունկերուն ծաղկով ւի,  
Սըրտին մէջ քրոջս արթընցուր  
Ջըւարթ, ամբիծ պատկեր բիւր,  
Ո՛վ դու ճիւղիկ դեղձիի:

Վարը մարզին մէջ գետակի մը քովիկ  
Փոքր ընտանիքն ահա նըստած սեղանի.  
Կը փայլի շուրջն արփին, Ապրիլ կը ժըպ-  
կայ շուրջը մեղմ տաքութիւն [տի,  
Մը, քընքուշ սիւք մը գողտրիկ  
Անմեղութեան և սիրոյ....  
Վրան այն զըւարթ սեղանին  
Օդէն՝ որ զայն կը շարժէ-  
Վարդի պսակներ կ'անձրուէ  
Արեւայեղջ դեղձենին....

## ԱՇՆ ԱՆ ԱՅԻՆ ԱՆՁՐԵԻ

Այս առաւօտ անձրեւեց, և իմ սենեակըս կ'իլլէ  
Պատուհանէն բաց՝ այն հոտն աշնանային ան-

[տառաց՝

Որ կ'արթընցնէ մոռցըւած կերպարանքներ, և-

[բազմեր.

Վանքեր անձայն ու մըթին, կրօնաւորներ կընկ-

[դաւոր.

Հին անտառներ, բնակարան առասպելեալ ոսկե-

[ցուպ

Մոգերու. խոր անձաւներ, և լըճեր սեւ, խաւար-

[չուտ,

Կանաչորակ յատակով երկայն և թաւ լօռերու,

Գուցէ մագերն ապըստամբ Նայադներու՝ խորա-

Այն ջրերուն տակ... [սոյզ

Երբեմն երբեմն արփին կը զարնէ

Հանդիպակաց որմն, ու գոյն ու նըշաններ կը

[փոխէ

Ցընորքներու այն շարժուն տիեզերքին... Աստվոր

Ամէն տեսիլ ցընդեցաւ ահա արեւ, ահա կեանք,

Ըստուգութիւն, մանկութիւն: Ի՞նչ հրապուրիչ

[ծիծաղներ,

Հրաւէրներ, այն իր ճերմակ ճաճանչին մէջ աշ-

[նային:

Կարծես կ'ըսէ. - «Դ՛ուրս ելիր, օդը զով է, են

[կանաչ

Մարգերը դեռ, Դեմետրէ կը զարդարէ դաշտո-

[բայքն

Ոսկի հունձով. այսօր զուարթ կը փայլիմ, չեմ  
 [բայց երդնուր  
 Նոյնն ըլլալ վաղը. գիտէք, է լոկ ներկայն ապա-  
 [հով,  
 կը փախչի ժամն ու դըժնէ ճակատագիրն անողոք  
 կը չարակնէ ձեր խընդանքն. ուրեմըն դուրս,  
 [օ՛ն մարգերն  
 Ու բըլուրները դէպ ի՛ Յառա՛ջ, ահա դրան քով է  
 Չըմնուն ու հս նըշողեմ պիտի տերեւը եթէ  
 Մեռնի ու ձիւնը փըռուի բունծերուն վրայ ամայի  
 կեանքին » :

Ահա կը մըտնէ փաղփուկ ալիք մը պայծառ  
 Պատուհանէն բաց ու իմ կ'ողողէ խուցըս լու-  
 [տով,  
 Ու կը դիտէ ամէն կողմ՝ արձակուրդի մանկան  
 [պէս.  
 կը քըրքրէ գիրք ու տետրակ, կը ծաղրէ նուրբ  
 [ձեռագործն  
 Արկըղներուն, ու կու տայ ամէն ոչինչ բաներու  
 Ոսկի թերթիկ մը՝ ժըպտուն... :

Պիտ' ուզէի վազել հս  
 Դէպ բարձրաբերձ բըլուրներն, աստուածային  
 [դէպ ի օդն  
 Ազատ ու զով, բայց... խոշոր հատոր մը սեւ կը  
 [նայի  
 Ինձ սեղանին վըրայէն, կը զայրանայ, կը սաստէ,  
 կը մըրմուայ : Ո՛րքան խորհուրդն է ապերախտ  
 [զոր կու տայ  
 Ան վարժապետն անողոք, անտանելի : Գեղեցիկ  
 է երկինքն այսպէս... Այսպէս անուշ է օդն...  
 [Ո՛վ գիտէ

Գուցէ վերջին օրն է այս հանդէսին...

Ո՛վ ինծի բնչ,  
Խաւարչնու գիրք, կը պահես. ստուգութիւններ  
[գուցէ դառն,  
Ուրիշ ոչ ինչ...]

Ո՛չ, քան այս անհոգ վայրկեանը՝ լաւ է  
Երազն՝ ըլլայ իսկ կարճ, ցնորքը՝ զոր ճանանչ  
[մը ճերմակ  
Եւ ոստ մը լի շիթերով կ'արթընցընէ սրտին  
... [մէջ...  
Վազենք մարգերն ու բլուրներ, դէպ ի բաց օդը  
[վազենք:

## Ն Ո Ր Գ Ա Ր Ո Ւ Ն

Թեթեւ ամպեր մեծ պարզութեան մէջ կ'անցնին,  
Մտածկոտ դանդաղ ամպեր՝ կարծես հեռաւոր  
Գարուններու հին յուշերուն մէջ սուզուած...  
Վարդերը վարն երկրի վերայ կը փըթթին.  
Սակայն կարծես վաստակարեկ ու տըրտում՝  
Երազիկներու թագուհիներն՝ հեռաւոր  
Կը մտածեն եղանակի մը վերայ...

Ճերմակ ծաղկները զորս Ադոն պատանին  
Ներկեց արեամբ, ու արեւով՝ ծիծաղկոտ  
Օրիորդներն յոյն քաղելով կ'երթային  
Կիպրուհոյն վրայ դըրասանգներ տեղալու...  
Ո՛վ գեղանի կոյսեր, դըժնէ պարկաներն՝  
Որպէս զի ձեզ դիտեն դըժխեմ երկաթնին  
Կը կեցնէին՝ թելը պատրաստ խըզելու,

Եւ Աստղղկան արքայութեան մէջէն լայն՝  
 կը վազվըզէր կ'երթար անճառ աղաղակ  
 Մը երգերու, ժըպիտներու, և ձայներ  
 Անակընկալ՝ անակընկալ իղձերու,  
 Եւ կոհակներ ովկիանին այն սիրոյ,  
 Եւ վարդերու թըփերուն մէջ պատանիք  
 կը փընտռէին ձեզ, և արեւը կ'օրհնէր...

Կիւթերեանին կը ծխէին սօւրք բազիններ,  
 Ու կոյսերու, վարդերու այն ծովուն վրայ  
 Հեթանոս մեծ աչքերն անշարժ կը յառէր  
 Ճերմակ պատկերն Աստուածուհւոյն ծաղկանց  
 [մէջ...

Աւ չեն ծըխեր հիմա մաշած բազիններն,  
 Ու են փոշի դարձած ձեռքերն ըսպիտակ  
 Որոնց այրել կու տային կեանքն ու հեշտանք...

Իրիկունները կը դառնան ջինջ ու եղկ,  
 Ապրիլ ամիսը կը դառնայ, կը դառնան  
 վարդերն, ու մարդ երազելու կը դառնայ,  
 Թեթեւ ամպեր սակայն կ'անցնին պարզութեան  
 Մէջ, մըտածկոտ՝ դանդաղ ամպեր, որք կարծես  
 Մըխըրճըւած, սուզուած են խորքն հեռաւոր  
 Գարուններու յուշքերուն մէջն հեռաւոր....

## ՎԵՐՋԻՆ ԳԱՐՈՒՆ

Նորարոյս խոտը կ'ըսէ,  
 կ'ըսեն թուփերն ըստեղներով առլըցուն.  
 — Աս որ կու գայ դեղեկոտ  
 Յոզնած քայլով, արձակելով հառաչներ,  
 Անշուշտ ճամբան կորսընցուց....  
 Չե՛ս գիտեր դուն որ նորագանչ հանդէսն հոս  
 կը պատրաստուի Ապրիլի,  
 Ո՛վ դալկահար այտերով կին դու տըմոյն:  
 Զըլարթ ամբոխ կ'ուզենք մենք,  
 Օրիորդիկ ու մանկիկներ կ'ուզենք բիւր,  
 կ'ուզենք խարտեաչ մենք վարսեր,  
 Ծիծաղ, ժըպիտ, նայուածքներ լի հուրքերով.  
 Ասօր, երգով, կաքաւով  
 Ծաղկափրթիթ նըշխներու ներքեւէն  
 կ'անցնի Սիրոյ գըլարթ պարն,  
 Երագներով, յոյսերով լի չըքնաղ պարն:  
 Օ՛ն, տեղի տուր, չե՛ս լըսեր  
 Զայներն արդէն որոնք կու գան մարգերէն.  
 Երգերը չե՛ս լըսեր դուն՝  
 Որք տարիածու սըրտերն ի յայտ կը բերեն:  
 Ո՛հ, դալկահար դէմքըդ, օ՛ն,  
 Ծածկէ քողով, ու հեռացիր, գնա՛ հեռուն.  
 Զուր են ողբերն ու կական  
 Առուզութիւնն երբոր մեռած է չըքնաղ:  
 . . . . .



Եւ արխրադէմ ուղեւորն  
 Որ կը լըսէ ծաղրին մոռուչն իր հտեւէն,  
 Զառ Ի վայրէն կը շտապէ  
 Դէպ ի անդունդը խորափիտ բաց հովտին .

Զուր կը խընդրէ օգնութիւն  
 Խոտէն, ծաղկէն, արեգակէն, հովերէն  
 Մոլորանքին մէջ իր խոր  
 Վաստակարեկ այն վիրաւոր խոց հոգին :

Աքերն առջիւր յառած  
 Կ'երթայ հոն ուր ձայնն անդունդին մոռացում  
 Կը խոստանայ և վախճան  
 Զըւառութեան . կ'երթայ նէ բարձրը ճակտով

Յաղթած ամէն վատ երկիւղ . . . . —  
 Երկափըթիթ մարգերուն վրայ իր հտին  
 Սիրոյ թափօրը կ'անցնի,  
 Գանգիւնն երգի մը օգին մէջ կը թըրթռայ . . . .

## Գ Ի Շ Ե Ր Ա Յ Ի Ն

Ահա գիշերը կապուտակ, խաղաղիկ  
 Գիշերն ամրան . . . . Հրծծիւններ  
 Գողտրիկ, լուսիղ բարախումներ աստղերու,  
 Բուրումներ մեղմ, օ՛ն, մըտէք :

Զեզ ծըծելու համար բոլոր կ'երկըննամ  
 Պատըզամին վըրայ ես .  
 Քաղցր է սուգիւ ծով ծըփանքին մէջ ազատ  
 Եւրոյ իջնող էակաց . . . .

Գարաստանին ստուերները լուռ կ'ուռնկընդրեն.  
 Ներքեւի բաց սենեակներն  
 Արձագանգներ կը հնչեցնեն. կ'երգեն հին  
 Երնծղային վրայ հին վէպեր.

Ու կ'արթընցնեն խաղերն ահա ստուերներու  
 Խուճը մը, զանոնք կը տեսնէ  
 Միւտն՝ որ զիրար կը հալածին հապըշտապ,  
 Սիրտը կը զգայ խորհրդաւոր ձայնն անոր:

Խօսքեր կ'ըլլան՝ որոնք օր մը լըսուեցան  
 Անուշադիր ականջով.  
 Ու երեւցան մըթին, ներքին կըրակն արդ  
 Կ'ազատի այն ցուրտ շիտէն.....

Կ'ըլլան ժըպիտք աղերսարկու, և տըժգոյն  
 Մոոցուած դէմքեր..... կը ծըփայ  
 Ճերմակ ալիք մը լի լուսնին մէջ, խաղաղ  
 Քուռին միջեւ մարգերու.....

Բաղեղնապատ վանքեր կ'ըլլան ցնորական  
 Եւ անսովոր ըստուերներ  
 Վանականաց, որք զանգակին միակերպ  
 Ձայնովը լուռ կը քալեն.....

Կ'ըլլայ վերջին ականարկ մ', ականարկը անյագ  
 Մնաս բարովի, բոլոր նենգ  
 Քաղցրութիւնն.... (ճվ բարախումներ, տագ-  
 նապներ,  
 Ո՛վ մոոցըւած արցունքներ):

. . . . .

Խագերն օգին մէջը կ'ելլեն կորսուելու  
 Թաւ ըստուերին մէջ, քաղցրիկ  
 Եւ ահաւոր պատմութիւններ պատմելով...  
 Մըտիկ կ'ընէ գիշերն անշարժ ու լըռիկ:

## Պ Ա Տ Շ Գ Ա Մ Է Ն

Ո՛հ, որքան շուրջն անդորրութիւն,  
 Ինչպէս գիշերն աստղազարդ է....  
 Ո՛չ հոս, փըռուած կընիւններու  
 Թիկնաթոռին մէջ ընդարձակ,  
 Այս օթեակին վըրայ, որ դէպ  
 Ի խոր հովիտը կը բացուի՝  
 Առջեւը մութ անտառներուն.  
 Ալ օգին մէջ թեւատարած,  
 Ինչպէս թեթեւ սերմնիկ մը, ստուեր  
 Մը, զիս շոգի մը կը կարծեմ,  
 Եւ յաւիտեան պիտ' ուզէի  
 Որ տեւէր այս ժամը, որ միշտ  
 Եւ յաւիտեան զգայարանաց  
 Տեւէր այս քունը երկնաւոր....  
 Ո՛վ գիշեր քաղցր, ամենաքաղցր,  
 Ո՛վ քաղցրութիւն գիշերային....  
 Շաղապատող լօշտակներուն՝  
 Մօտէն՝ դեղին աչքերն ինծի  
 Կը նային.... Ո՛հ, նայեցէք այս  
 Արդարեւ նոր հըրաչք մըն է.  
 Նայեցէք, ո՛հ, ո՛հ, նայեցէք.  
 Ահա ապրող մը երջանիկ....  
 Իցի՛ւ տեւէր, տեւէր միշտ, միշտ

Այս խուսափուկ հանգիստը, ո՞վ  
 Ըսթանչելի դու տիեզերք,  
 Որ պաշտէի քեզ....

Կասկածոտ

Կը հընչէ փող մ'անդորրութեան  
 Մէջ խոր.... Լոութիւնը, բըռնի քունն,  
 Հոծ սենեկի մը ծանրը շունչն,  
 Հընչիւնն ասոնք է կը պատմէ  
 Գիշերուան.... Ժամը ձեզ ի զո՛ւր  
 Կը հրաւիրէ, ո՞վ եղբայրներ  
 Ծանրաթախիծ, ազատ երկնից  
 Տակ, բացօթեայ, այս հոտանոյշ  
 Օդին ծաղկած այծտերեւին,  
 Ծաղկափըթիթ ճենողկուզին,  
 Զով բուրումին, զոր յետ երկայն  
 Վայելումի, արեգական  
 Համբոյրներուն տակ բոցավառ,  
 Կ'արտաշընչին յազ կըշտապինդ  
 Խոտերն ու տունկ, մինչդեռ գիշեր  
 Շարժելով թեւն անոնց վըրայ  
 Կը յորդորէ զանոնք բեղուն  
 Հանգիստներու.... Ի զուր ի զուր,  
 Ո՞վ փակուածներ ապականեալ  
 Տուներու մէջ, իրկունն ըզձեզ  
 Կը կանչէ, այս լայնածաւալ  
 Գեղեցկութիւնն, այս ովկիանն  
 Անծայր ոսկի հիւլէներու  
 Բաբախուն, ուր մոռացօնքի  
 Անդորրութեան մէջ կը սուզի  
 Հոգին ցաւած և անհանգիստ:

Ո՛վ հղբայրներս, ինչո՞ւ ձեզմէ  
 կը խըլեն այս ժամուս քաղցրիկ  
 Արեւոցութիւնն. ուրիշն ինչո՞ւ  
 Պիտ՝ աւելի հանդարտօրէն  
 վայելէ զայն. ինչո՞ւ պիտի՝  
 Անպատըստար՝ թըշնամիէ  
 Զվախէ, գոռոզ հրաւէրներէն  
 կամ կըտղուցքէն ժողովուրդին  
 կամ հալածչաց բուռն թափէն։  
 Է՞ր, թէ անոր՝ յիմարութիւնն  
 Յաղթէ, ինքն ալ նոր ստացուածոց,  
 Եւ աւելի լայն տէրութեանց՝  
 կարենայ ինքն ալ հըռչակել՝  
 Լուրն ազգերուն՝ որոտումի  
 Բարբառներով. և ունենայ  
 Պատրաստ ըզձեզ, ո՛վ հղբայրներ,  
 Երիտասարդ բոլոր արիւնը  
 Թափելու, և լան պառաւ  
 Մայրերը, լայ ձեր օրիորդն  
 Ու նախճիրներ մաղթէ բոլոր  
 Ախարհի. Ո՛վ անմեղ աստղեր,  
 Լուսակարկաչ աստղեր, ըսէ՞ք.  
 — Ամբարիշտ գործ չէ՞ ասիկա։  
 Զէ՞ աւելի վայել շամբուշ  
 Գազանագոյն գազաններուն  
 Քան թէ մարդոց՝ բարձր մըտքով՝  
 Որոնց առջեւ լոյս կը սըփռէ  
 Բանն՝ երկրաւոր ցայգին մէջէ,  
 Յուցնելով յայտ թէ ընդունայն  
 Ու խօլական է ամէն ինչ  
 Բաց ի ներքին, անդուլ, չըքնաղ

Ու վեհ ճիգէն՝ դէպ անհրաժեշտ  
 Ալ դժուարութեամբ մարդկային ելքն  
 Անելի լայն հոսանքներու  
 Մըտածումի, ազատագոյն  
 Գիտակցութեանց, այն միշտ քողուած  
 Ամենագոր բայց դիւթանքին,  
 Որ մութին մէջ կ'երեւայ մեզ  
 Եթէ նընջեն զգայարաններն,  
 Ու մերթ մեզի կը փայլակէ  
 Երկընթի լոյս անտաններուն  
 Միջեւ, ու ամէն իրաց անհուն  
 Գեղեցկութեան. ու կը կանչէ  
 Ու կը քաշէ մեզ և կ'ուզէ  
 Պատրաստ ըզմեզ իր հրամանին,  
 Վերանալու ցից, անհամար  
 Սանդուխներէ՝ դէպ ի ծածուկ  
 Բարձունքն՝ ըզմեզ վրիպումներէ  
 Ազատելով ու զըտելով  
 Մեր էութիւնը միշտ և՛ այս  
 Կարելի, ո՛վ աստղեր, տեւէ  
 Եթէ գիշերը սըրտերուն  
 Մէջ: Ո՛վ աստղեր ամբիծ ու ջինջ,  
 Դուք լաւ գիտէք որ առանց այս  
 Փառքի մոլի ծարաւներուն  
 Վատախտարակ ժանտ հրոսակին,  
 Որ դարերէ ի վեր լեցնել  
 Կը ջըրդի միտքը մարդերուն,  
 — Մարդկային այս վըհերն անյայտ, —  
 Պիտի կըրնար իւրաքանչիւր  
 Ոք ունենալ պատառ մը հաց,  
 Ունենալ շիթ մը սէր, առանց

Կըռիւններու, առանց դըժնէ  
 Խըժդըժութեան և դըժընդակ  
 Գերութեան: Չէ՞ աշխարհը այս.  
 Արեւն ամէնքը չի՞ տաքցներ.  
 Չի՞ հասունցներ հունձքն ամենուն  
 Համար. այս կարն արտորանքին  
 Մէջ մենք միայն կը կարօտինք  
 Քիչ մը հացի, պուտ մը սիրոյ.  
 Միակ յուսով մը ուղղըւած,  
 Ինչո՞ւ եռանդը մի և նոյն  
 Պիտի չմղէ հոգին. ինչո՞ւ  
 Պիտի նոյն գեղը չըվառէ  
 Ջայն, է՞ր պիտի մեզ չըղըրդէ՛  
 Գաղտնածածուկ մարտերու՝ նոյն  
 Վեհ գաղափարը. վերանա՛լ:

## Օ Ր Ա Գ Ր Ի Է Ջ

Ջինջ և տըխսւոր օր...՝ հոգւոյս մէջը ունիմ  
 Նորօրինակ ձայն մ'որ կու լայ անծանօթ  
 Յաւ մը... Նըման քնաչըրջիկի մը երկինք  
 Կը նայիմ ես, դաշտավայրին կը նայիմ,  
 Ու արեւուն զառամ, զառամ այս երկրին,  
 Եւ կեանքի այս ժամըս ես հոս կը նշանեմ  
 Ու կը կեցնեմ. լոյս է արդէն. կը ժըպտին  
 Դաշտերը բայց մեւամաղձիկ ժըպիտով:

Փոքրիկ տընկոց և խոտերուն ընտանիքն  
 Առաւօտեան սառէն խոցուած, գըլխիկոր,  
 Մեւամաղձոտ շարժուձեւով մը կարծես

Կը մըրմընջէ հողակոշտին. — « Լ'մընցած է » .  
 Եւ տերեւիկ մ'անտես թելով մը կախուած՝  
 Առանց հովի իսկ կ'երերայ, ու կ'ըսէ  
 Կարծես թէ իր տըխուր ճիւղին ճօճելով  
 Միօրինակ. — « Մենակ էս չեմ ուզեր, չեմ » : —

Անանային այս ժամը շատ կը նմանի  
 Յոզնած հոգւոյս, ուր թէ ցոլայ ցընցումի  
 Ճառագայթ մ'է՛ մընաս բարովը մաղձոտ  
 Երբ արեւու մ'որ յաղթըւած, անձնատուր  
 Կ'ըլլայ ձըմբան... Բայց երազի մը նըրբին  
 Թելով կախուած, յոյս մը յետին թառամած,  
 Կը բարախէ տերեւիկին այն նըման,  
 Կը ըողաթէ թ'նս ալ խորհիմ. — « Լ'մընցած է » :

## Ե Ր Ա Ջ Ի Ս Մ Է Ջ

Երազիս մէջ մարգագետին մը կայ կանանչ  
 Բոլորովին,

Երկու լերանց միջեւ, ու խոտը կը զոփայ  
 Շուքին շունչէն...

Անդին՝ կ'երգեն՝ արեւուն մէջ,  
 Բայց երգն հեռուն կ'երթայ և հուսկ կը կորսուի...


Աւելի լուռ

Եւ ամայի

Երազիս մէջ կը մընայ այն մարզը կանանչ :



ՋԱՐԹՈՒՄ



## Զ Ա Ր Թ Ո Ւ Մ

Ինչպէս ներքեւը ձիւնին՝  
Ուր կը նընջեն խոտերը քուն մը խորունկ  
Երագելով մայիսի  
Երկինքն, երբեմնն ճաճանչ  
Մը կը մըտնէ ներս տաքուկ  
Սիրահարուած բերանի  
Համրոյրին պէս. ու հազիւ թէ կը հասնի  
Ճիւղիկն առոյգ կեանք կ'առնէ.

Այսպէս և իմ խոր քունէս  
Կ'արթընցընէ ահա քու տաք խօսքըդ զիս.  
Ու դըժընդակ տաղտուկէն  
Կը վերցընեմ գլուխս ես ալ  
Նըման տունկին՝ կըծկըւած  
Արդէն սառէն՝ որ տերեւ  
Կ'արձակէ, իր ցօղունը զիրգ կը վերցնէ  
Վարչամակին վըրայ ծանր:

Ալ թէ ձըմնուը ցուցնէ  
Յամառ խրոխտանք, և ուրիշ ձիւն ալ սըփռէ,  
Ան նոր բողբոջն իր վերջին  
Կը սպասէ ալ իրիկուան.  
Զայն կը պահէր թըմրութիւնն.  
Արթընցած կեանքը սակայն՝  
Վիրաւորուած կըրկնակի՝  
Պէտք է մեռնի առ յաւէտ...

Գուցէ այդ բախտն ունենամ:  
 Եւ եթէ յիս կեանքոս քընքուշ նըշոյլին  
 Ճամբան դառնայ խաւարչուտ.  
 Դառնան մըրըրկին կայծակներն,  
 Եւ զիս թողու, հեռանայ  
 Հաւատքը վեհ, գերագոյն,  
 Վերջին անգամ պիտի գըլուխըս ծըռեմ  
 Պատերազմին մէջ վերջին:

## Ա Ր Ե Ի Ո Ի Ն Մ Է Ջ

Արեւուն մէջ կ'ուզենք ազատ համարձակ  
 Կտաւաքադին, թըխկատարին պէս երգել.  
 Սիրտը կու լայ եթէ խօսքերը թող լան,  
 Ժըպտի մտածումն երգերն եթէ կը ժըպտին:  
 Մերթ ծաղկագուարն ու մերթ երաշտ մենք ուղին  
 Պիտի ընտրենք՝ երազն ինչպէս որ ուզէ.  
 Այսօր քաղենք պիտի եղին, ու կըռուող  
 Ռթոզ, վայրը... լեռներու վրայ մանիշակ:

Բնութեան առողջ ու զովագին շունչերուն  
 Պիտի բանայ թեւերն հանդէպ գաղափարն  
 Ազատ, ուժեղ, արթընցնելով կենդանի  
 Ջըլարթ սարսուռ մ': Անծանօթից արձագանգ,  
 Հեռաւորաց մաղթանքներ, ո՛չ ափ յափոյ  
 Դիւցազնեղոս, և ոչ անմահ հսկաց,  
 Ալ թափառիկ եղբայրներու երկրի վրայ:

## ԻՐԻԿՈՒՆ ԱՊՐԻԼԻ

Կ'երթան օդին մէջէ զբարթ. հիւճիւով  
 Երծեանակներն: Ի՞նչ անուշիկ ժամ: Հատորն  
 Որ կը սպասէ բաց ծունկերուն վրայ, կարծես  
 Ըզգըլխանքի սարսուռ մ'ունի ու ապրող  
 կարծես էջերն իրենցմէ  
 կը դառնան յամբը շեշտով  
 Յածէն ըսուած խօսքերու...

Մըտիկ կ'ընեմ ու կ'ըմբռնեմ... Ո՛վ սիւք քեզ  
 Ո՛րչափ օր է կը սպասէի. կը հասնիս  
 Արդ գերդ երբեմըն... բերելով թարմ բոյրերն,  
 Հըրաւէրներն յանդուզն, երգերն ու ժըպիտն  
 Յաւիտենից՝ Ապրիլի...  
 Բայց ի՞նչ այս նոր խինդն օգուտ՝  
 Չըմեռ է երբ սըրաիս մէջ: —

## Ս Ի Ի Ք Ը

— « Չեմ գիտեր ո՛վ ես, չեմ գիտեր այդ անցեալ  
 Յընծութիւնները զոր կու լաս: Ակամայ  
 Են զըզուանքներս ու համբոյրներս. փոյթս ալ չէ  
 Մահկանացուաց երազներն. եմ ձեզի պէս  
 Հնազանդելու ստիպուած ես  
 Անծանօթին, պարապին մէջ  
 Կ'երգեմ կ'անցնիմ վրէժով լի »: —

Ո՛վ աըխուր սիւք, անցի՛ր անցի՛ր բայց լըռէ,  
 Երազն հոգւոյն ձըզէ, գաղտնիքը լըռէ.

Իր նուրբ, կըրծող թոյնովն արդէն շատ բան մեզ  
 Բտտուգութիւնը կը յայտնէ. խոշտանգուած  
 Քաղցր է մըտքին՝ մըտածել  
 Որ դուռն անմեղ դըստրիկն հս  
 Լուսապայծառ հրկընքին:

## Ս Ի Ի Ք Ը

— «Շոյել, ծըծել անուշ բոյրերն, ու կըրել  
 Թիթեաներու թեւերն ինծի տաղտուկ մ'է  
 Եանր, աւելի՛ ծանր այն որ չեն տեսներ իմ  
 Քաշածս: Այսօր թող յայտնելի դըժընդակ  
 Ճակատագիրս. ու գիտնան  
 Որ ծաղկունք զիս սիրեն ալ  
 Ես զիրենք չեմ սիրեր բնաւ:

Պիտ՝ ուզէի... ազատ, հըզօր՝ ունենալ  
 Հովին թըռիչքն, ու ցընցել բարձրը բաշերն  
 Հացիներու, խլնլ կաղնիներն յաղթանդամ,  
 Անդունդ թափել Ապեանց անշարժ ճակատներն,  
 Ըլլալ Աստուած և կամ դեւ,  
 Գիտակից, միծ, կամնցող» —

## Հ Ո Վ Ը

— «Հոտ վարն ինձ ս՛վ կը նախանձի. կը վազեմ՝  
 Յոգնած՝ լիոներն ու անիծող ծովերն հս,  
 Այն անծանօթ կամքով որ զիս կը դըրդէ.  
 Հիւսերն առջիւքս կը տեսնեմ. քաղաքներ  
 Փլատակներէն կըլլըւած,  
 Աւազներէն մըրըրկայոյզ՝  
 Կարաւանները թաղուած,

Եւ ի՞նչ օգուտ անոնց վերայ իմ յուզուիլս .  
 Անագորոյն գազանութեամբ կը ստիպէ  
 Բախտը միշտ զիս, և աւերածն՝ ուր որ ալ  
 Շարժիմ՝ ինձի կը հետեւի: Ո՞ր հոգին  
 Վատ՝ աչք ունի վիճակիս:  
 Չեմ՝ զի հըզօր՝ աւելի  
 Թըշուառական ու գերի ք: —

Վերջին շառայլ մը կ'արձակէ արեւմուտքն  
 Իբր հըրդեհի, յետոյ քուր կը սքողուի  
 Ու կը հանգչի: Հատորըս ես գոցելով  
 Վեր կը նայիմ խորհըրդաւոր կամարին,  
 Կապոյտ չըքնաղ ըսփիւքսին,  
 Ուր նախկին աստղը հեզիկ  
 Կը ժըպտի տաք ողբերուն:

## Հ Ր Ա Ժ Ե Շ Տ

Ասպետ մ'անոր դուռը հասաւ և ըսաւ .  
 — « Այտերդ ունին մոմերու գոյն, մարած է  
 Աչքըդ. ու քու մազերուդ  
 Սեւագանգուր փունջին միջեւ ոլորուն,  
 Արծաթ թելեր կը շողան: Ի՞նչ կը սպասես  
 Ա, կը լըսե՞ս ժամերն ահա կը զարնեն:

Կը լըսե՞ս... են վերջին ժամերը՝ վերջին  
 Առուզութեանդ. վերջին շողիւն մ'իրիկուան,  
 Եւ ըստուերներն ուղիսօրէն  
 Պիտի տեղան այլ եւս. հոգին չի դողար

Տարակոյսին հանդէպ անանց գեշերուան...  
Քեզ կը ձօնեմ վերջին երազն. ես Սէրն եմ:

Իջիր, փախիր, օ՛ն, ինծի հետ որ Սէրն եմ,  
Ամէն հըրճուանքն ու բոլոր գեղն աշխարհի  
Պիտի ճանչնաս վերջապէս:

Չե՞ս լըսեր դուն: Ժամերն ահա կը զարնեն,  
Ու կը սըտէ գուցէ խոստումը վերջին,  
Ու կը խըզէ մահը յուսոյ թելն յետին»:—

Պատասխանեց նէ. — «Հոս մինակ եմ, ս՛վ Սէր,  
Պառաւ մօրս հետ: Արքայութեան յոյս չունիմ,  
Ոչ ալ երկիւղ դըժոխքէն.

Բայց զինքը ես թողլըքելու չունիմ սիրտ,  
Ե՛ս իր ցըրտին ձըմբան տաքուկ ճառագայթ,  
Ե՛ս՝ որուն նախ ինք ժըպտեցաւ երկրի վրայ»:—

## Հ Օ Ր Ս

Յիշողութեանըս մէջ միշտ, ս՛վ սիրելի,  
Կենդանի ես: Կը տեսնեմ քեզ որ ծըռած  
Երնծղային վրայ՝ դուն կը փընտոնես անուշակ  
Տարիներուդ նախկին երգերը պարզուկ.

Երգեր՝ լըսուած արմաւենեաց շուքին տակ,  
Եւ գեղեցիկ իրիկունները ոսկի.

Մերթ հանդէսները, մաղթանքները, լուսեղ  
Երազն որ բնաւ չի մոռցըւի՛ր՝ կը լըսեմ  
Որ կը պատմես քու մանկութեանդ՝ Ասիոյ  
Արեւուն տակ ծըլած ծաղկած, հոն ճերմակ  
Սիւնամէջքին միջեւ շըքեղ պալատիդ,



Քու վայրենի ծովուդ հովին տակ, և կոյս  
Անտառներու միջեւ, և կամ կը լըսեմ  
Որ Աստուծոյ վրայ կը խօսիս դուն վըսեմ  
Շեշտերով... Ո՛րքան սիրեցի և ո՛րքան  
Կը սիրեմ քեզ, և ո՛րքան քեզ կը կարդամ:

Ամարոցիդ արդ ամայի է գաւիթն,  
Ուր հաճոյքով կը ճեմէիր դուն երբեմն  
Օրհասական օրուան երբ լոյսն ամէն ինչ  
Կը խաղաղէր. զանգակն Ողջոյն կը հընչէր:  
Կը բանայիր ճերմակ գըլուխդ այն ատեն,  
Մարգարէի այն քու գըլուխըդ ճերմակ,  
Ու կը լըսուէր որ ցած ձայնով ու ամփոփ՝  
Կը մընչէիր ողջոյնն առ կոյս Մարիամ...  
Յետոյ երկայն ատեն անշարժ, սեւեռուն  
Կը կենայիր քնացած դաշտին դու առջեւ,  
Ըստուերներու վարագոյրին առջեւ լայն՝  
Ջոր իրիկունը կը քաշէր, ու պիշ պիշ  
Կը նայէիր դէպ ի վեր, վեր, կորսըած  
Ան անսահման անդորրանքին, այն անհուն  
Անմեղութեան մէջ երկընքին:...

Ու ես դեռ

Կը կարծեմ քովդ ըլլալ, և ինչպէս երբեմն՝  
Եւ արդ իսկ ես իրօք տեսնել կը թըլիմ  
Բաց, սեւեռուն դէպ ի աստղերն այն քու մեծ,  
Ան ներընչուած աչքերդ, ո՛վ հայր իմ սիրուն:...

Մեծ հառաչով մ'յետոյ յանկարծ ցընցըւած  
Կը դառնայիր մեր քով դէմքով մը ժըպտուն,  
Եւ բոլոր զուարթ կատակներ, ճիշդ այն կերպով  
Որով ներում կը ճըզնի մէկը գըտնել

Յանցանքի մ'... Ո՛հ, ինչպէս ես յայնժամ և  
 Քեզ աւելի կը սիրէի, և ինչպէս [միշտ  
 կը հասկնայի քու սիրտը մեծ, ո՛վ իմ սուրբս:  
 էիր մեզմէ, ինծմէ հեռուն փախած դուն,  
 Եւ մարդկային ամէն իրէ. Աստուծոյ  
 Գաղտնիքը մեծ և անձկութիւնը զօրեղ  
 Յափըշտակած էին ըզքեզ վե՛ր ու վե՛ր...  
 Մոռցած էիր դուն մեր աշխարհը փոքրիկ,  
 Մարդկային մեծ հանգոյցը մեր: — Վայրկեան...  
 [նե՛ր -

Եւ սակայն դուն կարծես թէ խիղճ կ'ընէիր,  
 Ու դէպ ի մեզ կը դառնայիր, վառվռուն  
 Նոր զըզուանքով, պատրաստ մեզի ձօնելու  
 Գորովանքի, սիրոյ քընքուշ հատուցում  
 Մ'այն մոռացման կարճ ընթացքին իսկ համար:  
 Երկընքի մե՛ծ փափաքն այսպէս հանելով  
 Մըտքէդ, էիր աստուածային, նախադաս  
 Համարելով քու կիններուդ բարիքն յար  
 Քան մեծ, գաղտնի քու հառաչանքդ, ու հոգևոյդ  
 Յաւէժական երազն...

Ո՛հ, ինչպէս դըժբախտ  
 էիր, երբ մին հատորներէն քու սըրտիդ  
 Քեզ կ'երեւար տըխուր, ցասկոտ կամ լըքեալ,  
 Եւ ինչպէս դուն քաղցըր փութով մը անոր  
 կը հարցնէիր պատճառը, միշտ ունէիր  
 Ըսփոփանքի բառը պատրաստ, ու ամէն  
 Բան, կ'ըսէիր, կը փոխուի, միշտ շնն տեւեր  
 Ամպոտ օրերն, ու տազնապի ժամերուն  
 կը յաջորդեն ուրախ վայրկեանք, ու զըլարթ  
 Առածներով, ու խաղալով տղայաբար,  
 կը ջանայիր շիթ մը ժըպիտ կաթեցնել

Հետ և ըմբոստ շըրթներուն վրայ տանջուողին.  
 Ու ինչպէս վարժ՝ գուշակելու այն դէմքէն  
 Նախ չըթանալն ըստուերներու, և ինչպէս  
 Այն ատեն, այն ատեն միայն քուկինդ ալ  
 Ուրախութեամբ կը փայլէր: Մէկը քեզի  
 Եթէ անգութ դէպք մը պատմէր, ու ըլլար  
 Իսկ անծանօթ քեզի, հեռու իսկ քեզմէ  
 Բախտէն զըրկուողն, ըլլար բարի, ապիրատ,  
 Իբրեւ քու ցաւդ ըլլար, ըլլար քու տագնապդ,  
 Անոր վըրայ կը յուզուէիր դուն սաստիկ.  
 Եւ զըրգըռուած ու վառ դէմքով մ'անդադար  
 Կը կըրկնէիր, լաւ էր, ս'վ Տէր, ս'ն լաւ էր  
 Որ չըլլայի ծընած, ու այն տանջանքներն,  
 Անարգանքներ այնքան, այնքան նախատինք  
 Չըտեսնէի, Տէր իմ: — Յետոյ զըղջացած  
 Այն խօսքերուն վըրայ՝ նըկուն ճակատով՝  
 Կ'աւելցնէիր. — Քու կամքըդ, Տէր, կատարուի...

Ես կը տեսնեմ քեզ ու կը զգամ ես իրօք  
 Ամբոխեալ շեշտը քու ձայնիդ, և անոր  
 Մըրըկոտ գանգիւնը կ'ունկընդրեմ տակաւին  
 Տրոփող սըրտիդ դողումին մէջ... Եւ ս'վ այն  
 Որ օգնութեան համար քեզի դիմելով՝  
 Դըժգոհ մեկնած ըլլայ. և ինչպէս ճարտար՝  
 Կը զըտնէիր ծածկելու կերպը սուրբ գործդ:  
 Աստուածային պատուէրն յայտնի էր սըրտիդ  
 — Թող լրգիտնայ ալն ինչ որ միւսը կու տայ. —  
 Եւ ազատած ու գոհ իբրեւ կապանքէ  
 Քու անդամներդ՝ կը տեսնէիր որ կ'երթար  
 Հէքը լուծուած՝ սըրտով մը գոհ և ուրախ:  
 Տաճարին մէջ կ'աղօթէիր երբոր դուն,

Հոգիդ բուր կ'արձակէր վառ փայլակներ  
 Ու կայծակներ բուռն՝ խոշոր աչքերէդ,  
 Ըղձակաթ թեւ թոփչ առնելու. և հազիւ  
 կը զըսպէիր ձայնը, գրեթէ աղօթկեր  
 Շըրթուձփներու կարօտելով, երգելու  
 Բարձրը՝ սըրտէդ դուրս պոսթկացող գովեստ-  
 Ես կը յիշեմ որ տաճարէն ելլելուդ՝ [ներն.  
 Դէպ ի այիրն ու արեգակ, մէկն եթէ  
 Հետըդ խօսէր, էիր նըման դուն անոր՝  
 Որ կ'արթըննայ յանկարծ օտար երկրի մէջ,  
 Եւ տակաւին քընէած՝ զոր կը ճըզնի  
 Գուշակելու նոր լեզուին միտքը թագունւ:  
 Արդ կը հանգչիս: Հանդէսներէ ձանձրացած,  
 Հեռու քաղքին պերճանքներէն, գիւղական  
 Գերեզմանին մէջ ուզեցիր նընջել դուն:  
 Քընարանիդ քարին վըրայ չի ճընշեր  
 Անթափանցիկ կամար շիրմի մ'հոյակապ,  
 Ոչ քաղցր ակնարկը կ'արգիլէ երկընքին  
 Որ կը հըսկէ անոր վըրայ: Շուրջդ ունիս  
 Դուն ծաղկընէր առոյգ. ապրիլ ամսուն մէջ  
 Խընկաբոյր հոմն անոր կ'անցնի վըրայէն,  
 Ու բարեգութ կ'իջնէ լուսնակը դէպ հոն  
 Գիշերային ըստուերներուն մէջ՝ քնարանդ  
 Համբուրելու. և այն աստղերը, սիրո՞ւն  
 Այն աստղներն յիշելով քու նայուածքներդ  
 Երկայն, և քու հիացումներդ երկայն,  
 Անոր վըրայ կեցած փայլակ կը ղըրկեն  
 Եւ պատգամներ աստուածային դէպ ի վեհ  
 Հոգիդ՝ որ բնաւ չեղաւ այնպէս գիտակից  
 Ու երանիկ՝ ըզգալով թր բարախելն՝  
 Ողջ մէկ հիւլէն Տիեզերքին՝ յինքն Աստուած:

## Խ Օ Ս Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն

Մենք կը խօսինք, բայց գիտեմ  
 Ես ինչ որ դուք իրաւցնէ  
 Կը մըտածէք. և գիտէ՞ք  
 Դուք ինչ որ ես կը խորհիմ:  
 Կ'երթան խօսքերն, ու յաճախ  
 Ժըպիտի քող մը բարակ՝  
 Կը ծածկէ միտքը անոնց:

Կը խօսինք մենք... Բայց ուրիշ  
 Զայնի մը դուք կը լըսէք  
 Շեշտը, ես ալ կը կարծեմ  
 Ուրիշ շեշտի մը լըսել  
 Տարօրինակ արձագանգն...  
 Այն երկուքին ալ՝ երկու  
 Գիրեզմաններ կը խօսին:

Կը ծիծաղինք մենք նաեւ,  
 Կը ծիծաղինք, ու սրամիտ  
 Խօսքի մ'աշխոյժ փայլակով  
 Աչքերնուս մէջ կը ցոլայ  
 Խինդն: Ո՞վ ուրեմըն սըրտին  
 Ի՞նչ անդունդին մէջ արդեօք  
 Հեղեղօրէն կ'արտասուէ:

## Ե Ր Ա Ջ

Բոսպիկ ուտրով, Դամոն, ես դաշտ չեմ երթար,  
 Ոչ ալ երբեք բազուկներով հուանի,  
 Եւ ոստալից ձեռքիս մէջ բարձրը բըռնած  
 Ճըպոտն՝ երինջը չէկ աղբիւր քըշեցի.  
 Ոչ կը մանեմ նըլաստ կանեփն, և ոչ ալ  
 Հընձանին վրայ կ'ելլեմ գինի կոխելու՝  
 Ազեկութի նուիրուած օրերն՝ օրերն այն  
 Չուարթ երգերու, տարփանքներու: Չըճանչցայ  
 Աստուածային ազատութիւնը երբեք.  
 Չըտեսայ բնաւ մեծ քաղցրութիւնը գոնէ  
 Տուն դառնալու ամառ իրկունն հետն անոր՝  
 Որ օրն ի բուն յօտոցիս մօտ շողացուց՝  
 Ահօսներուն միջեւ՝ իրենք: Դառնալ  
 Աստղերուն տակ, յոգնած՝ սակայն երջանիկ,  
 Այնքան ուրիշ ընկերուհեաց ի միջի,  
 Եւ սակայն հետն անոր՝ մինակ, լըռելով  
 Եւ սակայն այնքան սիրային հեշտ խօսքեր  
 Ե՛ւ լըռելով և խօսելով...: Ո՛հ անհուն  
 Ուրախութիւն, անհուն երազ բերկրաւէտ,  
 Որ զիս՝ փակուած հոս մետաքսէ որմերու  
 Մէջ՝ կը վառէ խօլ տենչանքով մը կեանքի:

## ՀԵԳՆՈՒԹԵԱՆ ԵՐԳԸ

Խաւարչուտ մութը կ'իջնէ վար. բայց ի՞նչ փոյթ  
 Երգենք — աստղերն, արշալոյս:  
 Ժամանակին բաւական ցաւ քաշեցինք,  
 Հերիք արցունք թափեցինք:

Երագընթաց կը հոլովին տարիներն.  
 Երգենք — ծիծառն ու մայիս.  
 Միթէ գառամ փեկոնը չի՞ գեղգեղեր  
 Ճիւղէն երբ բոյն մը կախուի:

Երագներու այսպէս յօժար գըլխուս մէջ  
 — Երամ մ'իր բոյնը դըրաւ.  
 Ուրկէ՞ գաղթեր են չեմ գիտեր, բայց կ'երգեն  
 Կը գեղգեղեն հըրճուանքով:

Հովին պարե՛րը լայն, վտակներ — զոր Մայիս  
 Կ'առաջնորդէ խոտերուն  
 Դողին մէջէ, բլուրներն ի վար՝ գինովներ  
 Իբրեւ լոյսի և խինդի.

Լերան քունին վրան աստղազարդ գիշերներն —  
 Անտառներու բոյրն ու խունկ  
 Արշալոյսի ջինջ ծաթելուն, ծովուն վրայ  
 Արեւմուտքին գեղը վեհ,

Հըգօր իրերն, իրերը զուարթ — չեն գիտեր  
 Անոնք ուրիշ բան... ի՞նչ փոյթ  
 Եթէ դարան մը կը ծածկէ կապուտակ  
 Ամենդութիւնն ալիքին.

Ի՞նչ փոյթ վըհերն, և թէ արեւն ամէն տիղմ  
 Կ'սսկեզօծէ, կ'անեցնէ  
 Եւ հոտած շուրն առոյգ կոկոռն, ու կ'սողայ  
 Մաղիկներու մէջէն օձն,

Եթէ լուսոյ յանկարծ դըռները բոլոր  
 Կը փեռնկէ, կը պարզէ  
 Բարւոյ, շարի գաղտնիքը մեծ կենսական  
 Մահուան անհուն բարութիւնն:

### ԴԱՐՁԵԱԼ ՀԻՆ ԴԱՐԱՍՏԱՆ ԻՆ ՄԷՋ

Մեր տունկեր, դու վագուն շուր,  
 Ուզածն ինծմէ ձեր ի՞նչ է.  
 Ամենագօր բառը գուր  
 Կ'ուզէք սըրտիս մէջ ալ չէ:

Տըւի ձեզի օր մըն էր:  
 Օ՛ր մը՝ գոյները և երգ.  
 Ո՛չ ներկեր, ո՛չ թըրթռումներ  
 Ա՛լ պիտի տամ ձեզ երբեք:

Ջուր, կ'անցնիս լուռ շուքին տակ,  
 Եւ չես գիտեր քու վախճանդ.  
 Դէպ անծանօթ նըպատակ  
 Կ'ընթանաս դուն հընազանդ:

Արեւուն տակ և հովուն  
 Կ'անէք՝ տունկեր ծեր՝ դուք ալ.  
 Եւ չի տար կոյր հաճութիւն  
 Ձեզի տըխրել կամ ցընծալ:



Ասպէս ահա կը կըրէ՝  
 Անտարբեր՝ իր ճակտին գիր  
 Սիրտըս՝ ուր վաղ մեռեր է  
 Խօսքն այն հըզօր, կենսակիր:

## Ե Ս Ա Ի

Հեղեղներու շառաչիւն,  
 Երկինքներու ըորրօքում.  
 Մոլուցքն ու հեւք պախուցաթափ վազքերու.  
 Փայլակն ու սոյլ սլաքներու  
 Փախչող վայրի երէններուն ետեւէն,  
 Եւ հեզանազ ժըպիտ խարտեաշ աստղերու.  
 Եւ հովիտներ խորափիտ՝  
 Մաղթանքներով լի՝ լուսնակին ծաթելուն.  
 Կամ թէ այգուն՝ հետ տունկերուն, խոտերուն,  
 Մարգերուն մէջ ամայի,  
 Ճօճել սրբսփալ խընծիղներով բուսական՝  
 Գըրկուճներէն հովին, արփուոյն խածուածքէն,  
 Արփուոյն՝ որ դէմք կը սեւցընէ, ու տըտիպ  
 Պըտուղներուն մէջ կը ծորէ մեղր անոյշ.  
 Ահա ասոնք կը սիրէիր, ո՞վ ամբիծ  
 Եւ ջինջ հոգեակ դու պատանուոյ, քերթողի.  
 Վառ՝ կըրակով մ'որ երբեք չի շիջանիր,  
 Սիրտըդ, արիւնդ և զօրութիւնդ ահ՝ ասոնք  
 Կը ծըծէին ծարաւ մարող ջուրի պէս:

Կը լըրտեսէր դաւը վազրի աչքերով:  
 Կը լըրտեսէր ան թաւուտին մէջ՝ ուր դուն  
 Եռանդնավառ՝ անգէտ՝ որսի կ'երթայիր.

Կը լըբտեսէր ան հրատուր փուշոյն վրայ  
 Թեթիւ ուտիդ հեռքը ու ճիգը երկայն,  
 Ու պարտասիլը կորովիդ, անձկութիւնդ:  
 Եործորներու, դարվերներու, ամայի  
 Միայնութեանց մէջէն լըռիկ, աներեւ,  
 Գաղտնածածուկ պատուիրանի մը հասու,  
 Ան կը լարէր իր դարանն,  
 Ու քեզ բըռնեց, յաղթեց քեզի, ժիրաժիր,  
 Գուշակելով խոնջէնքդ ու քաղցըդ սոված:

Ու վաշխը այն յաւիտեան  
 Դըպրոց եղաւ յեփններուն. ժանտ բողբոջ  
 Պըտուղ տըլին. բայց ինչ մեղք, որ յանցանք  
 Կը քաւէիր մինչ ծոցին մէջ մայրենի: [դուն  
 Զնոքը կակուղ, դիւրաբեկ  
 Երնանելիք քու եղբօր,  
 Իօրայէլին ապագայ,  
 Փախըստական աղջիկներուն լարանու  
 Անխոցելի առաջնորդին ձեռքը չէ՝  
 Որ քեզ բըռնեց և ուզեց  
 Քու իրաւունքդ և քու լոյսդ ապշոպել:

Կը տեսնեմ մարդ մը որ ահա կը հազնի  
 Անտառ հոտող ըզգեստներդ,  
 Իր մեղքին վրայ մտածելով,  
 Կը մօտենայ ալէծաղիկ մեծարոյ  
 Կոյր հօրդ ու քու միսդ ու անունդ կը սըտէ  
 Գող աւազակ խօսքերով:  
 Եւ ծերունին՝ հիւժած արդէն և անզօր  
 Կը մըտածէ իր հալումաշ կորովով.  
 — Լաւ կը զգամ ես որ իր խունկերը զօրեդ

Երբեք անոր պատմուհանին մէջ գիհին.  
 Եւ բեւեկնին՝ ծիրանեգոյն հատերով,  
 Եւ մեղրածորըն ծոթրին.  
 Լաւ ես, ես լաւ կը ճանչնամ  
 Անտառային բոյն անդրանիկ իմ որդւոյս,  
 Ու թաւուտին կու գայ քընքուչ շուքերէն: —  
 Ու հաւատաց, և դողդոջուն ձեռքը դրաւ՝  
 Հալածեղու կարծես ամէն չար նըշան՝  
 Անհուն սիրով մ'օրհնութիւն  
 Կարդալով ծռած այն գըլխուն վրայ... մատնըչի:

Այսպէս աստղերը դաւակից՝ վարձ տըւին  
 Եղեռնաթիւր սըտութեան.  
 Կամ թէ գուցէ կը կուրցնէ  
 Մոլորութիւն՝ ապըստամբ միտքըս հետող:

Կը տեսնեմ ես հօտեր անթիւ՝ որ կ'երթան  
 Դէպ ի այգիքը գուշակ,  
 Ու գանձերով բեռնաւոր,  
 Դաշտերուն վրայ ամայի,  
 Երկայն կարգեր ծանրադանդաղ ուղտերու,  
 Որք թաւամազ կուզերով  
 Ճամբայ կ'ելլեն դէպ ի երկիրն աւետեաց,  
 Ծաղկազըւարճ, մեղրաբուխ,  
 Ուր ծըխաշունչ սեղաններու մէջ Յակոբ  
 Պիտի զարնէ իր վըրանները հարիւր:

## Վ Հ Ո Ւ Կ Ը

Անտառէն դուրս, ուր լեռը հենշտ դարձերով  
 Մը կը լայննայ, ամենախեղճ տան մը մէջ  
 Ձոր բարեգութ բաղեղը շուրջ կ'ընդգըրկէ,  
 Կին մը կ'ապրի, պառաւ մը հէք՝ զոր վրճուկ  
 Կը յորջորջեն փայտահարներն անտառին.  
 Այնքան նայուածքն է տարօրէն ու այնքան  
 Ուրուականի դէմքն իր նիհար ու տըժգոյն:  
 Եւ սակայն այս եղկելի ըստուերը կեանքի՝  
 Յաւէրժհարսի մարմին մ'ու դէմք մ'ունեցաւ  
 Թարմ ու վըճիտ. աչքեր՝ ծովու գոյն՝ ամրան  
 Արեւուն տակ, և փառք մ'ոսկի գէտերու:  
 Ի՞նչ մըրըրիկ դըժբախտութեան, կամ մեղքի,  
 Պատեց զայն: Է՞ր կ'ապրի հոն այնչափ այնչափ  
 Տարի կ'ընէ, մինակ, գիշեր՝ ցորեկ, իր  
 Մեծ գաղտնիքով, քիմնաներով՝ զոր իր շուրջն  
 Յիմարութիւնը երեւան կը հանէ:  
 Շատ ու շատ են պատմութիւններն անհեթեթ՝  
 Որ կը պատմեն անոր վըրայ: Կը մընայ  
 (Կ'ըսեն) սուզուած առանց բառ մ'իսկ խօսելու  
 Երկայն օրեր ու շաբաթներ երկայն, ետքն  
 Յանկարծ դարձած դէպ ի անտառը թըմրած -  
 Որ կ'երազէ կարծես՝ ծրարուած ամպին մէջ -  
 Սիբիլայի մը պէս կանգուն՝ իրիկուան՝  
 Ճերմակ մագերն ազատ հովին արձըկած,  
 Կը խօսի ծեր եղեւինին, խոտերուն,  
 Հովիտէն վեր ելլող լուսնին, ամպերուն,  
 Կայծոռերուն, երկայն ժամեր, իբրև հին

Մանօթնհրու։ Անցած զացած օրերուն  
 Վրայ կը պատմէ — օրերուն զուարթ, խուսա,  
 [փոկ]

Մանկութեան. — կամ աներեւոյթ երամի  
 Մ'օրիորդաց կը ձեւացնէ խըրատ տալ։  
 Իրկուն մ'առանց տեսնուելու մօտն եկայ  
 Ես այն հիւղին, ու կաղնիի մը հտին  
 Ելայ կեցայ քարի մը վրայ՝ աստղերուն  
 Լոյսով՝ երկայն ժամեր դիւթուած, կախարդուած  
 Անոր ձայնէն՝ որ նախ մըրմունջ մ'երեւցաւ  
 Ինձ հեզ, հանդարտ, ու երթալով սաստկացաւ  
 Ու զայրացաւ երբոր իր միտքը կ'երթար  
 Հին ցաւերու ճամբուն վըրայ վըշտագին։  
 Ես պահեցի միտքըս ամբողջ, կամ գրեթէ.  
 Կ'ըսէր անի.

— Օրիորդներ, լըսեցէք

Փըրկարար խօսքն, որ կը սպաննէ երագներն  
 Յիմար որոնք կուտան թափել արցունքներ...  
 Ինչո՞ւ համար կը վըստահիք դուք մարդուն,  
 Ու կ'արտասուէք յետոյ, կ'ողբաք։ Կ'ըսեմ արդ  
 Ձեզ խօսքն որ ես ինքըս հրաշքով լըսեցի...  
 Դար մըն է, ո՞վ գիտէ, և ո՞վ կը յիշէ  
 Թէ ե՞րբ էր... Ձայն ինձ ջինջ գիշեր մ'էր ըսին  
 Աստղերն — ու ինձ հետ կ'ունկընդրէր տիեզերքն  
 Ամբողջ (ասոր համար մեռան ծաղիկներն  
 Ամէն), — ըսին. Ան կը սըտէ, կը սըտէ՛. —  
 Ճըշմարիտ էր... Ճըշմարիտ է. կը սըտէ  
 Ու կը կարծէ թէ չի սըտեր մարդ. անոր  
 — Յիշեցէք— չի բաւեր հօգի մը գերուած.  
 Ու կը սըտեն հառաչք, ժըպիտք, նայուածքներն  
 Աղերսարկու, դաշինք, երգմունք կը սըտեն...

Յուշիկ... օձի մը պէս կու գայ տարակոյսն,  
 Ու բամբասանքը կը հասնի, կը գատուին  
 Սըրտերն՝ այսպէս պատահեցաւ ինծի ալ...  
 Թէ՛ կ'ըր էր... չեմ յիշեր, բայց լաւ գիտեմ որ՝  
 Օր մը ստուերի մ'համար այն դէմքը նետեց  
 Գոյնը՝ բիրբերն ինծի գինով թըւեցան,  
 Տեսայ ձեռքերն՝ որոնք շերմէն կըրակուած՝  
 կը զօփային նախանձայոյզ մոլուցքով...  
 Իրաւ տեսայ ասունք... Սակայն յաղթեցի.  
 Յաղթեցի ես այն հըսարտին բարկութեան,  
 Ու ան լացաւ, և Վերջապէս—ըսի ես—  
 Լացաւ, ինծի համար լացաւ. ուրեմն է՝  
 Յըկեանըս, ո՛հ քաղցրութիւն, է, ո՛հ, ցըկեանս. —  
 Ըսի ես այս...

Օրիորդիկներ, համարեմք  
 Ձեր ձեռքն երբեք Տըժգունեցա՞ք առաջին  
 Թեթիւ, երկչոտ համրոյրներէն, որք հազիւ  
 Քըսուեցան ձեր մատներուն... Ի՞նչպէս ասունք  
 կը դողային... Ո՛հ, չըզբըլիէր ձեզ արբշիւ  
 Գինովութիւնն անակընկալ և հրատապ  
 Համրոյրներուն՝ անյագ, ցնորած շըրթներու՝  
 Երբ ցանկութիւնը կը պոռթկայ...

Աշուն էր.

Ապրիլ էր... չեմ յիշեր... Աշխարհը անշուշտ  
 Այնպիսի մեծ առուզութեամբ կը ծաղկէր,  
 Որ վարդերը կը հասնէին աստղերուն...  
 Գուցէ անոր հետ մայիսի հանդարտիկ  
 Իրկունները մարգերուն վրայ ճեմեցի՞ք:  
 Կամ թէ աշնան՝ մէջէն խարտեաշ անտառի  
 Մը անոր հետ: Կամ լըսեցի՞ք Ապրիլի  
 Իրկուն մ'անոր հետ երբ Ողջոյն կը հընչէր...

Յամառ սիւքը կը տանէր ձեր մագերէն  
 Փունջ մը անոր բերնին վըրայ: Թեթեւ էր  
 Այն փունջն ինչպէս թէ փետուր մը...

Զըթուեցաւ

Զեզի որ դուք երազանքով կ'երթայիք  
 Զգայարանաց այն անդորրանքը դէպի...  
 Զըլըսուեցաւ խօսք, դաշինքը կընքուեցաւ...  
 Բոլոր ասոնք՝ անիծեալ օր մ' (ու այն օրն  
 Օդը բոլոր սեւ պիտ' ըլլայ և անշարժ,  
 Մեծ լըռութեան մէջ, և սըրտերն հոգեվարք),  
 Բոլոր ասոնք օր մը դառնան պիտի ծուխ  
 Ու սին ըստուելը ուրիշ բերնի մը յանդուգըն  
 Ժրպիտով, ուրիշ ձայնի մը շեշտովը  
 Փաղաքուշ, լուռ հրաւէրովը ուրիշ  
 Նայուածքի մը, և ուխտապահ աչքդ ի զուր  
 Պիտ' աղաչէ, ու գորովով վառ գողտրիկ  
 Խօսքն, երազներն, ուխտերն, արցունքն ու գը-  
 [գուանք,

Յիշատակներն ամէն տըղմին մէջ պիտի  
 Խորասուզուին ու տըղմին մէջը թաղուին...

Այն կաղնիին հտին ո՞վ է կ'արտասուէ.  
 Յիմարութիւն է արտասուելն ապշութիւն.  
 Ես չըլացի: Ես չեմ լար:

## Յ Ա Ղ Թ Ո Ւ Ա Մ

Արդէն գոցեր է ամէն ծիրպ, վառեր է  
կըրակարանն, ու կը դիտէ զայն սեւեւ  
Քնաշըրջիկի աչքերով. ինք կ'արտորցնէ  
Ըսպատուած քունը, մոռացօւքն, հանգիստն  
[հուսկ...]

Ի՞նչ ձայն է ան... Հոն վանդակէն մոռցըւած  
Եկքանիկն իր մենաւոր մէկ խազն ըսաւ.  
Լոյսի, օդի անձկակարօտ՝ կ'երազէ  
Գուցէ կանաչ մարզն ու երկինքը կապոյտ:

Մեռանելոցը կը նայի ուշադիր.  
Ու դեզեւկոտ յետոյ՝ ձեռքով մարդէն թոյլ  
Մըթին ճամբուն շօշափելով ըստուերներն,  
Վանդակը՝ հոն՝ որմէն ի բաց կը քեցէ:

Կը բանայ դուռն յամբօրէն... Ներս կը մըտնէ  
Անգամ մըն ալ լոյսը ճերմակ. և ուրիշ  
Վերջին անգամ մ'ալ կհանքէն խոնջ արարածն  
Կեանքին ձայները կ'ունկընդրէ՝ խելայեղ...

Ու նորէն մութն... — Ուրիշներճւ աշխարհի  
Չըքնաղ տեսիլն: Սէրն՝ աւելի կորովի  
Խառնուածքներու. սէրն հըզօր, քաղցր, անիծեալ  
Սէրն: Ո՛հ, լըռէ թող բարախուռն յաւիտեան:



## Փ Ա Ռ Ի Ք

Ըզնէ՛ միայն ձայնեց, նէրա համար ան  
Տըքնութիւններ կըրեց դըժնէ, ու նէրա  
Ուղղեց յանդուզըն թեւերով երգն՝ հրատապ  
Սըրտէն բըղխած. ու վերջապէս եկաւ նէ,  
Կը ցայտէին նըշոյլ յօնքերն հրաշալի,  
Անհուն յօնքերը՝ անհունով աուրցուն:

Շուրջի բլուրներն ու դաշտավայրը թըմրած  
Ժըպտեցան զերդ արշալոյսի մը լոյսին:  
Չըժըպտեցաւ քերթողն, ու խրոխտ շարժումով  
Մղելով մէկդի դըրասանգները փերեան  
Ջորըս կու տար ճանանչուհին. — ճըշմարիտն  
Ես դուն, (ըսաւ), աւելի մեծ էր երագս:

Ծ Ն Ո Ւ Ն Դ... 1894

«Փասք ի րարձունս, ի մարդիկ  
Խաղաղութիւն» — ո՛հ չըլլայ  
Նենգաւոր սոյն աւետիք.  
Այս նեղ ուղին, ա՛հ, լայննայ

Ուր չի նշողեր ոչ մի ջահ,  
Կը մոռցըլի վախճանն ուր՝  
Յիմարութեան անսաստ թիւր  
Երեւմանց մէջ խարբեայ:

Կը խեղդելինք մենք. կ'ելլէ  
Գարշ հոտը. սիրտը կ'ուռի  
Բարկ զայրութէ, սարսուռէ...

Չհոքէդ մեզ մի թողլըքիր  
Այս տըղմին մէջը՝ սվ Տէր,  
Յոյսը թէ ոչ կը մեռնի:

## Ջ Ե Ր Մ

Կը բացուի դուռն ահա և հայրս աղուոր  
Ընծաներով ներս կը մըտնէ: Ան հագիւ  
Կըրնայ բըննիլ զանունք (ս՛հ, ս՛րչափ շատ են)  
Ու կը խընտայ... կ'երկընցընեմ ձեռքըս՝ հս  
Անկողինէս, և խընդութիւնն արեւուն  
Մէջն է որ խուցըս կ'ողողէ. ձայնին մէջն  
է զանգակաց դողանջիւնին տօնական.  
Գուրսը լըսուող ժըխորին մէջն է զըւարթ...  
— Ծընա՛ւ, ծընա՛ւ — կ'աղաղակէ ամէն մարդ  
Ու կը զըրկուին ճամբաներուն վըրայ:

ՋԵՐՄԻ

Այս երազն ինձ կու տայ, օրհնեա՛լ ըլլայ ան:  
Իրա՛ւ. Ծնունդ է, բայց հայրս անշարժ կը նընջէ  
Հեռուն քովիկն ամառնոցին՝ եղեւին  
Ծառերուն մէջ: Ծնունդ է, սակայն եղբարք, ս՛հ,  
Չեն զըրկըւիր ճամբուն վըրայ...

ՏՈՒՐ ԻՆԾԻ,

Սիրելի ջերմ, ուրիշ երազ մ'ալ. տեսնեմ  
Կարօտութեան ցընդիլն հանգոյն ըստուերի  
Սիրոյ կրակին բորբոքումին հանդէպ մեծ,

Եւ երկիրս հուսկ անդորրացած հաւատքով  
 Մ' անդեղեւուն և հըզօր զերդ տիեզերքն,  
 Ամէն երկրի մէջ 'ւ ամենուն համար՝ ալ  
 Գերեզմանին քարն՝ ըլլայ դո՛ւն անհունին։  
 Կը մօտենամ գուցէ ես ալ այն շնմին...  
 Ո՛վ գիտէ։ Իմ երամզս արդեօք կը ստուգուի  
 Ու զուարթօրէն կը բանայ հայրս ինձի դուռն,  
 Ինձ բերելով չըքնաղ պարզելը լուսոյ...  
 Աղջամըղջուտ անդունդնիրէն կեանքին, դո՛ւրս  
 Ելլենք, հոգի, ճերմըկեր է զառ ի վերն՝  
 Որ ստուգութեան կը շօշափէ գագաթն հուսկ։

### ՏԻՈՒՐ ԺԱՄԵՐ

Անձրեւին տակ, հովին դիմաց,  
 Կ'անցնի դագաղ մը. կը տանին  
 Արտորանքով զայն գերեզման,  
 Ու հովին շունչը անպատկառ  
 Հեզնող սոյլով մը մերթ ընդ մերթ  
 Կը շարժըլէ ծածկոյթը սեւ։  
 Շիտակ, ցըցուած սեւ ցեխին մէջ՝  
 Փախչող ճամբուն երկայնքին վրան՝  
 Լապտերները խաչեր կը թուին,  
 Տուներն՝ արձան ու կոթողներ  
 Գերեզմանի մ' երկարածիզ։

Ո՞վ ալ ապրիւը կը յիշէ,  
 Կանաչ մարգերն ու կապոյտն ո՞վ,  
 Ո՞վ վարդագոյն նըշին դաշտին.  
 Կը հեծկըլտայ անձրելը վար,  
 Վերն ովկիան մ' հոծ ամպերու,

Եւ հերսը հոս անդորրութիւն  
 Մը սըզազգեաց, ու հոս ամէն  
 Ինչ կը լըռէ, իբրեւ պարապ  
 Բնակարանի մը մէջ. ո՛չ երգ,  
 Ոչ ծիծաղներ, և ոչ մըռունչ  
 Շառաչածայն կոհակներու.  
 Խաղաղութիւնն է վանքերու:

Անդորրանք խոնջ հոգիներու,  
 Երբեք ցամքած երակներու.  
 Տազնապին քարկ բըռունքններէն  
 Նըկուն, որոնք ալ չեն ուզեր  
 Կըռուիլ՝ քայց ողբը կը խոտեն.  
 Անդորրանք հին գերեզմանի  
 Անոք անտէր ու հարթ գետնի՝  
 Որու վըրայ բուսաւ եղիճ.  
 Լըռութիւն խոր ու ամայի  
 Քան զոր նըւազ պիտի տըխուր  
 Ըլլար պոռթկում մ' արցունքներու:

## Յ. ԵԱՆԷԼԼԱՅԻ ԱՆԴՐԻՒՆ

Կը հընչեն երգեր,  
 Երազուներ կ'անձրեւեն,  
 Կ'անցնին դըրօշակներ՝  
 Ուռուցիկ հովէն:  
 Պատկերդ դու սպիտակ անդրիէն  
 Կը նայի խոժոռ:  
 Երբեմըն ո՛րքան  
 Նենգաւոր, դրուժան

Զամբեցին քեզ թոյն

Սըրտեր վատըւէր...

Այսօր ծափեր, խուկեր, դափնիներ

Այսօր օրհնութիւն:

Ձեզ ալ չեն խոտվիր,

Ո՛վ մեռեալք, ոխերն

Երկրի, և ծափերն

Ալ ձեզ չեն վառեր.

Բայց անշուշտ ձեր կը յուզուին աղիք

Երբ մեզ կը նայիք:

Մեզ որ մութին մէջ

Մտնոր՝ աչքեր չէջ

Ձեզ կը կարկառենք

Եւ դողդոջուն ձեռք

Ձեզի, ձեզմէ՛ սպասելով միշտ զուր

Ակնարկ մ' ու նըշոյլ:

Հանդէսին եր՛գ չեմ

Հընչեցնեի ես արդ,

Ոչ ծաղիկ, ոչ սարդ,

Ոչ դրօշ կը բերեմ.

Ալ ձեռնամած, աղօթանըւէր

Կը նայիմ ես վեր,

Ու կ'ըսեմ. ո՛վ դուք

Ազատ հղբայրներ,

Մեռեալ հղբայրներ,

Ողջերն հէք պասուք

Ունին խօսքի՛ մը, այն խօսքն արդեօք

Պիտի չըսէ՞ք դուք:

## Թ Ե Մ Բ Ե Լ Ի Գ Ի Ս Ա Ի Ո Ր Ը

Ո՛վ գիտախուլ Եւմնեայ, որ աստղագարդ դաշ-  
 [տերէն  
 Մեզի կու գաս՝ հովերուն ձըգած վարսերըդ հրա-  
 [բոց.

Անմիտ, գիտե՞ս արդեօք դուն, գիտե՞ս թէ ի՞նչ  
 [աշխարհի  
 կը սպառնաս, թիչ մեծ հրաշքի, հըսկաներու  
 [հայրենեաց,

Դարե՛ր դարեր զճ՛ւր մենք արդ խլեցինք խօսքեր  
 [հրաշագործ  
 Ստուգութենէն՝ ծըռելով միտքը անդճուլ՝ քըրտ-  
 [նաջան

Խընդրանքներու, և ի զճ՛ւր մըղեցինք մենք զայն  
 [անդի՛ն  
 Խաւարներէ՛ն երկրաւոր, փայլակներուն ընդա-  
 [ռաջ

Նըսպատակին գեղապանծ, առ որ հոգին մեր զու-  
 [շակ  
 (Հոգին հոգած անհանդարտ, հոգին նեղսիրտ ան-  
 [համբեր)

Պիտի ելլէ... Քեզի նե՞ղ եկաւ միջոցը անհուն  
 Որ եկեր, ճվ՛ գաչացու Գորգոն, կ'անցնիս մեր  
 [ճամբէն: —

. . . . .

Մարդուկներուն արտունջին վերայ վերը կը  
 [ժըպտին  
 Լուսեղէն մեծ ժըպտով մ' աշխարհներու լե-  
 [գէոնք-

Յընցելով բանը՝ կարմիր կը ծիծաղի Եւսնեայն,  
 Ու կ'երթայ մութ դէպ հիւլէ մը որ կ'այրի,  
 [կ'անհետի:

### Կ Շ Տ Ա Մ Բ Ա Ն Ք

Երբ դէպքերուն հետազօտել չի հաճիր  
 Աշխարհ ծածուկ պատճառներն,  
 Չ'ըմբռնէր միտքն ուրիշին,  
 Կը կըշտամբէ կը ժըպտի.  
 Շըրջուն երգիչ մը զըւարթ՝  
 Անփութօրէն կը դըսրովէ կը գովէ:

Գանգատ ընողն ս'վ: Ո'վ փընտոողն իրաւունք:  
 Բայց սըրտին մէջը կ'իջնէ  
 Շաա աւելի սուր՝ շըրթնէ՛  
 Մը բարեկամ, սիրելի,  
 Դառըն ժըպտը անգամ,  
 Արդար պատճառ մ' երբոր գայն չի՛ պաշտպա-  
 [նէր:

## Մ Ա Ն Ի Ե Ի Գ

Չե՞ս ըզգար Ազրիլը դուն որ կու գայ.  
 Չե՞ս դռոյթը լըսեր ժիր առաջնորդին.  
 Չե՞ս տեսներ կառոյտ տապանակները դուն  
 Երիվարներուն, փետուրները շինջ  
 Գարգամանակներուն, սաղաւարտներուն  
 Նըշոյլն ոսկեշող ու փայլակնադէտ՝  
 Գըլխուն վրայ չըքնաղ ձիաւորներուն:

Չե՞ս տեսներ որ ան կու գայ ամենուն  
 Առջեւ սիգապանծ, ու կարծես կ'ըսէ  
 Փռոցին ժըպիտով. — « Ես առաջին եմ.  
 Անպարտելին եմ »: — Ովսաննաներու  
 Շըռինդ մ' օդին մէջ. ազգերը զըւարթ  
 Գեաին կը փըսուին առջեւն իշխանին՝  
 Յաղթական չըքնաղ ձիաւորներուն:

Մի՞ ծըռիք միայն դուն: Ան թող հասնի  
 Քեզ՝ ծաղկանց միջեւ՝ ճերմակդ ու խարտեաշ՝  
 Խորխտանօք: Տեսնես պիտի որ թամբէն  
 Վազէ վար, ու պիշ քու աչքերուդ մէջ,  
 Կապուտակ լուսոյ ծաւի լիճերուն,  
 Երազելով ծունկերը խոնարհաբար  
 Պիտ' ըսէ. — « Յաղթուած եմ, ո՞վ թագուհի »:



## Ե Ս Ա Յ Ի

(Կարդալով Գիրքն ու «Լրագիրը»)

Կ'անցնին դուտորերը Սիոնի, սիգապանձ՝  
 Գոհարներով, կոկոզավիզ, հրաւէրներ  
 Կայծակելով վաւաշտ թուխ աչքերնէն:  
 Կ'անցնին արբշիւքըն Սոգոմայ, և խրոխտանքն  
 Եդոմացւոց. սայլերն ու ցուցք շրւայտոս  
 Յաղթանակաց և զեղխանաց: Ոսկեծոյլ  
 Ծանըր կըռոց շուրջը հընչուն թըմբուկներ,  
 Եւ կախարդներ, փղըշտացիներ, զերիներ:  
 Մեղքերու այն ծովու վըրայ՝ մէկ մը լոկ  
 Ճակատարերձ կը սպառնայ. մէկ մը միայն  
 Զարհուրելի կ'ուղղէ ցասոյթ թագերուն,  
 (Թագաւորացն ինք), կը շանթէ լըրբենի  
 Պերճանքն ու վատ ըստըրկութիւն ծառայից,  
 Ու ամբարտաւան զոռոզութիւն բըռնակալ:

Հըրանըշոյլ փայլակներով իր խօսքին՝  
 Կը պարզըւի ուղին Անոր որ կու գայ.  
 «Յեսանասուր են բոլոր իր փըթիներ,  
 Եւ են լարուած իր աղեղները բոլոր,  
 Են երիվարք՝ սալասըմբակ, և կառքերն՝  
 Ահեղ և բուռըն մըրըրկի հանգունակ:  
 Պատժել կու գայ ու կը մռընչէ իբրեւ հօտ  
 Մ'երիտասարդ առիւծներու, կը պատէ  
 Որպը ուժգին՝ ճապուռներովը կարչնեղ,  
 Ու կը քանցէ թագերը զերդ շառաւիղ» —

կը գոչէ այսպէս ազգերուն: Չարութեան  
 Լեցուած է թասն ու կ'որոտայ. «Ա՛լ բաւ է»: —  
 Ու Տիւրոսի վըրայ մոխիր կ'անձրնէ,  
 Աշտարակաց վրայ Նինուէի մորենին  
 կ'աճի, գիշերը կ'ընդգոգէ Բաբելոն:  
 Ո՛ր Սարոնի չըքնաղ վարդերն, ո՛ր աղբիւրք  
 Եւ հովանիք կարմնղոսի, ծիրանին  
 Եւ գանձերն ո՛ր Դամասկոսի:

### ՄԵՐԵՐԿԻՆ

Շունչն է իր ձայնն՝ որ կը շփոթէ Թարշիշի  
 Նաւատորմիղն, Իդումէան կը զարնէ  
 Եւ Իսրայէլը կը գերփէ: Իր բերնով  
 Խօսողը այսպէս կ'ուզէ: Զո՛ւր ընդ միշտ լուռ  
 կարծեց զանի մարդախոշոշ թագաւորն.  
 Որ խողխողեց զայն որ պըրծի իր ձեռքէն.  
 Ո՛չ ալ տեսաւ որ այն անշարժ ցուրտ մարմնէն՝  
 Ազատաթեւ կը ճանանչէր Գաղափարն:

Եւ ահա ողջ դեռ յետ այնքան դարերու,  
 կանգուն կեցած Ես տակաւին ըսպանուած՝  
 Աղագայի սեմին վըրայ: Թո՛ղ մըքնչէ՛,  
 Փայլատակէ՛ քու խօսքըդ թող անգամ մ'ալ,  
 Եւ փարատէ շառափնաթափ լոյսն՝ ամպերն:

Այսօր, դու լաւ կը տեսնես, ինչպէս կ'երգեն  
 Աղակատանքն ի Սիոն, նոր ոսկեձոյլ  
 Ունին կուռքեր մարդիկ, ու նոր փղըշտացիք  
 կը պանծան պարծ: Ապականիչք կը սըփռեն  
 Թոյն մահացու, և հալածանք դեռ, ու դեռ  
 կը ծայրատէ, սպաննէ, ջընջէ պատերազմն:

Հոն կը մեռնին հարիւր, հազար, անհամար,  
 Մարտիրոսներ և դիւցազներ գունդագունդ:  
 Մոլեգնութեամբ հրաբուռիներու շրջմուխիկ՝  
 կ'եռայ կ'եփի ծոփն ու խորքին մէջ վըհուտ  
 կ'ընկլուզանէ հըսկայ նաւեր, գարուններ,  
 Ու կը փըրփրի նախճիրներու ժանտ կըտղուցնէ:  
 Հերարձակ խումբ մը կիներու՝ ոռնագին,  
 Յիմարութեամբ վառ աչքերով՝ կը վազէ  
 Ափեր, դաշտեր, կ'իյնայ, ի զո՛ւր կ'աղօթէ,  
 կ'անիծէ:

Մեր վըրայ դուն, օ՛ն, բարձրաբերձ  
 Ժամանակին ժայռերէն ձայնըդ ձըգէ  
 Որոտումի. հասնի՛ հեռուն ծաղկափթիթ  
 Պարտէզներուն, երկիրներուն աւերակ.  
 Ամէն ոք զայն լըսէ որ զայն հասկընայ.  
 Անգամ մըն ալ պարսէ ցասումըդ ահեղ  
 Աշխարհակալ դըժոխորկո՛ր սըրտերու,  
 Մոլեգնախանձ չար ոգիին խելայեղ՝  
 Որ կռիւներով վայրագ՝ ի մահ կը ճեպէ  
 Գըլխագարներն այս առօրեայ. բաց աչքերն  
 Արեան ծարաւ այն կոյրերուն. մըռընչէ՛  
 Վերջին հրամանդ անգամ մըն ալ՝ թէ « Բա՛ւ է »:

## ՍՈՒՐԲ ՄԱՐԿՈՍԻ ԶԻԵՐԸ

Ճերմակ, անմարդ կը փըռուի  
 Մեծ հրապարակը միջօրեայ թըմբիրով.  
 Կ'երթայ հեռուն կը կորսուի  
 Թափառաշուրջ երգչի մը նօթը յետին:

Կը պատէ ամպ մ' ոսկեղէն  
 Սուրբ Մարկոսի զարմանակերտ զըմբեթներն.  
 Բայց խորշերուն մէջ լուսեղ  
 Կը յօրանջեն կարծես սուրբերը մէկտեղ:

Շատ տարի է կը նընջեն  
 Փըռուած փոսին մէջ քաշարի դիւցազներն.  
 Է շատ տարի որ անյայտ  
 Եղան կարմիր պատմունճանով ասպետներն.

Շիկամօրուին մըռընչիւնն'  
 Իլլիրիոյ հովէն բերուած Սուրբ Մարկոս,  
 Աւելի քան եօթ դար է  
 Որ նըլաղան է ալիքին մէջ տըղմուտ:

Ա չեն զըլարթ երեբար  
 Յանկարծակի լուծուած՝ զիշերն յուզելու,  
 Կատարը բարձըր բուրգին՝  
 Արթուն պղինձներն՝ յողջոյն դարձող տորմըղին:

Եւ զո՛ւր այն սուրբք կը սպասեն  
 Որ ձայն մ' որուն ժամանակաւ սովորանձ  
 Էին, որ շահնդ մ' յաղթութեան  
 Խորտակէ սառը ձանձրոյթին այն անհուն...

Փառքը եղան, բայց քուն մ' հեղգ  
 Թըմրեցուց Սուրբ Մարկոսն ու իր ժողովուրդ.  
 Բայց կամարաց արդ վըրան  
 Կը լըսուի մոտենչը Կորընթեան ձիերուն:

Այն ձիերուն՝ որ հրաշունչ  
 Յոյն հողին վրայ՝ բարկ խօշիւնին մէջ խազմին,  
 Կը տեսնէին անցքը պերճ  
 Քաջախիզախ հոմերանուագ հագներգուաց,

Ու Եպիրոսի քաջերուն  
 Զորս Արատոս՝ կըռփողին դէմ կը տանէր:  
 Եւ ճըռընչուն յաղթական  
 Աքէական դաշնակցութեան կառքերուն:

\*

Կը զգամ ես, ս'վ դարերու  
 Վիթխարի թեւ, բախիւնդ, ու հնարդ ազատ  
 Արգելքներէ մարդկային  
 Ժամանակին ոգին կը շուէ բաց դաշտերն:

Կը տեսնեմ քեզ, ս'վ Հըռոմ,  
 Պըղտոր Հըռոմ, թէ ինչ էիր: Նենգոտ դեւն  
 Յիմարութեան այն ատեն  
 Կ'արթըննար մոտեւ՝ աչքերուն մէջ Ներսնի,

Եւ խելայեղ Կեսարին  
 Կը լըսուէր մոռնչն. — Ինչ որ չի ծոխր, կը կո-  
 Ու ծաղկազարդ քըղամիդն [տրեմ: —  
 Ընդ քարչ կու գար մոլեզնախանձ տըղմին մէջ:

Զուր կողոխոս ծիրանի  
 Հազցուց պատեց զահին մաշած տախտակներն,  
 Հոսմեան հըզօ՛ր առիւծներն  
 Կապիտուլի ստորոտը՝ խոց՝ կը ճըշան,

Ու ջահը բարձր արիւղ մէջ  
 Փըլնող սրահից միջեւ ու այրած մեհենից՝  
 Պիտի տըխուր յարութիւնդ  
 Տեսնեն թըզուկ թոռներն հըսկայ պապերու:

\*

Ես կը խորհիմ... Կ'անցնին արդ  
 Վարձակներու սպիտակ քօղերն, լոյս աչքերն,  
 Եւ իրկոււնները ոսկի՝  
 Կը ցըցուին շինջ մինարէներն ու մըզկիթք...

Բայց այն ատեն քեզ այսպէս  
 Ո՛վ ծեր Թրակիա, չէր քու երկինքըդ տեսներ.  
 Մեհեաններուդ մէջ դեռ չէր  
 Սըրբապիղծ ձեռքը մուսուլմանը մըխեր.

Եւ ոչ մահիկը ոսկի  
 Տաճարներուն վըրան. այլ մեծ և տըխուր՝  
 Ազատութեան նըշանակ՝  
 Ահաւոր խաչը կը կանգնէր Քրիստոսի...

Ես կը տեսնեմ... Կը ծըռի  
 Երկու կանաչ արիւնց միջեւ ծոփս. ահա  
 Բիւզանդիոն կը ժըպտի  
 Նըժդեհացեալ յաղթականին աշխարհի:

Կ'արթըննայ 'մրոստն երբեմնի'  
 Երիտասարդ մ' ինչպէս՝ արդ գոհ, ընկճւած .  
 Ու կը յաղթէ հրաշալի  
 Նոր մայիսո՞վն իր՝ սիգապանծ Հըռոմին...

Եւ դու կ'անցնիս, դարերու  
 Վիթխարի թեւ, ու երկիրներ, գահոյքներ  
 Կը ջարդես, լայն թռիչքիդ մէջ  
 Հասունցնելով բախտերը նոր ազգերու...

\*

Ահա հասեր են վոսփոր  
 Փառահեղներն. կայմերուն վրայ կ'ուլորուին  
 Նորարողքոջ դափնիով  
 Պսակուած կարմիր ոսկեհամուկ դրօշակներն.

Այն դրօշակներն որք բացին  
 Իրենց ազատ անցք ցամաքի, ծովու վրայ,  
 Սաւառնաթեւ առիւծով  
 Կընդուած, պարզուած ի ձայն գոչման՝ Սո՛ւրբ  
 [Մարկոս:

\*

Պղընձի ձիեր, ո՛րքան յաղթ  
 Նաւեր տեսաք, ցըռկանաւեր երագ, գոռ,  
 Առլեփներէ որոնք ցից՝  
 Կը նետուէին դէպ ի Հանդրին անդունդներն,

Աղօթից ո՛րքան ալիք  
 Տաճարին մէջ հընչեց. և ջինջ դէպ եթէրն  
 Անհուն ո՛րքան թռան երգեր  
 Եւ հոտանոյշ ամպեր արաբ խունկերու,

Պայթեցին օրչափ կեցցէք՝  
 Փայլատակեց երբ Ձիացուն յանկարծոյն,  
 Եւ արեւուն յանդիման  
 Քանի՛ հարսնիք հաստեցին ծովս ու վընէժ.

Ճակատագրին մըրըրկէն  
 Երբ զերդ թեթեւ փեռուր օդին մէջ դուք դեռ  
 Չէիք քըշուած, ու դըրուած  
 Ափունքը հոն արիւնընուշաքն Սէնկ:

Հոն ալ՝ ձեզ չէր ըսպասեր  
 Լուսթեանց տաղտուկն և ոչ քուներ թոյլ եւ վատ  
 Սալերու վրայ ամրակուռ  
 Կը կոփուէին ապագային բալլիքներն,

Վըրէժխընդիր բազկաւ հոն՝  
 Գաղղիոյ նենգ ազատութիւնը դրեր էր  
 Ժողովըրդոց իրաւունքն  
 Եւ արքայից՝ նըժարին մէջ նոյն և մի.

Եւ դեռ չըթնաղ, ահաւոր  
 Քորսիքացին կը հազնէր գրատն ընկերհաշտ,  
 Ու կայծակներ կ'անձրեւէր  
 Վարչութեան վրայ Միգաբերին արեւով:

\*

Երբ սիւներուն դարձաք դուք  
 Հինաւուրց մայր եկեղեցւոյն, ու դէպ ի  
 Ձեզ ուղղեցին տոժերուն  
 Ջաւակներն՝ ո՛ւշ ի կուրծս՝ աչքերն արտասուն,  
 Ի Գամբոֆո՛րմիոյ սպանուած  
 Վեհ Մերակոյտը կը լըռէր, և օտար



Կը պարգուէր դրօշ մը արխուր  
 Ի Սուրբ Մարկոս՝ նըկարուած սեւ ու դեղին:

Յընցե՛լ ուզեց շրղթաներն,  
 Մընչեց, ներկեց երկաթներն իր արիւնով,  
 Յոխորտաբար աննըւան  
 Առիւծն՝ ու զինք լուծն աւելի՛ ընդուլնեց.

Ու օր մը յաղթ ուսերով  
 Թաւալելով շիրմին քարերն՝ ցըցուեցաւ  
 Աւտրիացւոյն առջև դուժ՝  
 Ուրուներո՛ւ կարմիր երամ մը երկայն.

Վեհապանծ գո՛ւնդը՝ որուն  
 Դամբանական գովեստը ծովը երգեց,  
 Մեծն և արին և ազատ  
 Փառահեղ գունդը մըշտայաղթ տոժերուն:

Մարկերայի ոըմբաձիգ  
 Որոտացին այն օր հրաճայթ թընդանօթք.  
 Զողերէն վար զլորեցան  
 Արծիւ ու դրօշ շարդուփըշուր խառնիխուռն.

Միակ կեցցէ՛ մը խուժեց  
 Կուրծքերէն դուրս. կայծակ քաջաց աչքերէն.  
 Եւ լըսուեցաւ ջինջ օդին  
 Մէջ մեռելոց երգին թըրթուամը ցընծուն.

\*

Ո՛վ անօգուտ, բայց սուրբ գործ  
 Նահատակաց պաշտելի: Ո՛վ կորովի  
 Շունչ դիւցազանց: Իտալիա  
 Զեզմով կը զգայ զինքն աւելի հզօ՛ր ու ազնիւ:

Ժողովուրդին սնտաք է  
 կորովք վեհ: Տեսաք դուք մեր կըտրիճներն:  
 Շքեղ ձիեր, որ պատուար  
 կը կանգնէին ոսոխին դէմ կուրծքերնին.

Տեսաք դուք այն առաւօ՛տն  
 Եղեռնաւոր, երբ հալումաշ ուրուականք  
 Դրօշի մը շուրջ խըռնեցան,  
 Տեսաք դուք այն, տեսաք այն օրն անխճեալ,

Այն օրը երբ ըստուերներ  
 Սովալըլուկ, օրհասական հոգիներ  
 Սեւով սուգով պատեցին  
 Համակ անգամ մ'ալ այն դըրօ՛շը կարմիր.

Երբ խածնելով ձեռքերնին  
 Վըտիտ՝ տեսան այն դիւցազներն՝ գերմանաց  
 Խաժամուժէն անգամ մ'ալ  
 Ըսպաններած ընկերահաշտ պետութիւնն:

\*

Ո՛վ ցընծութեան բարձր որոտք,  
 Ո՛վ զանգակաց գանչեր, և ո՛վ միջօրեայ  
 Շողով լուսով բարձր՝ հովին  
 Մէջ պարզըւած հռագունեան դու դրօշակ,

Ձեզմո՛վ, ձեզմո՛վ Ադրիոյ  
 Բացաւ բամբիշն իր կիտաշէջ աշուրներն.  
 Ձեզմով այտերն դալկահար՝  
 Նըկարուեցան վայրկեան մը վարդ ու բոսոր:

Լօռայատակ յետոյ իր  
 կանաչ ալեաց վըրայ լըռին ու ամայի,

ինկաւ անգէն, կեդեցուած՝

Ան որ ուզին տակն ունէր օր մը երկիրս:

— Ո՛ւշ հասար, — անքն արցունքով

Գոչեց՝ համբոյր տալով եղբայրը եղբօր:

— Ողջ չէ՞ք միթէ — հարցուցին

Խըստիւ կերպով Թորչեւոյի մեռելներն:

— Ողջ, բայց յոգնած ու թմրած,

Ոգին լքուած լուծուած՝ մարմինը կոշկոճ.

Ձեր հոգիները արի

Չբարեւիք մեզ, ո՞վ շիրմին մէջ փակուածներ:

— Գրեթէ կէս դար է ահա

Աքերնիս պիշ դէպ ի նպատակ մը վըսեմ,

Գրեթէ կէս դար է ահա

Դաստապանին վրայ ձեռքերնիս հըսկեցինք.

— Արդ... կատարուած է ազատ

Ուխտն իտալիոյ, և գոյրոյթները սանձուած.

Արդ... թողուցէք մեզ հանգիստ,

Ծեր ենք մենք... թոյլ տըւէք մեզի որ մեռնինք:

Կը մըռընչեն մեռելներն,

Ձիերն հրաշունչ կը մըռընչեն կորընթեան,

Մըկանուկներն պի՛նդ կարչնեղ՝

Պատրաստ միշտ պերճ են՛քի՛ դափրի՛ դոփերու.

Կը մըռընչեն մեռելներն..

Եւ անտարբեր անոնց մոռուչին կամ խոթո՛տ,

Յամառօրէն կը նընջեն

Ողջերը քունը սոսկալի վատութեան:

« ՊԱՏՈՒՀԱՆ ԻՍ ՆԵՐՔԵՒ »

Պատուհանիս ներքեւ՝ բացուած՝ Ապրիլի  
 Գողարիկ ու գիրգ՝ արեւուն,  
 Կը հընչէ ձայն մ' յանկարծակի կիթառի,  
 Լարածգութիւն մը ծիծղուն,  
 Նախերգը զուարթ մոլուցքի  
 Մը խաղերու, ցընծութեան  
 Կարծես ունում, պայթում մ' հուժկու հասակին,  
 Ըր հուր ու բոց կը պոռթկայ  
 Եւ հըրճուանքի, յիմարութեան, կորովի  
 Եւ սիրոյ բուռն հորձքեր:  
 Գրասեղանէս կը վերցնեմ՝  
 Քիչ մը յոգնած աչքերս ու ծանրը գըլուխս...  
 Հըգօր կեանքի բարախում մ', սհ, լաւ կ'ընէ:  
 Քիչ մը բերկրանք անփոյթ... Ո՛հ, քեզ երանի՛  
 Որ գըտնելու կ'երթաս անշուշտ գեղուհի  
 Քու նըշանածդ՝ որ անուշիկ իրկըւնով  
 Քեզ կը սպասէ շեմին վըրայ գինովցած  
 Գարնան հովին բերած քընքուշ հոտերէն.

Ու բիբը սեւ կը շողայ  
 Զայնն հասնելուն, և ամանակ կը զարնէ  
 Իր ոտքովն այն գըլարթաբոյր նըլագին,  
 Ու կաթնաթոյր պարանոցին վըրայ գողար՝  
 Օդին մէջ գերդ թեթեւ փետուրք կը դողան  
 Փունջերը նուրբ խարտիշագեղ մագերուն:  
 Կ'երեսիմ՝ ես պատուհանէն... Նուագածուն  
 Միշտ հոն է, կգակը վեր օդին մէջ, իր հետ

Շուն մ'ունի. շուն մը որ պիշ  
Գորովալիս սիրով անոր կը նայի...  
Խիզախ, արի կիթառահարը կոյր է:

## Կ Ր Ա Կ Ի Ն Ք Ո Վ

— « Հէքեաթ մը, նոր հէքեաթ մը,  
Որչափ ատեն որ տեւէ  
Մըրրիկը: Չե՞ս լըսեր որ  
Կը փոթորկէ, կ'անձրեւէ:  
Պատմէ: Կ'ուզենք երազներու մէջ սուգել  
Մենք մըտածումն ու ձըմբան գալը մոռնալ:

— » Պատմէ, և զուարթ ըլլայ թող  
Հէքեաթն: Եկուր, կը փայլի  
Ակութն ահա »: —

— Ով եղբայր,

Հոգիս տըխուր է, երբզ  
Չունի այսօր: Կ'ըսեմ (միայն թէ ուզես)  
Ուղեւորի մը ճըշմարիտ պատմութիւնն:

— Կայ մեծ լերան մը ճեղքին  
Մէջ վարն ուղի մը, որմէ  
Կ'երթայ անի. որմերն են  
Երկաթաքար՝ անմատոյց,  
Եւ արեւակն հազիւ երբեք կ'արձակէ  
Նըշոյլ մը վար դէպ ի անդունդը-մըռայլ:

Կ'երթայ կ'երթայ ան յուսով  
Անակընկալ գառվերի

Մը, ծարաւ՝ լայն կամարի  
 Մ՝ երկընքի, մեծ բաց լոյսին,  
 Եւ ամէն մի խորշի, անկեան, օձապտոյտ  
 Գալարներու զարհուրելի անդունդին,

Յոյսը թեւեր կը հագնի  
 Վերն ոսկեզոյն կատարները  
 Հասնելու, համարձակ  
 Փայլուն ճամբէ մ՝, արեւով  
 Լուսաճանաչ ներմակ ճամբէ մ՝, ու հասնիլ  
 Ըզգրլիտանքին իր խանդակաթ իղձերուն.

Այսպէս առաջ կ'երթայ ան  
 Մէջէն յաւէժ գիշերուան.  
 Ու կ'ուլըրի անդունդն այն՝  
 Հաւառքին հետ համաձայն՝  
 Գարնանային ճանանչներէն ծիծաղկոտ  
 Երկիրներու փայլակներում մօտաւոր:

Հոն՝ նեղքըւած ժայռին խորն  
 Կ'երեւի լոյս մը աղօտ.  
 Հոն անշուշտ լայն տեսարան  
 Մը պիտի յանկարծ բացուի  
 Անհունութեան հետ անսահման, հեռաւոր,  
 Մոռնչին թերեւս և դիւթանքին հետ ծովուն:

Հոն. հոն հտեւն այն պատին  
 Ո՛չ, ո՛չ, դեռ ո՛չ.... Այլ անշուշտ  
 Փայլատակէ պիտի պերճ  
 Մեծապանծ փառքը բացին:

Հոն վարն, հոն վար... Բայց անելի ժըպիրհ ժայռ  
Մ՝ այն մութ զընտանը կը կընթէ մահառիթ.

Ո՛վ եղբայր իմ, անո՞ւնը  
կը հարցընես ճամբորդին,  
Ան լաւ գիտէր ու իրմէ  
Առաջ շատեր՝ հալածուած  
Եղնիկներու նըման հասան հեւ ի հեւ  
Եղեռնաւոր ճամբուն թումբին շերտափակն:

Յանդըզնօրէն՝ բայց ուզեց  
Ան երազել և յուսալ  
Որ պիտի ժայռը փըլչէր  
Ու կատարուէր պիտի իր  
Իղձը շամբուշ, իղձը միակ, նոր Սիւան,  
Ան որ երկրիս էր տիրելու սահմանուած:

Եւ ըլտապեց, դըրդըլած  
Երազներէն, դէպ ի այն  
Ահեղ կընիթն, ուշադիր  
Ամէն անկեան, դարձուածքի,  
Ամէն լոյսի, տըխմար, ապուշ:

— « Բայց անո՞ւնն,

իւր անո՞ւնը »: —

— Ես եմ. դուն ես, ո՛վ եղբայր: —

## Վ Ա Ղ Ը

Կ'ապրիմ, կ'շընչեմ, կը բարախեմ. վեհ զմայլ-  
[մանց

Մէջ՝ կը կենայ թեւատարած միտքը՝ խրոխտ.

Ամէն երակս առողջութիւն կը թընդէ.

Ու իմ սըրտիս ամէն մէկ վառ զարկին մէջ

Տիեզերքին սըրտին թընդիւնը կը զգամ:

Վաղն... հիւսիսի շունչ մը. փայլակ մը ամրան

Արեգակի. փոքրիկ խայթուած մը օձի.

Ու ճախճախուտ դաշտի մը զիս գոլորշին

Պիտի զգեանէ. կեցընելով այս չըքնաղ

Ընթացքն աշխոյժ, ազատ արձակ զօրութեանց:

Տըժգոյն, անխօս, պիտի լըսեմ մահճիս շուրջն

Աղօթքներու թոթովութեանք. հառաչներ

Որք երթալով մարին ողբեր պիտ' ըլլան.

Պիտի ուզեմ, սակայն ի զճւր, ոտք ելլել,

Կարկառել ձեռքս ու 'սել գոնէ՝ — Մնաք յա-

[տո՛վ: —

Բայց առջեւն այս իմ քիւրերուս՝ ընկըղմած

Այսօր ցնորից մէջ վեհագոյն սէրերու,

Երազանքով լեցուն, լեցուն շողերով,

Պիտի մահուան սեւ վարագոյրը իջնէ:



## Հ Ի Ի Ա Ն Դ

Իրկունն ահա՛ վերջապէս :  
 Ես կը դիտեմ անկողնէս  
 Քնէած բիրով լուսնի նըշոյլ մը նըրբին,  
 Որ անցնելով ապակիէն թափ՝ մըթին  
 Կու գայ սննհակն առանձնուհի հիւանդին՝  
 Լեցընելու զայն ցնորքներով խօլական :

Կ'երթայ կու գայ ստուերներու  
 Սըրարչաւ գունդն օդաչու .  
 Բոլոր տարբեր ունին ձեւեր, տարբեր ձայն,  
 Եւ մէն մի ստուեր կ'արթընցընէ՝ անցնելուն՝  
 Մտածում մ', երազ մ', յիշատակի մը ուրուն,  
 Յետոյ հանդարտ լուսնի լուսով կը ցընդի :

Կը խօսին, կամ ըսպիտակ  
 Չեռքերնուն մէջ ըսպիտակ  
 Թուղթեր ունին : Ես կը կարդամ՝ հոն հեռուն՝  
 Գրերն առանց անջըս բանալու . է անհուն  
 Խումբը լըտուած կամ կարդացուած խօսքերուն  
 Երագին մէջ կամ թէ կեանքին՝ բարախոհն :

Խօսքեր կարծես բառ առ բառ  
 Տըպուած՝ թուղթին վրայ հրավառ  
 Երկաթով . մեզ այսպէս թուեցաւ, ու այրէր  
 Իբրը թէ թուղթն . աչքերնիս մննք դէպ ի վեր,  
 Դարձուցինք չորս կողմ՝ որ տեսնենք թէ արդեօք  
 Մեր ընկերներն, զըրքեր, գոյքերն ու թուղթեր

Առջեւնիս, շուրջն ու մեր քով  
 Կը թնային միշտ անխըռով  
 Իւրաքանչիւրը հոն իր տեղը նախկին,  
 Ամբոխ անգործ, վատ և անհոգ, անտարբեր,  
 Մինչ մեր յետին յոյսն ու հաւատքը՝ մըթին  
 Անհունութեան մ'անդունդին մէջ կը վիժէր:

Խօսքեր շնչտով հրաշացայտ.  
 Խօսքեր որոնք բարկահայթ  
 Հովու թեւին նըման ի բաց կորզեցին  
 Դեկտեմբերի նըսեմ օրուան մը ճակտին  
 Մէզն ու մըռայլ, ու դաշտերուն, մարգերուն  
 Նըշոյլն յանկարծ ծաթեց գարնան արեւուն:

Խօսքեր խունկի, աղօթքի,  
 Գորովանքի, քընքշանքի,  
 Օր մ'առնըած անտես, որոնց անկեղծ ձայնն  
 Հընչելով հին թերթէ մը, արդ մի միայն  
 Կը ծարուեցնէ ըզմեզ սիրով մը անդարձ  
 Ու զըղշացած աչքն արցունքով կ'ուռեցնէ:

Իշխանական, որոտման  
 Խօսքեր՝ որոնք ցիրուցան,  
 Սարսափներնէն սառած շըլմոր զինուորներն  
 Յոյսն երբ կորսուեր է և ոտիս դիտակէն  
 Կը մոլեգնի կրակը, իրենց փախուստէն  
 Եւ կը դարձնէ ու կը բերէ դէպ ի խազմ:

Բամբասանքի խօսքեր բիւր,  
 Նուրբ, թունաւոր իբրը սուր,  
 Զոր մըռածուսն հասկընալ չ'ուզեր երբեք,

Ձոր չի սանձեր սահմըռկած սիրտն ահաբեկ,  
 Եւ երկու կիսլ հոգիներուն մէջ յանկարծ  
 Կը կանգնեն պատ մը կրանիդէ անթափանց:

Մեռնողներու խօսքեր բիւր,  
 Խորհրդաւոր, կըցկըտուր  
 Շեշտեր ճերմակ շըթունքներէ թոթովուած, —  
 Ուր կը խօսի արդէն երազը անհուն  
 Ուրիշ կեանքի մ', — ու կը թողուն մեզ խոհուն  
 Յորչափ կ'ապրիկնք՝ իրենց ծածուկ մըտքին վրայ:

Կը զգամ, բոլոր հեւ ի հեւ  
 Կու գան կ'երթան ժիր թեթեւ,  
 Ու իմ ջերմին տենդէն թըմրած զըլխուս մէջ՝  
 Անձնիւր ըստուեր կ'արթընցընէ՝ անցնելուն՝  
 Մտածում մ', երազ մ', յիշատակի մը ուրուն.  
 Յետոյ հանդարտ լուսնի լուսով կը ցընդի:

† 5 ՄԱՐՏ 1896

Ձայն մ', որ անշուշտ չըհասաւ  
 Մըրըրիկներէն խորտակուած  
 Վեր աստղերուն, կը գոչէր  
 Անապատին մէջ անզրաւ.

— Ո՛վ Տէր, ամբիծ և անհուն  
 Բարձունքներէն ըսփոփէ  
 Մեզ մէկ խօսքովըդ, բուժէ  
 Մոլորութեան մէջ ինկած

Արարածոցըդ սըրտէն  
 Յիմարութիւնն, ու դարձուր

Նեղութիւններն ու վիշտերն  
Ուրախութեան բերկրաւէտ:

Փարատէ, Տէր, մըրըրկին  
Ամպիրը ժանտ, սեւաթոյր.  
Կը մեռնին հոն վարն, ահեղ  
Նախնիրը, Տէր, դադրեցուր.

Արիւնոուշտ այն երկինքներն  
Արդէն տեսան շատ դէմքեր  
Եւ մարմիններ ըսպիտակ  
Ժայռերուն խորքն Ամպէի:

Սովալըլուկ անզըղներն,  
Ու արծիւներն արդէն շատ  
Իսկ լափեցին զէշագէշ  
Կարմիր սըրտեր դիցազանց:

Ողոթիչ ձեռքըդ, ս՛վ Տէր,  
Երկընցուր այս մարդկային  
Հօտին հրակէզ բարկութեան  
Վըրայ, խազմին ու կըռուին:

Որոտա՛, է՛ ամէն բան  
Ունայնութիւն. անսահման  
Իշխանութիւնք, խորտակուած  
Բանակներ, վեհ յաղթանակ.

Յուցուր պատրանքն անօրէն  
Որ կը պատէ շուրջ աչքերն,  
Ու հասկըցուր ամենուն  
Թ՛ երկիրս ծարաւ է սիրոյ: —

« ԵՐԿՆՔԻՆ ՏԱԿ »

Երկընթին տակ՝ զոր անորոշ  
 Լուսով մ' իրկունը կը ներկէ,  
 Շըրջապատուած մացառներէ  
 Լօռերու մէջ կը նընջէ լիճն.  
 Ու եզերքին վըրայ, բարակ,  
 Նուրբ ասեղի մը նըմանակ,  
 — Մոգի մը բոյնը ո՛ր գիտէ —  
 Կը կանգնի բուրգ մը թըխորակ.  
 Եկո՛ւր. այս է երազներու  
 Թաքուն աշխարհն: Եկո՛ւր, դէպ ի  
 վար՝ անծանօթն հոն կը կանչէ:  
 Երթանք, տըւած մենք ձեռք ձեռքի,  
 Դէպ իրկունները զուարթագեղ  
 Մէջէն անծայր դաշտավայրին:

Ծ Ո Վ Ա Ր Կ

ՄՈՐՈՋԻՆԻ զրահատրիկն

Ըսպասումի մեծ լուսեհան մէջ՝ հրամանն  
 Ամբողջ որոտաց. ցընծումի սարսուռ  
 Մ' ամբոխն ողողեց. սարսուռ՝ զոր կու տայ  
 Մարդկային մըտքի՝ ամէն յաղթանակ:

Եւ անուևով մեծ ըսպարապետին,  
 Այն հըրամանին հնազանդ ու պատրաստ,

Ախրհերու մեծ մրըրիկ մ' հանելով  
Նաւը կ'իջնէ վար ու կ'իշխէ շուրին:

Կը պայթին ծափեր. արդ ի՞նչ ովկիաններ  
(Կը մընչեն) ճեղքէ պիտի, ի՞նչ շքեղ  
Յաղթանակ պիտի օր մ' անոր ժըպտի:

— Ո՞րքան նախճիրներ պիտ' ըլլան, ճայթէ  
երբ երկաթ կողէն որսան արիւնսուշտ... —  
... Յոուկին վրայ կանգուն կը ժըպտի Սատան:

## Ա Յ Գ

«Ժողովուրդ՝ որ հասեր-ի խո-  
ւարի, ետեւ լոյս մեծ»:

ՄԱՏԹԷՈՍ ԳԴ. Դ, 16.

Բիւթանիոյ օր մ' հոտաւէտ բլուրներէն  
Կը դիտէիր Երուսաղէմն անհաւատ,  
Եւ բոլոր շուրջն անպարագիր հորիզոնն  
Արեւմուտի շեղ նշոյլներով կը փայլէր.  
Հոն վարը բարձր ոսկեփողփող կոթողներն,  
Փախըստական սրահներ, պորփիւր տաճարներ՝  
Կը թուէին գո՛ւնդ մ' յոխորտապանծ անմընո՛ւնչ  
Հըսկաներու՝ խիզախ, երկնից ձայնատուր:  
Ոսկեքանդակ ու մեծագին կուճերու  
Ապաժաման պատիւներն՝ օ՞ր մ' անարգուած  
Մարգարէից ճերմակ գընդին՝ կու տային  
Մարտիրոսի շքրթներուդ դա՛ռըն ժըպիտ մ',  
Ու տա՛մըր սեւ դատաստանին անըզգամ,

Նախատինքները, և անարգ Գողգոթին  
 խոժոռ ճամբան և տանջանքները երկայն,  
 Ամենատես սըրտիդ բոլոր երեւցան:  
 Քանի՛ սիրոյ հառաչներ, ս՛վ Տիբերիա,  
 Նազովրեցւոյն աստուածային կուրծքէն քնզ  
 կու գային... Ի՞նչ եռանդնավառ ողջոյններ  
 կապոյտ լըճիդ...:

Ափունքներուն ահա վրան  
 կը խըռնըւի ամբոխն, ահա ջուրերէն  
 խոնարհներուն, նեղեալներուն, չուառներուն  
 կը հասնի մեծ խօսքն ու ձորերն ու լեռներ  
 Ու Գալիլեան բոլոր անով կը հընչէ:  
 Բարձրացաւ հիզ մ' անհուն անյոյս սըրտերէն,  
 Նոր քաղցրութիւն մը մուտ գործեց այն ատեն  
 Ամայ անչէն տընակներուն մէջ անոնց՝  
 Որք անարգուած՝ ստրոնկ՝ անիրան տէրերու,  
 Մոռցած էին թէ կուրծքերնուն մէջ հոգի  
 Մ' ունին տաճար աստուածային Աստուծոյ.  
 Այն ատեն գարշ մեղաբոր կինը՝ որուն  
 կը ժըխտէին փրկութեան ս՛ և է ելք  
 փարիսեցիքն ու քահանայն և դըպիրն,  
 կըրցաւ ելլել դուրս. հուսկ ուրեմըն տիղմէն՝  
 Տեսնել կապոյտն ու շընչել յոյս թողութեան.  
 Գլուխներն անմիտ բըռնութեան տակ ս՛չ եւս կոր.  
 Արքայութիւն մը նոր, օրէնք մը պիտի  
 Գայ նոր, ստիպէ մեծամեծներն որ զօղուին  
 փոքրիկներուն, ու տիեզերքը՝ փոխուած  
 Եղբայրներու տաճարի մ', այգ մը պիտի  
 Տեսնէ երկինքը երազուած տօներու:  
 Ու պիտի մեծ արքայութիւնն, ու սըրտին  
 Օրէնքն՝ ըլլայ արգարութեանն...

## Ո՛վ վըսեմ

Աստուածային տեսիլ. բայց, ս՛հ, հեռու է  
 Մագդաղէն, ս՛վ Յիսուս, հեռու Փալիլեոյ  
 Զըւարթ լիճերն ու պուրակներն հանդարտիկ,  
 Որոնք ուժեղ արձագանգներ ունէին  
 Քու ներշնչուած շրթներուդ կ՛ուռ շնտերուն.  
 Առջեւդ ունիս սեւ կոհակները կուպրի,  
 Տըխճէր պատկեր կորստուած հոգւոյ, և առանց  
 Սիրոյ զգացման. առջեւդ է ս՛րջն սսկէզօծ  
 Հըրէական գագաններուն, որք ծարու  
 Են քու արեանդ... Եւ սակայն դուն շատ մօտիկ  
 Կը կարծէիր այն ատեն այգն՝ ս՛վ Յիսուս:  
 Մեզ՝ զորս ա՛յնքան քու շողշողուն ջինջ օրէդ  
 Կ՛անջըրպիտէ ժամանակ՝ մեզ տակաւին  
 Հնուս կը թուի քու երագած նըպատակդ,  
 Ո՛րքան արիւն, ս՛րչափ նախճիրք՝ յանուն քո.  
 Ի՛նչ անողորմ փոփոխումներ վաղանցուկ  
 Յաղթանակաց, տարապայման պարտութեանց,  
 Արդ բարձրաբերձ երկինքներէն կը նայիս  
 (Ինչպէս երբեմըն բլուրներէն՝ Սաղեմի)  
 Այս ապըստամբ ու ապաշնորհ երկրիս վրայ,  
 Որ՝ ողջութեանդ՝ չըհասկըցաւ քեզ, ու երբ  
 Մեռար՝ փութով հրատարակեց յարութիւնդ,  
 Որպէս զի քեզ իր արցունքները խնայէ...

Քու ճըշմարիտ հետեւողաց գունդ մ՛ ուրիշ  
 Կը կըռուի այսօր մըտածման զէնքերով.  
 Բայց թանձըր մէզ մը կը պատէ սըրտերն, ս՛հ,  
 Բայց աւելի քան այն ատեն, ս՛վ Յիսուս,  
 Անգութ են քու որդիքդ, ու չեն դադրիր դեռ  
 Անարգանքի փայտին վըրայ վատըւէր



Բեւեռեւելու քիչ բայց հըզօր զինուորներդ,  
 Որք կ'որոտան անդուլ երկրի ականջին,  
 — վայձ ձեզ որ ձեր եղբայրներուն ուսին վրայ  
 Չէք վարանիր անեղ բեռներ դընելու,  
 Բեռներ՝ որոնց ծանրութենէն կը սոսկաք.  
 Եղով ձեզի որ կը մերժէք աղօթքներն  
 Ու կը կորզէք այրիներուն խոնարհ յարկն:  
 Անմիաք և կոյրք. վայ և եղով ձեզի բիւր՝  
 Որ շիրիմներ ու կոթողներ կը կանգնէք  
 Մըտածուսի հըսկաներուն, ու կ'ըսէք.  
 Մէ՛հ, մենք ձեռքերդ մեր չեկնք աղտեղեր  
 Անոնց արեան մէջ, և սակայն հանապազ  
 Գաղափարի քարոզներուն կը պարսէք  
 Անարգանքներ ու քարուկանք: —

Մօ՛տ է այգն,

Հայ՝ օ՛ն ելէք — կը գոչեն դեռ ու կ'երթան  
 Առաքեալներն լուսոյ ու դեռ իրբըր ձօ՛ն  
 Կ'ընդունին ծաղրն, ու դէպ ի խայճ կ'երթան  
 Դեռ անվեհեր, և կը կըրեն բովանդակ  
 Վերջին տազնապը՝ տեսնելու մարդկութիւն  
 Մ'այնքան անգութ որ չ'ըմբըռներ, ու կ'երթան  
 Գոչելով միշտ ու դեռ. — Թէ ժամը մօտ է  
 Կոխուածներուն, նեղուածներուն. կը զըտնէ  
 Շնորհ ով որ նախ կը զգաստանայ: —

— կը ժըպտի

Ախարհը կոյր, եպիկուրեան, ու փըռուած  
 Դիպակներով վրայ ոսկեթեւ, կը մընչէ  
 Յօրանջելով.

— Այն այգն. ո՛հ, դեռ հեռու է: —

## Ո՛՛՛՛ ՄԵՌԵԱՆՆԵՐ... .

Կը արնարնան վանդակներուն քով անցորդք  
 Գաղտնիքներուն ի դէտ կանաչ ըստուերաց .  
 Բայց ըստուերներն ամայի են, մակարոյծ  
 Խոտն ու մամուռն՝ որոնք կ'անին շիրմաց վրայ՝  
 Կը հագուեցնեն հղինապատ ամառնոցն :

Ու նըստած հոս՝ կամարակապ սրահին տակ՝  
 Ուր յաճախ հայրըս իրիկուան դէմ կու գար,  
 Կը նայիմ հս, ու ստուեր մը զիս կը կարծեմ,  
 Ստուերն անցեալի մը հեռագոյն, շատ հեռու,  
 Որ կենդանի անձի մը ձեւն ունի լոկ :

Կը տեսնելի լուսնակին դէմքն ըսպիտակ  
 Ծառերուն մէջ, պարը սակայն գեղեցիկ  
 Երազներուն՝ ալ հետը չէ. կը նմանի  
 Կառափի մ' արդ, որ ինձ հեզնող քըլքիջով  
 Կարծես կ'ըսէ. «Չե՛ս տեսներ. ես ալ մեռայ» : —

Հրեշտակն ահա, գանչը զոր ան կը լըսէր,  
 Մի և նոյն ձայնն... ու հեռաւոր ժամերուն  
 Յիշատակները կը դառնան. զուարթ օրերն,  
 Իրիկուներն անուշ. ներքին հոգեվարք  
 Մը յուշարժարծ որ կը բզբտէ սիրտն յօշ յօշ :

Ո՛՛՛՛ մեռեալներ, խօսք մ'ըսէք, խօսք մը, աղէ...  
 Բողոք, հոգիս ականջիս հետ կ'երկընցնեմ...  
 Ամպ մը կ'անցնի կը զոփայ խոտը սարսուռն...  
 Ո՛հ, դուք անշուշտ կը լըսէք զիս, կը խօսիք  
 Ինձի... և ես եմ որ ձեզ չեմ հասկընար :

## Ե Ր Կ Դ Ի Մ Ի Ն

— Կը ժըպտի՞ս. ես սըրտիդ մէջ կը կարդամ,  
Դուն ցընծութիւն կը տեսնես  
Ապագային մէջ: —

— Կը խարուիս. միտքս ինկաւ  
Իմ մէկ պարապ սէրըս հին: —

— Կը հառաչե՞ս:

Ես սըրտիդ մէջ կը կարդամ.

Կը թիւնէ այն յիշատակն

Ամէն քու ջինջ երազներդ: —

— Կը խարուիս.

Ֆաղադութիւնն իմ մէջս իշաւ վերջապէս:

Կը խորհէի... թէ հոգին

Կը հանգչի լոկ այն ատեն

Երբ կը լըռեն երազներն: —

— Կ'հառաչէիր և սակա՞յն:

— Ո՞վ կատաղի

Հետաքըրքիր: Ընդունայն սէրն, արցունքներն,

Պատերազմներն՝ էին, աւանդ, կեանքը, ո՞հ.

Բայց սըրտին այս լըռութիւնն՝

Որ է փակեր բոլոր դըռները՝ հանդէպ

Սիրոյ ամէն արձագանգի,

Այս լըռութիւնն... է՞ գուցէ

(Կը խորհէի քիչ առաջ) մահը ինքնին: —

?

Ու չըկըրնա՛լ ըսել ինչ որ խորքը այս  
 Իմ հոգիիս կը սարսըռի կը յուզուի  
 Անդուլութեամբ. ու չըկըրնալ պարզել քեզ,  
 Ո՛վ տենդ, հըրճուանքս միանգամայն և տան—  
 [Զանքս:

Սէր չէ՛, սէր չէ՛. երիտասարդ սիրտն երբեմն  
 Անպէս կարծեց. ու մահուան երգ յօրինեց.  
 Արդ լաւ գիտէ որ այս գոռու՞ն աւելի  
 Պերճ, աւելի ազնիւ, հըզօր է քան սէրն:

Ստէպ այն ժամուն երբ կը դադրի վառ աշխոյժն  
 Ախատութեանց, ու դաշտին մէջը հեռուն  
 Կը թափառի երգ մը՝ հանդարտ իրիկուան,  
 Խլած է ինծմէ արցունք ծածուկ զօրութիւնն.

Հանդէպ ծովուն՝ որ մոլեգին կը մըղէր  
 Մարտ մըրըրկաց դէմ, ու կը հասնէր մռնչելով  
 Վեր կայմերուն, այն անծանօթ բարախումն  
 Երկայն ժամեր անշարժ գրաւեց մոգեց զիս.

Ու երբ երկինքը կը վառէր կայծակն հուր  
 Սեւ լեռնեբուն մէջ, և որո՞տը հեռուն  
 Գոռալ կը թուէր մարդոց ահեղ սպառնալիք,  
 Ուզեց որ այն ձայնն ունկընդրեմ՝ ընկըղմած.

Ու ցինին պէս պիտ՝ ուզէի մըղել զիս  
 Վե՛ր վե՛ր մէջն այն պատերազմող զօրութեանց,

խուզել, կորզել գաղտնիքը մեծ, ու կարչնեղ  
Հապուռններով սեղմած ձրգել երկրի վրայ.

Պիտ' ուզէի շաղբին նըման արձակել  
Ազատ թըռիչ մ' անձուկ ու նեղ այս վայրէն,  
Թեւերըս լայն պահ մը սըփռել տարածել  
Փոքրիկ երկրին վըրայ, 'ւ անհունը գըրկել:

## Մ Ե Մ Ե Ր Ո Ւ Ո Գ Ի Ն Ե Ր

Ա.

Գերեզմանին ոչ սառուցիկ կուճերէն  
Փակուած հանդէպ լոյսին այգուն ու մուտքին,  
Այլ լեռներու վեհութեան մէջ բացօթեայ,  
Այլ մարտագոռ ովկիանին բոմբիւնով,

Ահա ոգիք՝ արեւափառ քաջարի  
Ճակատներով՝ կը փայլակեն մըտածման.  
Ահա հերոսք, ճըշմարտութեան առաքեալք,  
Անծայրենի ոլորտներու ծարաւիք.

Ո՛վ սուրբերու ուսսպետներու լեզունք,  
Ի՛նչպէս հոգին ձեզ խոկալով կը վառի,  
Ի՛նչպէս կ'զոփայ սիրտը սիրով վեհապանծ:

Կ'անցնին. զինեալն Աքիլ կ'ըողայ Հոմերի.  
Միքելանճէլը կը ժըպտի Տանդէի.  
Քորսիքացի կայսեր ողջոյն կու տայ Հէյն:

Մտարուած լոյսի մը մէջ մեծերը կ'անցնին,  
Արիներուն քաջայաղթ գունդը կ'անցնի,  
Եւ այն հազար դէմքերուն վրայ կը ծըփայ  
Լայնածաւալ միակ դրօշակ մը հովէն:

Ապուշներէն ծաղրուած մեծ խօսքը՝ վնհ  
կը ճաճանչէ աստուածային դրօշին վրայ:  
Սճէրք իտէալ: Ով որ քու ձայնըդ լըսեց  
Ձուր կը յուսայ չըքնաղագոյն քաղցրութեան:

Կ'անցնին մեծերը մին միւսին առընթեր,  
Ձի ծովուն մէջ ժամանակին՝ բիւր գետոց  
Կ'հաւասարին խառըն գոյներն ու կոհակը:

Սըրբանըւէր այսպէս միակ կարգով սեղմ  
Կ'անցնին քուրմեր, արքայք, ոամիկն ու աս-  
[տուածք  
Ուամենուն վրայ՝ փայլակնացայտ՝ ինք Քրիստոս:

## ՇԵԼԼԷՅԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ

Ազատ հոգի, կը տեսնե՞ս.

Հանդարտած սիրտ, կը նայի՞ս.

Հոս ժառանգներն երագիդ,

Քաջակորով որդիներդ,

Նըւագներով համախումբ

Պատկերըդ քու կը պըսակեն դափնիով.

(Կը սըտես, ով ձայն որ կ'ըսես թէ. — «Ոչ է»—)

Ազատ, յըստակ մըտածման  
 Ատառւածային ջինջ բիբիդ,  
 Կը փայլի նոր երազ մ' արդ  
 Ապագայի մ' արդեօք նոր,  
 Եւ ընդ առաջ վեհերոտ  
 Մարդոց միշտ մոլեթ պիտի վաղիւն յառաջէ...  
 (Կը սըտես, ձայն, որ պատասխան կու տաս, —  
 «Մոռ» —):

Թմի, հղբարք, օն, լըռեն մեր  
 Խօսքերը դառն ու դատարկ,  
 Լըռեն հանդէպ ջինջ ալեաց —  
 Որք արփւոյն մէջ կը խօսին —  
 Մարդոց երգերը՝ նըժգեհ  
 Բախտին... ահա յարուցեալին կը մոլնչէ  
 Մոլն աւելի արժանաւոր երգ մ' արի:

## Զ Ա Տ Ի Կ Յ Ա Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

Քիչ ատեն, ո՛վ Մահ, զայն անշարժ պահեցիր  
 Խաչին վըրայ. ու կըտաւին մէջ փաթթած  
 Քիչ ատեն զայն տապանին մէջ կրանիդեայ,  
 Արիմաթեայ քաղքենի, զայն թաղեցիր:

Կիներ, ի զուր կու լաք. թող լայ հոտն յիմար  
 Որ անոր գլուխը փուշերով պըսակեց:  
 Էմմանուէլն ամէն կապէ. արձակ է.  
 Կը բանտըի՞ միթէ անհունն, ո՛վ կիներ:

Ահա կու գայ Ան. կը խօսի. — «Տըրուած է  
 Ինձի երկրի իշխանութիւնն, ու նշաններ  
 Պիտի դընեմ ուխտապահին և ըմբոստ

Խեռին միջեւ, միշտ դարերու անըսպառ  
 Հողովման մէջ, բիւր ձեւերով ու ձայնով  
 Գոչելով. — Ո՛վ եզրաբազ, զիրար սիրեցէ՞ք. —

## Մ Ի Ս Դ Ի Ք

Տարին զիս՝ օ՛ր մ՛ հեռաւոր՝  
 Մութին մէջ մայր եկեղեցւոյն, շքփելու  
 Փոքրիկ բերանըս աղով:  
 Կըրակ կըտրած շքշեցի  
 Ծիրանեգոյն դէմքըս մէկդի կընճռելով.  
 Ու կեանքի այն իմ հինգ կամ վեց օրերուս  
 Մէջ հաւաքուած բոլոր արցունքը լացի:

Ըսին ինծի զայն. սակայն իմ մըտքիս մէջ  
 Չըզըծուեցաւ նըշան մը, ստուեր մը, ո՛չինչ...  
 Արդ, եթէ մէկն ըսէր ինձ. — Քեզ խանձարոտարք  
 Եղա՛ւ՝ հազար տարի մը կայ՝ Յունաստան,  
 Ու եղար մին իր հարիւր կես աստուածներէն,  
 Եւ աւելի ուշ մանկիւսիկ մ՛ չենրիկոս  
 Ուրերորդի, քերքող մ՛ յետոյ քրձքրձեալ,  
 Մուրող. — ըսէք — ինչո՞ւ պիտի չհաւտայի:

Կը յիշե՛մ մթթէ մըթին  
 Եկեղեցին, և ըզզացած նեղութիւնս.  
 Միթէ արցունքը կը յիշե՛մ յուսահատ,  
 Եւ աղօթող քահանային կերպարանքն,  
 Որ զիս շնորհքին կը նուիրէր.  
 Ինձ ըսին ալ թէ կ'նայէի շուրջըս ես,  
 Ըսին ինծի թէ երբ դարձայ բաց լոյսին,  
 Ծիծաղեցայ... արթուն էի, ողջ էի: —



## Տ Կ Ա Ր ՈՒ Թ Ի Ի Ն

Գիտեմ թուփի մը ես ծընունդն ազագուն,  
 Որ հովերու ամէն մի նոր փըշելուն  
 Դէպ ի միւս կողմ կը հակի,  
 Առանց խինդի, տանջանքի:  
 Երազկափըթիթ օրերուն, կամ ձիւնին տակ,  
 Չի շարժեր զինքն այլ փափաք.  
 Ատուած զայն այսպէս ուզեց,  
 Ու կ'անցնի կեանքը այսպէս:

Թէ ինչ են չի գիտեր սէգ  
 Դիմադրութիւնքը քաջերուն, յաղթանակն.  
 — Ուզելն — ինչ է չի գիտեր.  
 Չի ճանչնար զէնքը ձեռքին  
 Մեռնելուն փառքն, ռիւսերը բարկ չի գիտեր,  
 Վիշտերը չի գիտեր ան,  
 Զոր կը կըրեն լուսն ու մունջ  
 Սուսերամարտք անծանօթ:

Կ'ապրի... սակայն չի զգար ապրիլը գուցէ:  
 Անգէտ սիրոյ մըրրիկներու, զգըլխանքի՝  
 Բազուկն յուշիկ կ'երկարէ,  
 Զ'ընծիւղեր ոչ մի ծաղիկ.  
 Այսպէս քընքուշ սիւքին որ զինք կը շոյէ  
 Եղանակին մէջ զողտրիկ,  
 Այսպէս դըժնէ հովերուն...  
 Կ'նայի անոր արմաւենին... կ'անգոսնէ:

## Հ Ո Գ Ե Վ Ա Ր Ք

Հոս ամայի սենեկին մէջ, ուր աղօտ  
կը մըտնէ լոյսն՝ աղջամուղջ գորշ երկընթին,  
Եւ ծայրագոյն աշնան անծայր ընդարձակ  
մաղձոտութիւնն.

Հոս ջինջ ժամերն ամէն, ժամերը զըւարթ,  
Որոնց, աւանդ, կը փայլակէր ցուրտը երբ,  
Չըբի փոյթ՝ սուտ երագոց խորքը սուզուած.  
զըւարթ ժամերն,

Անսանձելի ուրուականները մահուան,  
Ժամեր, ամէնքն հոս խըմբուեցան, ընելու  
ինձ աւելի դառն ու մութ այս օրը մութ  
տազնապալից:

— կը յիշես — ինձ կը հարցընէ մին — եկայ  
հախ ես յուսոյ ճիւղիկներով քաղցրանոյշ,  
Ջորըս զըլխուդ համար ինձի աւանդեց  
բաստ մը զըթած

— կը յիշես — միւս մը կ'ըսէ — ես քեզ համար  
իջայ արփույն մարգերէն, քեզ բերելով  
Աչքերը կապ յստուածուհւոյն պարգեւներն՝  
ինձ յանձնըւած.

Պանդըխտուհին որ կու գար քու բնակարանդ  
Արեւելքէն, ընդունեցամբ զայն սիրով,  
Թէ մանաւանդ դէպ արեւմուտքը տըլխուր  
դարձուցիր աչքդ: —

— Ըսէ, կ'յիշմս — կը կըրկնէին համագունդ  
 Բալոր ստուերներն. — այն ատեն փոյթ չըրիր մեզ,  
 Լուսեղներուս, ու քեզ մըղեց խօլութիւն  
 մը ժանտաժուտ

Քիմեռներու ամպերուն մէջ, ու դէպ ի  
 Քողերն հեռուանց քեզ ակնարկող. երգերն այն  
 կախարդներուն վիմուտներուն մէջ յուշիկ  
 կը յածէին:

Ոչ ուր արփույն մէջ՝ ծիծաղին զգըլխանքէն  
 Գլուխնին հտեւ ձըգած զըւարթ օրհորդք  
 կը պարէին՝ զարկերակնին սնդմ՝ հըզօր  
 սիրողներէ,

Այլ կ'երթայիր միայն, սվ լուռ մեծուհի,  
 Լուսընկային քաղել մեռած ձայներու  
 Հովին մէջէն աւերակաց մէջ կորսուած  
 արձագանգ մը.

Ու ջախջախուած սափորներէ, ու կանաչ  
 Առագաստէն վայրի խոտոց ու մամոոց  
 կ'ելլէր դուրս չորս դիդ լեզէնը ծարաւ  
 ցընորքներու,

Վըհուկներու որոնց անունն է լոկ քաղցր,  
 Իսկ չարարուեստ կախարդական բըժժանքով  
 կը պըղտորեն մարդոց աչքին սեռն և սերտ  
 գեղեցկութիւնն.

Եւ արդ մեզի կը նայիս պիչ ու փափաքը  
 Նայուածքիդ մէջ կը վառէ հուր մը հոծ,  
 Եւ աղերսող հոգիդ յայտնի կը ցուայ  
 աչքերուդ մէջ,

Խոնջ աչքերուդ մէջ ուր շատոնց է այլ եւս  
Արցունքը չի հասնիր: Ո՛ւշ է, ո՛ւշ, և գո՛ւր  
Կը կարկանես մեզի ձեռքեր պաղատող.

մենք ցնորքներ ենք,

Ուրուներ ենք, ոստերը գիրգ թօշնեցան.  
Բախտէն ուրիշ հրաման չունինք մենք այլ եւս,  
Քան թէ, աւա՛ղ, ժամը քեզի աւելի

տըխու՛ր գործել: —

Ո՛վ խուճապներ, գըթութի՛ւն: Օ՛ն, ցընդեցէք,  
Իցի՛ւ մոռնար հոգին ըզձեզ: Սըրտին թափն  
Իրաւ մըտքին ստեղծած նըրբին թովչութեանց  
հնազանդեցաւ.

Եռանդն արի, չըքնաղ առոյգ հասակիս  
Հնազանդեցաւ մըշտաբորբոք անձկութեամբ  
Հետապընդիլ փախչո՞ղ թեւին հրգերուն,  
հրազներուն.

Եւ արդ խոնջ (մէ, ինչպէս խոնջ) ես կը տեսնեմ  
Այն չըքնաղ, չա՛ր ոգինհրուն չըւող գունդն...  
Անապատին մէջ մեծ՝ վերջինն ահա հոն  
անհետացաւ:

Բայց դուք, դո՛ւք ալ, ստուերներ անգութ, չէք  
Խաբէութիւնքն. հրազ, հրազ մը սնտոի [մըտքին  
Դո՛ւք ալ... Ո՞չ շո՛ւտ անհետացէք, կ'աղաչեմ.  
գուցէ ոչ քնաւ

Արեւելքէն եկաք դուք, ինձ բերելով  
Կանաչ ճիւղերն ու ծաղիկներ, գուցէ դո՛ւք  
Ա ուրիշ բան չէիք՝ թէ ո՛չ ոգիներ  
չըքնաղ ու ժանտ:

Ի բաց ուրեմն, օ՛ն քիմնուներ, ցընորքներ,  
 Ստուերներ, ի բաց հիկատէներ թունաւոր,  
 Օրհասականը հուսկ յանուն Աստուծոյ  
 Թողէք հանգիստ:

### Յ Ա Ղ Թ Ա Ն Ա Կ

Շնորհակալ եմ, շնորհակալ, ս՛կ թըշնամի:  
 Ինչ որ իմ մէջըս զըձուձ  
 Խաբեպատիր և ըստոր  
 Կը սնուցանէր ոգի՛ն չարի՛ ամէնն ալ  
 Արդ խորտակուած հոգիիս մէջ կը լըռեն:

Ու սեղմըլած ձեռքերով,  
 Առանց լացի, լուռ ու մունջ,  
 Դէմքով անդորր ու հանդարտ,  
 Սըրտով խոցուած՝ և սակայն խեռ և ընդվիզ,  
 Մըտիկ կ'ընեմ ես, փոթորկումը ձայնիդ:

Ու սէգ պերճանք կ'իմանամ  
 Ե՛ս որ կը զգամ զիս քենէ  
 Հըգօրագոյն, ս՛կ դու սէր  
 Մարտիրոսաց, ս՛կ դու մահուան հարազատ,  
 Ո՛վ դու դահիճ աստուածային, ս՛կ դու ցաւ:

## ՊՂՆՁԷ ԴՈՒՌԸ

Մարդ մը կը գարնէ պըղընձէ դուռ մ' հին .  
 Բայց լըսող չըկայ : Լուսինը հազիւ  
 Կ'արձակէ նըշոյլ մ' աղօտ ըսփինքսէ՛  
 Ջարդերուն , և թուիս ձեռքին վրայ անոր  
 Որ այն պըղընձէ դուռը կը գարնէ .  
 Ձի լըսուիր ոչ ձայն և ոչ պատասխան :  
 Արձագանգը լոկ մութ նեղ անցքերէն  
 Կը տանի կոփիւնը հարուածներուն  
 Վարի ճահիճին , մնած դաշտին շուրջն ,  
 Ուր ջրանցքներուն մէջ կը շողայ ճընշուած  
 Կանաչորակ ջուրն , ու թեքեալ ջրուոին .  
 Ժանտարեր տիղմէն կը դողայ սարսուռն :  
 Ձի սփոփեր թըռչուն հիւրերու գեղգեղն  
 Անապատն այն՝ ոչ սեւ աշտարակաց  
 Վրան լուսնակն ունի բուն իրեն ընկեր :  
 Ո՛վ գիտէ որչափ ատենէ ի վեր  
 Ուղեւորիկն այն կը սպասէ , որքան  
 Ատենէ ի վեր կը գարնէ դըրան  
 Շուրջն ունենալով ճահիճն անիծեալ :

## Յ Ն Ո Ր Ք

Կոկոռներէն մեռած՝ զոր սառը խեղդեց  
Աւազանին մէջ վաղեմի պարտէզին,  
Փութով ծընի՛ր ծիծղուն ծաղիկ մ' հրաշալի:  
Գաւազանովըդ մոզական, ուզէ՛, օ՛ն,  
Կատարել հրաշքն, սի՛վ քաղցրանուշ տիրուհի  
Գիշերներուս և օրերուս համօրէն:  
Ցըցուի՛ր ցօղունն, 'ւ արշալոյսի գեղեցիկ  
Քացուի բաժակն երփով, բաժակ մը անհուն  
Արեւակնեան ջրանցքին վըրայ սառնապատ.  
Ու շուրջն հեղու հիւսիսայգի մը պէս լոյս,  
Տօսախներուն մէջ շինջ Երոսը ժըպտի,  
Ժըպտին յետին ծնունդին սիւներն հերմազուի.  
Ջըմեռն Ապրիլն հասած կարծէ՛ սիգախրոխտ,  
Ու իր գորգերը ծալլելով ըսպիտակ,  
Փախչի, ու ծանրը բեռը զինքն ըսպաննէ:

## « Կ'ԸՍԷՐ ՀԻՒԱՆԴՆ... »

Կ'ըսէր հիւանդն. — Ինչո՛ւ չի գար: Շատ երկայն  
Եղաւ սպասումը տանջանքիս ամհհի: —  
Գիշերին մէջ քառատրոփ դռոյթ մը դրընդեց  
Ու սեւ ձիուն վըրայ բոլոր ճեփ-ճերմակ

Սրացաւ արագ լայնափեռիկ դըռներո՛ւն  
Առջեւէն: Ան կարկառեց իր բազուկներն  
Ու կանչեց զայն իր անունովը. — Մահ. Մահ: —  
Ակընթարթի մը մէջ ան դէմքը շըրջեց.

Յետոյ չըլար իբրիւ թէ բան մը տեսած  
 Եւ կամ լըսած, մըտրակեց դէպ ի աղբիւրն՝  
 Ուր աղջընակ մ'երգելով ջուր կը հանէր,  
 Զինքն հափափեց, լերան հտեւը կորաւ.

## Ժ Ա Մ Ը

Ուրիշ հընչիւն մ'ալ ակընթարթ մ', ու շըչելով  
 Եւ հեւալով շառաչիւնին հետ որոտման,  
 Նորէն սրացաւ գընաց: Ազգերը կը վազեն  
 Շտապ տազնապաւ, կը խըռնըւին, կը յարձակին  
 Կառքերուն վրայ: Մն, փութացէք, զի չի սպա-  
 Շոգեկառքը... [սեր

Առանց ազդի ու շառաչի,  
 Կու գայ նոյնպէս ուրիշ սրընթաց ուղեւոր մ'ալ,  
 Ու մինք թաղուած հեղգ թըմրութեան մէջ ան-  
 [բեղուն

Օրերու, չենք տեսներ, լըսեր եթերաճեմն:  
 Կըրնայինք լաւ իսկ ընդ առաջ փութալ անոր,  
 Կորգելով գործ ու մըտածում փառքի, սիրոյ  
 Գաւառներէն. բայց պարապորդ, թոյլ, կը զըն-  
 [նենք

Պիշ պիշ ձեւերը ամպերուն յեղափոխուկ,  
 Կամ հին անուրջ մ'երագելով, կը տատամսինք  
 Կը դանդաղինք հըրաչքներու ապուշ յոյսով:  
 Այսպէս ոգին մինչ կ'ուշանայ կախարդուած սին  
 Ըտտուերներէ, ահա անցած է Ճեպընբաց  
 Մը լուռ ու մուռ յաւիտեանները դէպ յաւէժ:



## ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ

Կոր՝ առջեւէս կ'երթար՝ մանկիկ մը վըզին,  
 Ու մանկիկն այն մամին ուսին վըրայէն  
 Երկընցնելով իր գիրուկ դէմքն ու գանգուր  
 Վարսերու պսակն անոր հտին կը նայէր:

Ո՛վ նորափթիթ, թարմ դէմքն, ո՛վ ուս զառա-  
 [մեալ:

Կործանական, հինցած որմի մը՝ այսպէս  
 Փակ բակէն վեր ելած կեռիքը դէպ ի  
 Վարդ մը քնքուշ՝ աչք ծիծաղկոտ՝ կ'երեսի:

## ԼՈՒՍԻՆ ԻՆ ՀԱՄԱՐ

Հարցընել ի՞նչ կ'արժէ թէ օր մ' ունեցա՛ւ  
 Փերէ տարբեր վիճակ: Թեւերը բացա՛ւ  
 Օդը երբեք օթարանին մէջ լըռիկ

Ուր երագուն հոգին ըստէպ կը սլանայ,  
 Կամ ջուրերուն հընչուն շիթերը՝ վըճիտ  
 Արեւակնեան այրերուն մէջ ժըպտեցա՛ն:

Միթէ գաղտնի՞ կը մնայ մենէ որ հազար  
 Ու բիւր աչքեր պատանեկաց, ծերերու,  
 Մառախլապատ բիբեր, բիբեր լուսաշող

Սիրահարուած կանանց աչքեր, ակնարկներ  
 Ճըզնաւորաց, վառ՝ աղօթքի կըրակով,  
 Արբանեկաց և կամ թէ սուտ աստուածոց .

Գարձան անոր, լեցընելով զանիկա  
 Քիմնուներով, երազներով: Խրոխտապանձ  
 Մարդկութեան թնչ օգուտ զիտնալ ուրիշ բան:

Ան՝ անարատ սուրբ տուփն է որ կը պահէ  
 Բիւրաւոր այն աչաց նըշոյլն ու զաղտնիք  
 Վե՛հ ցընծութեան, տազնապնիրու կամ թէ դառն՝

Որ այն նըշոյլը կը պատմէր. պատանեաց  
 Գիտէ սպասումը կարճամիտ, և անդուլ  
 Ողբը ծերոց՝ աւոյգ զըւարթ հասակին.

Ու հիմա իսկ կըրնանք նայիլ անոր վրայ  
 Առանց որ մեզ խօսի անկէ աշխարհն այն  
 Տընորքներու, ուրուններու, յայտնուած

Անհուն մնած եղբայրներու զունդերէն,  
 Որ զայն իրենք ալ տեսան՝ ջինջ զիշերով՝  
 Շըրջապատուած մանեակներով շոգելի,

Կամ իբր հայլի ջինջ որ յուշիկ կը կըտրէ  
 Կ'անցնի կապոյտ անդունդներն՝ իր համբընթաց  
 Համբորդութեամբ լեռներուն վրայ և ծովուն,

Գորովագին գըթով մեզի նայելով:

## ՄԵԴԵՈՒԻՆՔ ԿԱՐԴԱԼՈՎ

(Խօրն իշխանուհիները)

Հին պալատներ անտառներու մէջ թաւուտ՝  
 Ուր բնաւ երբեք չի թափանցեր արեգակ...  
 Ետն հեռաւոր կու լայ, կու լան աղբիւրներն,  
 Ու կը թըւին խօսքերը ողբ ու լալիւն  
 Այն անսովոր պալատներուն բընակչաց:  
 Ցընորքներ են, և սակայն այն ցնորքներուն  
 Կը վառվըռին երակներն հուր եռանդով,  
 Երազներու, վըշտի գաղտնիք մ'ամէն բան  
 Կը ծըրարէ, կը լեցընէ, կը գրաւէ:

Մութ, ամայի ամրոցին մէջը մինչ հոն  
 Մահը կ'իշխէ, ուր կը ցաթէ Լուսընկան  
 Հազիւ երբեք նըրբին նըշոյլ մ'արծաթի,  
 Անտառախիտ բըլրէն անդին կը լըսուին  
 Նաւաժարներն՝ որք առագաստն հովին տուած՝  
 Նաւակայքերը կ'երգեն ուր ժիր, արագ  
 Գործը կ'եռայ, ու երկինքները ազատ,  
 Ու երկիրները զըւարթ ուր կոլիբրին  
 Կը պըճնէ բարձր արմաւենեաց սաղարթներն՝  
 Արեգակին ծիրանեփառ մուտքերուն:

## ԲԱՆ ԱՍՏԵՂ ԾՈՒԹԻՒՆ

Ո՞ր իրիկունն էր վրճիտ: Ո՞ր երկընդէն  
Դէպ ի դըռները գաղթելով երկրաւոր,  
Իշաւ զըրթածս այս որ պըսակ մը կապեց  
մահուան ճակտին պնմահական՝

Նըշաններու, երազներու, խորհուրդի.  
Հին դիցուհի, բնաւից յաղթող՝ որ վառեց  
Փայլակներ կոյր աչքերուն մէջ Հոմերի  
բոցեր սըրտին մէջ Տանդէի:

Ամենուրեք կ'ապրի, և մերթ կը ժըպտի  
Զինախաղաղ գագաթներուն վրայ Ալպիանց:  
Մերթ կը հագնի մէզն ու մըռայլ, սրանալով  
մըրրկին թեւին վրայ ու կ'երգէ:

Անոր ամէն ինչ յայտնի է. մորենին  
Ու ցածուկ խոտն անտառներուն՝ ուր արեւ  
Զի թափանցեր՝ ու մամուռն յաղթ կաղնիին  
խօսքեր ունին անոր համար:

Ան՝ որ սարսուռն կը բաբախէ մոռուչին մէջ  
Ովկիանուն. որ ըզմայլման մէջ սիրոյ  
Կը բանայ նշոյլ մ'անհունութեան՝ անցնելուն՝  
մեր ուշադիր սըրտին առջիւ...

Շիրիմներուն մէջ իսկ անի կը սփոփէ  
Խորհրդաւոր իր ձայնով մեծ լըռութիւնն.  
Ամէն հէք խաչ ճաճանչներով կը պըճնէ,  
կը պըսակէ դրասանգներով:

Գիշերներուն մէջ Ապրիլի՛ ցիրուցան  
 Զբքնաղ վարսերը կաթնաթոյր քողին վրայ,  
 Նայուանձքը խոր դէպ ի աստղերը լռովի՛  
 աշխարհ անցնիլը կը տեսնէ:

\*

Ո՛վ դուք, որ ձեր բարախումներն ու տանջանք  
 Եւ ըզըզվտանքը թաքթաքուր սէրերու,  
 Փեքեան թափով կը ցըրցըքնէք հովերուն  
 ինչպէս թէ բուռ մը ծաղիկներ:

Երիտասարդ քերթողներ, զայն տեսաք դուք,  
 Լաւ լըսեցիք որ ձեզ կ'ըսէր Դիցուհին.  
 — «Երկիրն ուրիշ սէր, տազնապներ, գաղտ-  
 իր ծոցին մէջ կը ծըրարէ: [նիքներ

Անա աղօթք և հեծութիւնք ու վայրագ  
 ձիչեր ճընշուած, հիւանդ ու խեռ սըրտերու:  
 Զէ՞ք լըսեր դուք զանոնք: Զայներ են հազար,  
 բիւր, անոնք ձեր եղբայրներն են

Որ կ'աղաչեն. են տաղտապեալ հոգիներ  
 Որ դըժընդակ բեռան ներքեւ կը հեծեն:  
 Երգե՛լ միայն գիտէք դուք: Օ ն, երգեցէ՞ք.  
 բայց կ'երգէր ինչպէս Աղկէսս:

Ու տաղին տունն ըլլայ բարբառ շեփորի՛  
 Մարտիկներուն. երգը շանթէ կայծակներ  
 Ուրացողին, բըռնաւորին, վատին վրայ,  
 նըման սուրի հարուածներու:

Բայց ոչ լուսկի գայրութի, ոչ դրուժան թոյն  
Իջնէ արդէն իսկ փըթուռոյց սըրտից մէջ.

Այլ բարձրանայ երգ մը ազատ ու զըւարթ,  
Երգէ յաղթողն ու յաղթըւող: —

Չըլըսեցի՞ք որ զայս կ'երգէր ձեզ, ճ՛վ քաջ  
Որդիք մեր, կամ անոնց առոյգ զինուորներ.

Ու չըհասա՞ւ ձեզի կեցցէն մեռելոց  
որ արթընցան իր անցնիլուն...

Կ'երթայ յաղթողն ու նորահրատ եռանդներ  
Եւ հըզօրեղ բարախուժներ կը վառէ,  
Խորհըրդաւոր քօղերը մերթ ըստուերով  
պատած, պսակած մերթ ճաճանչով:

Գիշերներուն մէջ Ապրիլի՛ ցիրուցան  
Չըքնաղ վարսերը կաթնաթոյր քօղին վրայ.  
Նայուածքը խոր դէպ ի աստղերը լըռիկ  
կը տեսնէ իր անցնիլն աշխարհ:

Ծ Ն Ո Ի Ն Դ 1895

Եընունդ է, ճ՛վ հեռաւոր  
Եղբայրներ, ճ՛վ փակուածներ  
Շիրիժներու մէջ, և դուք  
Մոռացումի անյատակ  
Վըհերուն մէջ անհետացած ուրուներ.

Ես բազուկներըս ձեզի  
կը կարկառեմ, սըրտաբեկ՝  
Արտասուլաթոր դէմքըս ես

Ձեզ կ'ուղղեմ, ձեզ՝ որ տեսաք  
Կեանքին սեմէն իմ վեր ելլելըս դէպի:

Ո՞չ, իմ չորս կողմըս դարձէք.

Իցի՛ւ ձեռնէ լըսէի

Ան երբեմնի խօսքը ձեր.

— Եկո՛ւր, եկո՛ւր, ատենն է —

Ու լըսէի անուսիս կոչը ձեռնէ:

Գորովագին, քընքչօրէն

Ձեռքըս փոքրիկ բըռնըւած

— Ինչպէս այն օրն հեռաւոր —

Ըզգայի ես ձերինէն,

Ու 'լլար գիշեր, եկեղեցին փայլէր վարն:

Այսպէս ձեռնէ պաշտպանուած

Երթայի ես աներկիւղ,

Խորհուրդներով, ստուերներով

Լեցուն ճամբէն ընդարձակ,

Եւ մտածումներըս բոլոր լոյս ճայթռէին:

Չըզիտնայի որ կախուած

Է վերեւ մութ ապագան

Մըրրիկներով մօտալուտ.

Երազէի նոյն նըման,

Իբր այն գիշեր՝ երազ մը մեծ աստղերու:

Ինձ անծանօթ ըլլային

Խօլ աշխարհն, անփ մը հողի

Համար՝ անմիտ նախճիրներն,

Մայրերը՝ որ որդեկաց

Կը կարկառեն ի զուր ձեռքեր յուսահատ.

Չըզիտնայի ոչինչ, լոկ,  
 Իբր այն ատեն՝ ձայնին մէջ  
 Կամ մանաւանդ թէ երգին  
 Չանգակներուն, ըզգայի  
 Խոստում մը մեծ, և մեծ ներում մը նոյնպէս:

## Ա Բ Ե Ն Ե Ջ Ե Ր

Արենեզեր ծեր մ'է տըխուր և անուշ.  
 Ունի աչքեր կապոյտ, աչքեր անսովոր,  
 Ուր գուցէ շատ լացին (գուցէ ես կ'ըսեմ),  
 Ժամանակաւ սակայն. արդ են ջինջ, վըճիտ  
 Ինչպէս երկինքն՝ երկայն մրըրկէ մը յետոյ:  
 Արենեզեր իր գրասեղանին առջեւ սեւ,  
 Հատորներու միջեւ սեւ, ինքն ալ բուր  
 Կածկըւած սեւ պատմուհանի մը մէջ՝ չէ  
 Այսօր հանգիստ, չի զըտներ այսօր ս'չ թուղթ  
 Եւ ոչ զըրիչ հնազանդ, ամէն բան կ'իյնայ  
 Ձեռքէն, զըրփերը կը հետեն, չեն բացուիր...  
 Օ՞հն արդեօք խիստ սաստիկ է, ս'վ Արենեզեր...  
 Կը մըտնէ բաց պատուհանէն հոտ մը ներս,  
 Թարմ հոտ մը նոր տերեւի, պարզ երկընքի...  
 Արենեզեր արդ կեցաւ զըրփեր քըրփերէ,  
 Աթուին վրայ, աչքն անծայր դաշտը դէպի,  
 Հին երազի մը մէջ սուզուած կը մընայ...  
 — Օ՞ն կը սրանայ ժամն: —

Ոտք ելած է արդէն,  
 Խնամով ամէն զըրփի փոշին կը մաքրէ,  
 Ու կը ծալէ, իրարու վրայ կը դընէ  
 Ցըրուած թուղթերը. կ'որոշէ տեղ մը նոր



Ամէն բանի, ու սենեկին մէջ տակաւ  
 կարծես ամէն ինչ կը ժըպտի, կը փայլի...  
 Արհնեզեր, ո՞վ կը սպասես: Երևի ի ծուխ  
 կը ծածանին վարագոյրներն, ուժգին եւս  
 կը մըտնէ հոտը կանային, նորափթիթ  
 Երգկանց... Երկինքը գոյնն ունի հեռաւոր  
 Այն ապրիլին... կը յիշե՞ս դուն... Անցեր է  
 Անքան տարի... Արդ Արնեզեր կը նըստի.  
 Ոչ ոքի չի սպասեր ստուգիւ. և զինքն ո՞վ  
 Պիտի յիշէր, ոչ ոքի չի սպասեր ան:  
 Մըտերիմ սիրտ մը շունեցաւ ան երբեք.  
 Մեռած են քիչ ազգականներն ալ բոլոր...  
 Եւ Արնեզեր շատ տարի է կը փընտռէ  
 Գըրքերուն մէջ խօսք մ' որ իրեն բացատրէ՝  
 ինչո՞ւ ծընաւ ու միշտ թըշուառ ապրեցաւ...  
 Բարին... գործից սրչափ և ինչպէս կըրնար  
 Միշտ. շունեցաւ բնաւ ըսփոփանք մ' ուրիշէն:  
 Բայց կը յուսայ, և կը հաւտայ, կը հաւտայ՝  
 Դարուց ի դարս արի՛ առոյգ իր հոգւոյն:  
 Դեռ կարճ աքսոր մ' և ապա ոտն ոտն ելլէ  
 Պիտի ազատ՝ դէպ ի նպատակն անծանօթ...  
 Ինչպէս ամէն ինչ կը փայլի շուրջը զուարթ.  
 Հիւր մը, սպասուած հիւր մը անշուշտ պէտք է  
 [գայ...

Գաղջ իրկընծով՝ աւելի հոծ կը հասնի  
 Անուշակ հոտը խոտերուն՝ նորածիլ  
 Երգկընեբուն: Պատրաստ կեցիր, Արնեզեր:  
 Ահա կու գայ, կու գայ... Ինչպէս սիրտը ծեր  
 կը բարբախէ, կ'ընդոստնու. ինչպէս աչքերն  
 Ըսպասումէն կը սքողարկուին... կու գայ նէ,  
 Ահաւասիկ, հուսկ մէկը զինք կը փընտռէ...

Վարդ իրկընով անոր համար եկաւ նէ,  
 Անոր համար եկաւ մէջէն մարգերուն՝  
 Ուր մանուշակը պատկառուկ կը սքողուէր՝  
 Բոլոր անուշ բոյրով տոգոր, ու գոգն ալ  
 Լի վարդերով: Ճերմակ՝ ճերմակ ըզգեստով.  
 Աչքերը ջինջ, շրթուկքը բաց՝ խօսելու  
 Թեթեւ սիւքի մը պէս, ձեռքէն բըռնելով  
 կը մըրմընջէ անոր մեղմով. — Օ՛ն, եկո՛ւր: —

### Փ Ո Ր Չ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հեղեղատին բոմբիւնին՝ վրայ շառաչուկ  
 Երկընցուցի գլուխըս՝ նըսեմ պարեխէն,  
 Կըրծուած հազար գետերէ:  
 Ու մտածեցի. — Ի՛նչ վեհ թաղում՝ խորափիտ  
 Անդունդներուն մէջ այն՝ որունք առ յաւէտ  
 Կենդանի են՝ մըրբիկներու, ձայներու  
 Կոհակներով կենդանի:  
 Ա՛յսպէս, ա՛յսպէս նըւագել  
 Չայնով մ՛ հըզօ՛ր աւելի  
 Քան փոթորկին անտառներու մէջ մըրբկումն,  
 Ուժգին թափովը ծովուն:  
 Բայց զի հոգիս իմ այս ի գուր կը փընտոէ —  
 Մըռընչելու համար գոչմամբ մը սէգ, խրոխտ  
 Որմէ դողան վըհերը խոր, գագաթներն, —  
 Տաժանելի իր ուղին  
 Դըժնէ և ժանտ վիմուտներուն մէջ քանին.  
 Որովհետեւ անցքը վըսեմ չի բացուիր,  
 Ու ջինջ, ուժեղ կոհակօք  
 Յանգերը չեն դուրս ժայթքեր

Նոսրուն հանդէպ փրորնչելով փառագոչ,  
 Պարոյրներէն մամուսպատ  
 Քարաժեռին որստող՝  
 Լաւ է շիթի մը նըման  
 Յատակն իյնալ, անհետանալ, կորսըւիլ...

## Մ Ե Ռ Ե Լ Ի Ն Մ Ա Տ Ն Ի Ն

Կրօղը զայն՝ արդ ունի ձեռքեր խաչածեւ  
 Մերկ և սառած, և զանոնք չի կարկառեր  
 Բընաւ, ոչ ալ անոնք կը զգան սարսուռէ:  
 Արդ այն մատնին կը շողայ իմ մատիս վրայ:

Կը շողշողայ օրունան լոյսին ու ջահին  
 Վառ ցուքերուն, ինչպէս երբ ան պատանւոյ  
 Զուարթածաղիկ գլուխը աընկած կարող էր  
 Հարցաբանել բոլոր հրաչքներն աշխարհի:

Զեռքըս կ'երթայ թուղթին վըրայ, և ակէն  
 Փայլատակներ կ'ցայտեն: Ե՛ս ալ, երբոր կարճ  
 Օրն աւարտեմ, պիտի մաղթեմ որ ուրիշ  
 Մատ մը դընէ այս միեւնոյն մատանին:

Ու երբ մենէ քիչ դիւրաբեկ չըրջանակս  
 Այս կայծկըլտայ ուրիշ ձեռքի մը վըրայ,  
 Պիտի ես ալ ըլլամ երկրի տակ, անշարժ,  
 Մարդոց ամէն տըռամներուն անտարբեր:

Բա՛րէ... կարծես երազի մէջ կը տեսնեմ  
 Որ մութ ճաղին մէջ կը փակեն զիս ընդ միշտ,  
 Ու կը զգամ իմ մըսիս վըրայ սալացած՝  
 Պաղ որդերու դանդաղ սողումն ու ծըծում:

Բարէ... գուցէ, լոյս արեւով, պիտի այս  
Դեղընցած թուղթն ազատ ապրող մը գըտնէ  
Հին թուղթերու միջեւ, այս էջը՝ զոր արդ  
կը շօշափենն ահա տարուկ իմ մատներս:

Պիտի տեսնէ այս իմ թուղթին վրայ գըծած  
Չողերը նուրբ, զիս կեանքին շի գգացումն երբ  
Վեր կը բըսնէ, կը թընդէ զարկս ու կ'տեսնեմ  
Կ'լըսեմ, կ'ըզմամ, կը բարախեմ, կը մտածեմ:

Պիտի հարցնէ. - Սկաւալուք էր քե խաժակն...  
Աղուտ՞ր էր... Ես ալ բանտիս մէջ մակարբեան՝  
Վարը՝ ժըպտիմ պիտի ծիծաղն ահռելի  
Մեռելներուն՝ որոնք չունինն ալ շըրթունք:

### Խ Ա Ղ Ա Ղ Ո Ի Թ Ի Ի Ն

Կին մը քողաւոր և տազնապափոյթ  
Հասաւ հոն ուր հետ ժողովուրդ մ' ըմբոստ  
Կը խեթկէր ուրիշ մ', ու տէգը տէգին  
Կը կոփէր, արիւնը՝ պըղտոր, նըսեմ  
Կը հոսէր՝ ցանցառ աստղերուն լոյսով.  
Երկընցուց ձեռքերն ու գոչեց. — Բաւ է:

Ան ատեն հեռուանց, գիտախօսի, գունդ գունդ  
Մայրերը հկան, ու գետին ծըռած  
Սըրբեցին արիւնն ու վեր վերցուցին  
Քաջերը վիրած... Կ'իջնէ մութն՝ ահեղ  
Նախճիրին վըրայ, շահին լոյսն յայտնէ  
Դէմք մը մահահոտ կամ դիակնակոյտ:

Յըցուած դրօշներուն շուրջը չի կան ալ  
 խօշիւն, մըռընչիւն մոլեգին մարդոց,  
 կը լըսէր երկինք լոկ քանի մ' հառաչ,  
 կամ հեքն հատկըլեալ թասուն կուրծքերուն:  
 Երբ օրը ծագեց, արեւելք դարձած  
 Քօղերը ձըգեց տազնապափոյթ կինն,

Ու երեւցաւ ջինջ, ժըպտուն՝ արեւին:  
 Միակ և յըստակ խօսքը որ ըսաւ  
 Մործորներուն խորքն հընչեց որոտուն,  
 Հանեց արիւնտտ կալերէն վարդեր,  
 Ակօսներու մէջ հունձքեր, ու մարտին  
 Դըժխեմ խօլանքէն՝ աշխարհ մ'ազատ դուրս:

## ՏԻԿԻՆ ԼԱՒՐԱ ՌՈՒՍՊՈՒԻԻ ՀԱՐՍՆ ԻՔԻՆ

### ՅԱՅԳԵՐԳ

Ազուոր բաներն որ կ'ուզէի ըսել քեզ

Մովը խըմեր է զանոնք.

Մարգրիտի պէ՛տք ունէր որ իր տըխրամած

Աւազուտները չէնցնէ:

Խօսքերը գողար ու սիրունակ և քընքուշ

Որ կ'ուզէի քեզ ըսել,

Չանոնք ծովափը գողցեր է՝ որ պըճնէ

Իր ցանկերը վարդերով:

Եւ անոնք որ չէին իղձէն թեւադրուած,

Հոգւոյն խօսքերը անեղծ...

Ո՛վ քաղցրիկդ իմ, զանոնք գիշերն ապշոպեց

Որ աստղերով զարդարուի:

## Լ Ռ Ո Ւ Թ Ի Ի Ն

Գայ նա : Ի մի ակընթարթ  
Ամենայն ձայն սուզանի,  
Ի ճեմ անթրունդ և հանդարտ  
Գայ գիշերոյն հոմանի :

Ասողաճամուկ ջինջ պըսակ  
Կապէ նըմա թագ ի գլուխ,  
Որ ի գիրկս իւր ընդարձակ  
Մաւալանայ սիրամուխ :

Ոչ բեկբեկեալ մի բարբառ  
Ոչ սիրոյ քուք ողբերէն  
Ի հիացմանն հրաշափառ  
Լքսէ գիշեր յիւր տեառնէն :

Բայց նա յիւր սակս՝ որ միայն  
Ի միտ առնու զմիտսն անճառ՝  
Երգ մի երգէ անսահման,  
Երգ անմըռունչ անբարբառ :

Ե՛ն են իմ բիւր մարգից թագք,  
Եւ ի յատուկ յիմ պարծանս,  
Ջորոց՝ քեզ, սէ՛ր իմ միակ,  
Կամիմ պատմել զկախարդանս :

Տես, զ՛ի թըռիչքս զանխուլ  
Բացերեւակ երազոց՝  
Իմ են բուեռք սառնաձոյլ,  
Իմ՝ անապատք զհոնաբոց :

Իմ են քաղաքքըն գոռոզ՝  
 Ջորս բարկութիւնն աստուածեան  
 Սատակեաց, արդ քարաքոս  
 Եւ խոռք պատեն զաւերն այն :

Ընդ նըկարէնն անդաստակ  
 Դանդաչելով յածի բու .  
 Ի սնարըս սեանց ու ի խոյակ  
 Դամբանական ցախ մածնու :

Եւ շուտաժիր սթափ հովիւ  
 Անցեալ ընդ այն ճանապարհ՝  
 Հայի ականըն ծայրիւ,  
 Զաջն իւր շարժեալ՝ սրընգահար :

Այլ ես միայն, միայն ես  
 Ըզսըրտատրոփ՝ թաղելոյ  
 Ազին՝ լըսեմ զթինդ դեռ եւս  
 Ի փլատակացն ի ներքոյ :

Ես լոկ առնում ըզճաշակ  
 Լիով զգեղոյ վեհապանձ՝  
 Ըզկամարօք գերունակ՝  
 Հողմածըփեալ բաղեղանց » :

\*

Ի խոր անուրջըս՝ գիշեր  
 Լըսէ՝ երկիր կայ լըռիկ :  
 Եւ իբր ալիք զալեօք յեռ  
 Հոսէ անքոյթ խաղաղիկ,

Յանձանօթից աղբերաց  
 Ղուղեկոց յալըս ծովուն՝  
 Առեալ ածեալ զխուռն իրաց  
 Սիրատարիից առ լուսթիւն՝

Զգաղտնածածուկըն բարբառ.  
 Զերզըն՝ զոյր շունչ խընկաւէտ  
 Եւ զչափ թիւոց միայար  
 Մտառէ քերթող ինքն եւեթ :

\*

« Ո՛վ սիրուն, ես աշալուշ  
 Քիւ ըզրողրոջսըն զիտեմ  
 Փըթթիւ և զհիւթն որ յուշ յուշ  
 Վերանայ յոստն՝ ի յարմէն.

Մինչ հաւք ըզթիւս բարախեն  
 Բիրեալ հըրճուեալ, վիշապ օձ  
 Պարզէ զպարոյրն, և հեծեն  
 Վիշաք զարթուցեալ ի ցաւոց :

ԶԱպիս լըսեմ զինեւ շուրջ  
 Ասել բարձուստ տարածիզ  
 Մագաց՝ լերանց հըրաշունչ —  
 Օր մի եւս աշլ աւաւիկ.

Եւ առ անյագ անհաշտ ծով՝  
 Մըշտակոծեալ ժայռք զեզիրբ՝  
 Եւ անսասան միշտ կալով,  
 Հարցարանել, — Միևիւե ցէրբ :



\*

« Եւք մէք մայրիքն անտառաց,  
 Մայրիք՝ զոր դուն արժանիս  
 Առնես զահոյս քեզ փառաց,  
 Ի զանխուլ տօնըս զաղտնիս:

Թովեալ յուռթիցդ ի բըժժանս  
 Ունիմք մեք ակըն հրաշից,  
 Յակճիոս յայթիոս ի սքանչանս՝  
 Ուրուացընոր հըսկայից.

Եւ տեսանեմք առնել այց  
 Մեզ ի հանդարտ երեկունս՝  
 Ըզօրբրազանց և զքաջաց  
 Ըստուերս խոժոռս և քաղցունս...

Անցանեն. այն որ մեռաւ  
 Կոյր այլ ըզճեմըս թարունս  
 Մոլորակացըն ծանեաւ,  
 Զըննեալ ընդ քեզ ի հըսկմունս.

Տեսանողին այն ոգի՝  
 Որ ընկլուզեալ յանդուլ խոկ՝  
 Արեւիչուշտ հան ազգի  
 Ի վեր՝ աշխարհ մի նորոգ.

Պաշտօնասէր քո՝ հուժկուն  
 Փախըստական Գիրելլին,  
 Որ էջ քաջ քաջ կենդանւոյն  
 Յարքայութիւնս տարտարին...

Անցանեն. վե՛հ ստուգութեանց  
 Յոր ձըկտէին, դու եւեթ  
 Ուղղեցեր զթիւս թըռչանաց  
 Խոկմանց նոցին զըրահաւ:

\*

Սիրտն ասէ. — « Ո՛վ իսիսեայ  
 Ուղեակ, միայն, դու միայն  
 Ի ցաւոց ժամըս դըժնեայ  
 Ձիս իմանաս. ապաստան

Ինձ դո՛ւ միայն. և յորժամ  
 Նախաար ըստ չափ յաւելուն,  
 Եւ մարդկեղէն զուր առ ձայն  
 Ինձ աղերսեմ փըրկութիւն,

Դու, լուս ստառած, որ ըզբիծ  
 Խոտես զանհուպն իսկ ի քեզ,  
 Ի թըշնամանսըն դու զիս  
 Մատն ի բերանըդ՝ կըրթես »:

Համագոյք համր ի հըծծիւն՝  
 Ի մանրամաղ խընկոց բոյր,  
 Ի թիւոց չափս ու ի շարժիւն  
 Կըրկենեն ի մի ձայն հանուր. —

« Որ ըզդըրունըս ցնորից  
 Բանաստեղծից բանաս դու,  
 Որ հաւաստեաւ ըզգադտնիս  
 Ուսեալ գիտես ըզմահու.

Դու որ իշխես զեղափառ  
Տօնից այգուն, և ունիս  
Ի լուծ քոյին՝ ըզպայծառ  
Անդունդս աստեղց և ըզվիհս.

Մի նդ մէջ հատցին բնաւ կըճպես  
Ո՛վ մեծանձն, ո՛վ գերագոյ,  
Հըմայթ թագիդ քո յաւէտ,  
Ո՛վ տարփածուդ գիշերոյ »:

Զանխուլ ձայնիցն ի նըւագ  
Դաշնակաւոր ու անբարբառ՝  
Ի կերպըս բիւր, այլ միակ  
Լըսի գովեստ մ'անդադար.

Իբր յորձախոր հարուստ գետ  
Յանյայտ գնալով շտեմարան  
Հեզակարկաջ, վէտ ի վէտ  
Հանգոյն ալեաց հոմաձայն...

## ԱՆՏԱՌԻՆ ՄԷՋ

Ա.

Կը հընչեցնէ Ապրիլն անտանն. օդն է բոյր,  
 Ոստերուն մէջ կը ժըպտի դաշան արեգդէմ.  
 Ու դեռ, ծաղիկ հասակ, ինծի կը խօսիս,  
 Ու քեզ, մեռնա ընկեր, ես դեռ կ'ունկընդրեմ:

Ո՛ւշ է, ո՛ւշ է, և է ի զճւր աշխատանքն  
 — Ո՛վ կեանքին դու միայն վըսեմ քաղցրու-  
 [թիւն —  
 Ձոր կը կըրես շըշընչելով վաղեմի  
 Փաղաքանքն ինձ Գըզուանքն յետին՝ արխուր է:

Ո՛ւշ է, ո՛ւշ է. համակամէ ու մեռիր.  
 Ձայրոյթ կամ ողբ ըզքեզ փըրկել չին կարող.  
 Վիճակդ՝ է նոյն ինքըն վիճակը ծաղկանց

Որ կը ծընին սիշտ քօղին տակ տերեւոց,  
 Ծաղկանց՝ որք դառն առանձնութեան մէջ կ'ա-  
 Որք չըտեսան և ոչ ծըւէն մ' երկընքի: [ճին,

Բ.

Ո՛վ Տէր Լուդուիկ, ես մոռացում կը հայցեմ  
 Ձըւարթ տաղէն որ կը պատմէ յեղափո-  
 Բախտն ու երկայն զառանցանքներն Օռլանտի,  
 Մոռացում իմ բոլոր մեռած օրերուս...

Հանդէս ինծի՝ հեռաւորիս Ռուսներէս  
 Կ'իյնան դըռները դիւթական Ատլասի,  
 Ազատ ես ալ, մարտկուհի ես ալ, սուրճով  
 Ալկինայի կապերէն զինք կը կորզեմ:

Կ'հընչէ անտառն. Անճէլքան է որ մութ  
 Ճամբաներէն կը փախչի վարը ահա,  
 Թէ՞ Պայարտի մըրըկոտ թաթուլը թընդէ:

Է՞ Պրատամանդն՝ որ մարտագոռ՝ կը զգետնէ  
 Չէրքեզ արքան, յետոյ՝ միայն յապաղման  
 Վրայ մըտախոհ՝ կը մըտրակէ սանձարձակ:

Գ.

Օ՛չ թէ վարէն, այն թաւուտքին ետեւէն,  
 Ոչ Եւրոսի ծընունդ նըժոյզ սըրաթուիչ,  
 Ատուածային ոչ գեղ, ասպետ ոչ ի զէն  
 Փայլակնադէտ, կամ, մութ կապոյտ ըզգեստով.

Այլ ճակտին վրայ գանգրագեղ սիւ մագերմն  
 Փունջն, ու ետին ձըգած հիւքերը երկայն,  
 Բոլորագեղ թըխաթոյր դէմքը ժըպտուն,  
 Բաց ու խոշոր անկեղծիկ աչքը խօսուն,

Տեսնէի գալն աղջընակի մ' որ շըրջէր  
 Չորս կողմ նայուածքը զոհ, բարի, ու կարծես  
 Թէ մըտածէր. — Ի՛մա է աշխարհը յոյոր: —

Ու լըսէի խօսիլը. — Տես, քեզ կու գամ,  
 Քու յարուցեալ երիտասարդ հասակն եմ,  
 Նայէ՛, նայէ՛, մի՛ երագեր, մի՛, ես եմ: —

## ԱՇ ՈՒՆ

Ե՞րբ էր ինկայ հս ճամբայ,  
Ապրի՛լ, Մայիս. հունձքն արդէն  
կը կանաչնար, կը ծաղկէր  
թուփը, երգով օգն էր լի,  
Խոստումներով արեզակն:

Ե՞րբ էր ելայ հս ճամբայ.  
Լեռնէն հովիտ՝ դաշտերուն  
Լոկ մորենին կը մընայ.  
Կըրճատ եղէգն հերկին մէջ,  
Ճիւղեր, դեղին տերեւներ.

Տասպատ զետին սարփինան,  
Ա՛լ կանգնումի անկարող —  
Պսակներ՝ թօշնած՝ հանդէսի  
ժամէ մը վերջ —, ամէն տեղ  
Հեղզ, քընաբեր թըմրութիւն:

Բայց թուփերուն միջեւ հոն,  
Շըրջապատի մը փոքրիկ  
Ճերմակ պատերն կը ժըպտին  
Արեւմուտքին վարդածիր:  
Նըպատակն այս է անքոյթ:

Ե՞րբ մեկնեցաք, ե՞րբ հկաք  
Այս բնակարանն ըսպիտակ,  
Ո՛վ եղբայրներ, ի՞նչ վըսեմ  
Խօսք կամ լռութիւն կը բանայ  
Վանդակապատն՝ հիւրերուն:

Օր մը դուք ալ վազեցի՞ք  
 Մարաւ՝ կեանքի աղբերակն.  
 Արշալոյսի մը լուսով,  
 Ու հո՞ս հասաք... կը լըսէ՞ք  
 Հէք խաշերուն տակէն ինձ:

### Տ Ր Ա Ս Ի Մ Ե Ն

Քաղցր յիշատակն երազին մէջ  
 կը կորսըւի. դեկավարն արդ  
 Նըստաւ դեկին քով, նաւը գիտ  
 կանանչ կըղզի մը կը տանի

Որ կը քաշէ անդորր ու լուռ  
 Հրաւերով իր կապոյտ ծոցին.  
 Շուրջը զըւարթ չըքնաղ բլուրներ  
 Զիթենիի, կաղնիներու:

կը տեսնեմ վիհ ճաճանչն արփուոյն  
 Բըլրակներուն վըրայ խոհուն.  
 Արտաշընչումը հոտաւէտ  
 կը զգամ ջրերուն թեւեակահար,

Ու սուգուած ջրին խուլ ճողփիւնին  
 Մէջ, յիշատակ մը զիս տարտամ  
 կը ցընցէ. — Զէ՞ որ ես այս լիճն  
 Արդէն տեսայ օր մ' հեռաւոր.

Վաղ չըզգացի՞ այս ըզզըլխանքն  
 Ես հիացող սըրտին, ու չէ՞ր

Իրիկուն, չէ՞ր ժըպտեր գարուն  
Այս վեհ գեղոյն վրայ զերդ այսօր:

Աւելի ջինջ դըրախտներ չէր  
Պարզած երազն ինծի երբեք:  
Հոն վարը ո՞վ կ'անցնի ասիէն,  
Ըստուե՞րն է Սուրբ Աստիգացոյն.

Է՞ Արուտի ստուերը. հանդարտ  
Ուղիներուն կը դառնան դեռ  
Թափառ ստուերները սուրբերուն,  
կը դառնան դեռ քերթողներուն:

Եւ դու որ վրասը կը ներս  
Մուղտ համբաւին Անիքաղի,  
Հըպմրա՛ վըսեմ շոկատներով  
Որք խընդրեցին վրէժդ ի Զամա,

Ո՞վ լին, ուսկից ծաղկափըթիթ  
կը բարձրանայ պտակը բըլրոց,  
Դաշտ մը դարձած լերկ, ժանտաբեր  
Պիտ՛ ունենար ըզքեզ վարձկան

Կոյր ժողովուրդ մ', եթէ բարւոյն  
Հըզօր զինուորն, յամըր երկայն  
Տարիներ փորձ եղած, մարգուած,  
— Որով միայն կը պահուին բախտք, —

Ախտնջ, զըւարթ կուռ զօրութեամբ  
Ձոր կը շընչէ սէրը սըրտին  
Մէջ մեծերուն, ինքն՛ առաքեալ,  
Պետ՛ քեզ համար կըռուած չըլլար:



Ապրիլն անոր խընկարուրիկ  
 Թեևով կ'ըրերէր խաղաղութիւն,  
 Ուրախութիւն. բայց իտէալն՝  
 Ան կը քաշէր վեր վեհ կըռուին.

Եւ ոչ շողշող ճամբան ի վեր  
 Դէպ ի գագաթն՝ ան կըռուելով  
 Ծունկն աւազին դըպցուց երբեք,  
 Կամ կորոցեց դէմքը վտանգներէն:

Հըրճուանքի յոյլ հանգըստին մէջ  
 Փըռուած զաւանկ դու խորթացած,  
 Կը խեղդես կայծն աստուածային  
 Տըռփոտ տըղմին մէջ ցնորքներու:

Բայց օր մ' եթէ ուրումներու  
 Տեսնես զեղն այս ջինջ՝ զոր տըժգոյն  
 Երիննեայի շունչն անիծեալ  
 Այլ եւըս չի պըղծեր, սորվէ՛

Թէ թեւաւոր հոգիք ինչպէս  
 Կը բանան մութ բանտերն՝ հօտին,  
 Խիստ տըքնութեանց ջըրդեղումով  
 Լոկ կ'ընկճըւին ճակատագիրք:

Կամարներուն տակ վաղեմի  
 Ալ չի թաքչիր ուղն աղամող,  
 Նեղ մուտքերու մէջ ճընշըւած  
 Ջըրերուն ծոյլ բարախումին.

Այլ թումբերուն մէջէն հընչուն  
 Կ'երթայ կոհակը զըրկտելու

Տիրերիս Հօր՝ նոյն այն թափով  
 Որ կը փերթի սըրտէ մ'առոյգ:

Ուր մանաւանդ կը թըրմէին  
 Ճախնային թոյնք սիւքերն իր սերտ,  
 Բըրիչն յուռթի ափունքներէն  
 Կը փայլակէ զըւարթ շողեր:

Ու մէջը հէք սենեակներուն՝  
 Արդէն նըսեմ տըմոյն վիշտով,  
 Ասօր զըւարթ պարն յոյսերուն՝  
 Հովին, արփւոյն հեա կը մըտնէ:

Ասպէս երբեմըն մոխիրէն  
 Թըմրած՝ թաղուած օրերու, լոյս  
 Մ՝ յանկարծակի արշալոյսի  
 Կեանքին հռանդը կը վառէ:

Մայիսի այն իրկունն, մվ Լիճ,  
 Քեզ չուղղեցի՞ տըխուր խօսքեր:  
 Կը վառի նշոյլ մ՝ յօնքերուս տակ  
 Արդ և արփին ալ սըրտիս մէջ:

## Ջ Ա Տ Ի Կ Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն

Ո՞չ արբուցաւ նըմա լիղի դառն ի ջամբ,  
 Ո՞չ ժանտագործն անարգ ըզկուրծսըն եհերձ.  
 Ո՞չ հարաւ գան, կատակեցաւ. ժըպիրհ ձեռն  
 Ընդ անիծեալ փայտն ըզնա ո՞չ բեւեռեաց:

Այլ որպիսի՞ վեհ և հըզօր յարութիւն.  
 Ո՞չ հընչեն դեռ որոտընդոստ ովսաննայք,  
 Եւ ո՛ւր և խաչն ուրեք ըզգիրկսըն բանայ  
 Ո՞չ մահ պարտեալ ի հաւատոց է ի սպառ:

Եւ ըզքո՞ ծոցդ, ո՞վ Հայաստան, տեսանեմ  
 Ես ի նորոց փարիսեցւոց պատառեալ:  
 Ըզտիղմ, ըզգայռ գոհեաց ի դէմսդ ամացին.  
 Ի յափուցումըն ծարփւոյդ ջամբին թոյն:

Այլ թէ ժըպիրհ խուժդուժ խուժանըն վայրագ  
 Ի չարագան և յեղկելիդ քո յանդամս  
 Նորոգէ այսօր ըզտանջանս վատչըւէր  
 ԶԳողզոթային, քո՞ եւըս մերձ է Զատիկ:

## Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Զ Ա Տ Ի Կ

Չբխըմցուցին անոր լեղի դառն ու ժանտ,  
 Սրիկան անարգ չըպատուեց կուրծքը անոր,  
 Չըծեծեցին, չըծաղրեցին. ամպարիշտ  
 Չեռք մը չզամեց զայն անիծեալ փայտին վրայ:

Բայց ինչ հըզօր և փառապանծ յարութիւն,  
 Չեն հընչեր դեռ ովսաննաներն որոտուն,  
 Եւ ուր որ խաչ մ' իր բազուկները բանայ  
 Յաղթահարուած չէ՞ միթէ մահն հաւատքէն:

Ո՛վ Հայաստան, ես կը տեսնեմ, քու ծոցդ ալ  
 կը պատուեն նոր փարիսեցիք: կը ժողվեն  
 Տիղմը և ցեխն ու երեսիդ կը նետեն.  
 Որ քու ծարաւդ անցընես թոյն կու տան քեզ:

Բայց թէ անյագ վայրագ խուժանը ժըպիրհ  
 Քու ձաղկըւած անդամներուդ վըրայ հէք  
 կը նորոգէ այսօր տանջանքը անարգ  
 Գողգոթային, քո՛ւ ալ Զատիկըդ մօտ է:

## Թ Ո Յ Ն Ի Ն Ս Ա Դ Ի Ր Ա Ն Ի Ը

Կաթիլ մը, կաթ մը միայն.  
 Հնա՛յ՛ օ՛ն ուրեմն, ու բոլոր  
 Սպառնալիքները անարգ  
 Եղբայրներուդ նենգաւոր,  
 Խըղճմըտանքներն հեղգասիրտ՝  
 Հոգիներո՛ւն թոյլ՝ որոնք

Անանց կեանքին գերագոյն  
 Վայելքը, հանցն առօրեայ  
 Խըլել կորգել կը տենչան,  
 Ու քու՝ անոնց խոռվքներուն  
 Ու ապիկար զիղջերուն  
 Համար խըրոխտ նողկանքներդ,  
 Ու փախուստներն եղկելի  
 Ու կեղծաւոր գըթութիւնն  
 Անոնց՝ բոլորը մէկէն  
 Անդընդատոյզ պիտ' ըլլան.  
 Ինչո՞ւ համար չես խըմեր:  
 Անցեալն ու այս օրը որ քու սըրտիդ վրայ  
 Կը ճընչեն այնքան սաստիկ,  
 Ու կասկածին չարչարանքն,  
 Ու տաղտկութիւնը՝ ցեց անխոնջ ու դանդաղ,  
 Խըմես եթէ՝ հեաըդ մոխիր պիտ' ըլլայ:  
 Անդամներո՞ւդ հետ անշարժ՝  
 Հետըդ՝ քեզի համար՝ զլորին պիտի վար  
 Աղջամուղջին ու լիռութեան մէջ յաւէժ՝  
 Մարդկային ժանտ ու անմիտ,  
 Խուժդուժ բոլոր օրէնքներն.  
 Շամբուշ զայրուցքն ու հեշտանքները վատ-  
 Անյագ ու կարճ ցընծումներն. [Թար:  
 Ու թագուհի Մահը ինք՝  
 Վէ՛ս, ահաւոր տիրուհին,  
 Եթէ խըմես՝ պիտ' ըլլայ քու աղախինդ:

## ՅՈՒՇԱՏԵՏՐԻ ՀԱՄԱՐ

Ա. Կոմսուսիս

Մարիամ Մոլեթիկոյ.

Ճերմակ էջին վըրայ՝ հոս՝

Կը կեցընեմ այս ժամը, ժամ մը կեանքէս.

Կը ճաճանչէ արփին, դաշտերն կը ժըպտին,

Բայց կը ժըպտին մեղամաղձիկ ժըպիտով:

Կը թօթափին տերեւներն,

Կը թօթափին յոյսի գանձերը դիւրեղծ:

Եղանակի յաջորդութիւնքս այս յաւէժ,

Փոփոխումներն այս խընդութեան, վիշտերու,

Ե՞րբ պիտ' դադրին՝ ըսէ ինձ,

Մարիամ, դճ ոք ունիս մեծ աչքերուդ

Ջինջ փայլակին մէջ մոզական թովչութիւն,

Որ կը կորզէ ապագայէն ամէն քօղ,

Ըսէ, խարտեան՝ Մարիամ.

Ի՞նչ կ'ըսէ քեզ մարգարէի մըտածումդ.

Յետին ձիւնէն ու կըռիւէն վերջ յետին

Պիտի նընջե՞նք գերեզմանին մէջ ընդ միշտ,

Թէ լոյծ արձակ ոգիներ՝

Կարգաւ անանց պայծառութեանց բարձրացած՝

Ազատ, անծայր երկինքներու մէջ պիտի

Յընձանք՝ առանց մըրբիկներու և ձըմբան:

## ԾՈԳԳՈՅԻ ԱՄՐՈՅԸ

(Տրասիմենի վրայ)

Բարձր ու կանանչ եղէգներուն մէջէն զիս  
 Նաւը տարաւ, բաղեղնապատ որմերուն  
 Քովէն, լուսինն ուր կ'անձրիւէր երազներ,  
 Զգացի նախկին իսկ քայլերէն որ կ'ելլէր  
 Արդէն թարմ հոտն անանուխին, ծոթրինին՝  
 Ժայռին մէջէն 'ւ աւազին՝ անին հասնելուս:

Անդին սոճեր բարձր ու ցանցառ իրրեւ դէտ  
 Կը ցըցուէին, գառիվերին ծայրն ասդին՝  
 Մուտքը՝ որ խրոխտ՝ կըռիւններուն դէմ զերդ թումբ  
 Երկաթ դըռներ կը կանգնէր՝ արդ պարապ է:  
 Հաստաբետ կուռ կամարէն վար կ'իջնէին  
 Դանդաղանքով՝ Լիճին սիւքովը մեղմիկ՝  
 Շուքերն առկախ ճօճուն ճըփուն ճիւղերուն:

Զայն մ'որ բընաւ լըսած չէի առաջուց՝  
 Եկաւ ինձի. — Հոսկ կը դառնաս. (ոչ ոք կար  
 Քովս՝ ամայի արին վըրայ), կը դառնաս,  
 Եւ սակայն չես ինչ որ էիր այն ատեն.  
 Բայց սըրտիդ մէջ պէտք է որ դուն կենդանի  
 Պահած ըլլաս բնակարանիդ յիշատակն,

Ու մայիսիդ և քու հըզօր մեծ սիրոյդ: —  
 Մըտածեցի լուռ՝ կասկածի, վախի մէջ.  
 Արքո՞ւն եւ՛ ես. ու իբր յըստակ թէ շեշտով

Արտարեբրած ըլլայի այն խօսքերն ես,  
 Լսեցի որ ինձ կը կըրկնըւէր. — Չն՞ս յիշեր  
 Եւ ոչ իսկ այն օրն արիւի, խնդութեան,

Ուր հընչեցին վերելքներուն վրայ՝ գալուդ՝  
 Նշաններն, ու վեր սլացաւ բազէն կապուտակ  
 Դէպ ի կատարը բարձրաբերձ՝ պատնիշին:  
 Կը ցընծային սվսաննային ձայներէն  
 Աջորդ արի, շողշողալով աւելի  
 Քան զըմբըխտեայ, ոսկեայ պըսակը ճակտիդ:

Չն՞ս յիշեր, չն՞ս, հոս սըփոքուած ծաղիկներն,  
 Ու մանկլաւիկն՝ որ կը բըռնէր ոսկեհոռան  
 Երկայն զգեստիդ փէշէն, ու կրճղը վահան  
 Ու տիգակիրը բացուածքին մէջ այս դրան:  
 Սեւազանգուր մագերդ ես լաւ կը ճանչնամ,  
 Ու քու տոտիկըդ՝ տիրուհիդ ամբոցին: —

Իր հըրաւէրն ինձի հասաւ նաւակէն,  
 Սիրոյս հրաւէրը, ճըշմարիտ իմ սիրոյս,  
 Մօտալուտ, քաղցըր կենդանի ստուգութիւնն,  
 Ու փոյթ ուրիշ ամէն պատկեր ցընդեցաւ:  
 Ձիս կարծեցի աւելի հպարտ ու դըշխոյ  
 Գոչիւններուն մէջ քան ցընդած ստուերներուն:

Թուեցաւ գիշերն ինձ աւելի շողշողուն  
 Յաղթանակի ու մայիսի արեւով  
 Մ՞, ու փառասպանձ նըւագներով հովն առլի.  
 Ու լըրութեանը մէջ լուսնին ջինջ ու զուարթ  
 Կը ժըպտէին կըղզիք, արծաթ կը թուէր լինն,  
 Իմ Տրասիմենըս վայրենի ու քաղցրիկ:



Իջայ՝ իբրեւ շողով, լուսով պսակազարդ  
 Դէսլ ի բարբառը սիրական, որ կու տար  
 Իմին անունըս: Ափունքները չորս դիտ  
 Կը կըրկնէին այն բերկրալիւր քաղցըր բառն,  
 Այն անուշակ բառը՝ զոր օր մը ինքն իսկ  
 Գոչեց՝ ջրերուն տաշտին վըրայ զըսպըւած:

Աքերըս վեր երկնից հրաշքին վերցուցի,  
 Եւ ըսի. — Ո՞վ գիտէ. ամէն ինչ հրաշք է.  
 Երբեմն այնքան անհուն անծայր են լոյսին  
 Ճամբորդութիւնքն, որ ընկըղմած բիբերուն  
 Թերեւս հիմայ կը հասնին որք նըշոյլներն  
 Հազարամեայ մեռած աստղի մ՝ հեռաւոր:

### Մ Խ Ի Թ Ա Ր Ի Զ Ը

Աւասիկ նս, ըսաւ, եկուր հրաշալի  
 Դըռներէն ներս, օ՞ն, մօտեցիր կապուտակ  
 Ու զըւարթ այն կիրակիին գերագոյն  
 Լոյսին՝ բըլրոց վըրան, վարդերն ու բոսոր  
 Կը փըթթէին մանկութեան: — Է սի՛ն պարգեւ,  
 Գիտեմ որ ալ մեռան վարդերը բոլոր:

Լաւ, եկուր արդ, ու պիտ՝ եզրերը գըտնես  
 Զըթնաղ, հընչուն՝ առասպելեալ գետերուն,  
 Ու բազիններն հելլենական, դրիադներն,  
 Որք կը պարեն վըճիտ լոյսով աստղերուն:  
 — Հարսերն յաւէրժ հատորներու մէջ ընդ միշտ  
 Բանսուած են, ալ աստղի լոյսով չեն պարեր,

Ոչ ալ կըրնան ձօնել զգըլիսիչ բաժակնիր։  
 Ուրիչ հեշտին բարիքեեր ես կը փընտոեմ.  
 Յիշել բոլոր ազադակներն ու բոլոր  
 Յոգնութիւնները մահառիթ, ու հանգչիլ  
 Ուրիչ լսութեան մը մէջ։ — Ահա ես, եկտուր։ —  
 Ու զիս քունն իր յորձանքներուն մէջ սուզեց։

### ԼՃ ԻՆ Խ Ռ-ՈՎ ԻՔ Ը

Ջուրէն, (հայլի սղոցիներու, ձիթենեաց)  
 Ջորս կը ցանկէ, ծալլըւելով գոգերուն  
 Մէջ վէտ ի վէտ պարոյրներով, կը ցըցուին  
 Բերունեան բլուրք քերթողներու երազին։

Երբեմն ալիքն այն կը ծեծէ խաղաղիկ  
 Նաւակայքերն՝ յանկարծաթափ խօլանքով.  
 Կարծես խորքէն յատակին դուրս կը պոռթկայ  
 Մոլուցքը հին գաղտնածածուկ երգերու։

Վարն՝ օղային զանգուածին մէջ տարափին  
 Ահա խուժդուժ հրոսներն. ու Լիճը ծարաւ  
 Վրէժի՝ ծովուն իբր ախոյեան կը գոռայ։

Բայց կը ցընդի մէզն, ու արփուոյն փայլակէն՝  
 Որ ի Ջամա հոռմեան տեսաւ արծիւներն,  
 Նըսեմ ըստուերն Անիբրաղի կ'անհետի։

## Գ Ա Ր Ո Ւ Ն

Ու դեռ կ'իջնէ վար ըսպասուածը ահա,  
Պատուելով ուչ մնացած մէզին վըրաններն,  
Ու տաղտկացած կը նայի  
Աչպեաններուն՝ զոր կը ծածկէ ձիւնը դեռ:  
Աղերսարկու ձայներ, զըւարթ պարերգներ  
Կը բարձրանան անոր, քայց ան շեղելով  
Մէկդի կ'երթայ՝ վաստակարեկ ու տըժգոյն՝  
Սովորական օրհնէնքներէն զըզուելով:

Գիտէ՞ գիտէ՞ ան՝ վարդերու, թըփերու,  
Գեղգեղներու, ճաճանչներու մանրերգներն  
Յաւէժական, ու յարգանքները զառամ  
Տարփատենչիկ քերթողներու հառաչուն,  
Ջոր արձագանգը՝ սիւքերուն կը դըրդջէ:  
Իսկ ան բարձունքը կ'երագէ վեհապանծ,  
Եւ աստղագարդ օթարաններն ամայի,

Ուրկէ իջաւ անօգուտ, խիստ տաժանքին՝  
Պարտաւորուած դըժխեմ բախտին հրամանով՝  
Անխոնջելի պաշտօնին՝  
Չոր կոճղերուն վրայ բողբոջներ բանալու,  
Հիւթ ծորելու, և խոցուածներ բուժելու.  
Ծոյլ ընծիւղին, արմատներուն, բունիբուն  
Մէջ ցընցելով կեանքերը նոր արթընցած:

Հագար ու բիւր տարի է ան միշտ կու գայ՝  
Ամահականը՝ երկրաւոր տաղտկութեանց,  
Ու կը զըտնէ նոյն ցաւով

Երկիրն ոսնած, առուզացած ու թըմրած.  
 Որպէս զի տայ նախկին կորովը՝ կը դնէ  
 Խինդ արեւուն, բեզուն փռչի հովին մէջ.  
 Բայց կ'արճ գիտէ առողջութիւնն ու ժըպիտն:

Գիտէ որ քունը կը դառնայ: Խօթութիւնն  
 Ախարհի ան կը բըժըշկէ՝ կը սփռփէ  
 Միայն ժամուան մը համար.  
 Յետոյ նորէն ամառնային երկընքին  
 Տննդերը բորբ, և աշունին հոգեվարքն,  
 Ուժգին մըռունչն Հիւսիսին, մութն ու սառոյց  
 Ու դալկութիւնն յետոյ, ձըմեռը, ու մահ:

## ԱՄԱՐԱՆՈՅ ՄԷ՛ՏԻՉԻ

Բռնոր շուքին մէջ՝ որուն՝ թեւը հովին  
 կը քըսուըռտի արծող մեղուաց բըզգիւնով,  
 կը բարձրանայ սղոցեաց մէջէն սանդուխն հին՝  
 Որ պապերու փառապանծ հեռքը ճանչցաւ:

Մամուռն իր մութ ու կակուղիկ թաւիշով  
 կուճերն՝ այսօր մաշած, կտորած՝ կը պատէ.  
 Եւ սակայն օր մ՝ հոս խօլական պարերուն  
 Թռաւ աղաղակն հինգհարիւրին աստղազարդ

Գիշերներուն մէջէ. տեսան ծառուղիք՝  
 Արդ ամայի՝ ծովփը լուսով լուսնակին  
 Մանկլաւիկի վէտ վէտ փետրոց, ոսկեփայլ  
 Թաւընջակաց ու դըքսական շուշանաց:

Արդ լըռութիւն է. բայց ծառերն երկնաբերձ  
 Կեցած են իբր արի և ջինջ պատկերներ  
 Իշխանութեան և կեանքի, ո՛չ ալ անոնց  
 Անարգական մնասով կացին ըսպանաց.

Ո՛հ, ո՛չ այսպէս ուր կը ժըպտէր թաւուտ մեծ  
 Վայելութիւնն՝ որ շուք ըրաւ Լուդուիկեանց  
 Պարտէզներուն. շահու վայրագ ու շամբուշ  
 Կըտղուցքը խօլ՝ հրոսը մըղեց բարեկիրթ

Խուժողութներու դէպ ի լուսնիստ սահմաններն  
 Կանաչագեղ անապատին. կը մընայ  
 Զուարթ վայրերէն լոկ յիշատակ. Կէօթէի  
 Որոնց համար սաւառնեցաւ երգը նոր:

Յետոյ գետնին վըրայ՝ մտերիմ մոռացման  
 Ու անտառային Մուսային՝ վեր բարձրացան.  
 Շքեղ յարկեր, պատ՛հաններէն որոնց վար  
 Կը կախուին պերճ գարդք զըրզլեակի, և դրօշներ

Թըշուառութեան: Ո՛վ տունկերուն մէջ թեւոյ  
 Ոգիներուն և խուսափուկ սիւքերուն  
 Խեղդեց հրգերն: Ո՛վ արփուոյն մէջ ծնած՝ հովին  
 Մէջ մըրմընջող, սարսուռն դուք ողջ հոգիներ,

Սպաննողը ձեզ՝ չհարցուց ձեր մէջ փակ երազն  
 Ատուածային. սակայն անցեալը թըմրած  
 Կ'պահէ մըտքերն ու Պալատինը կ'եռայ  
 Խուզարկութեամբը մեծ մեռած իրերու:

Բայց հոս ամէն գեղեցկութեան պահպան է  
 Արուեստն՝ անմահ, ու իր մատնին դիւթական՝

Իտէալին հասնողնարորք հաւատքով՝  
Ըզմեզ հղբայր ժողովուրդին կը զօղէ:

Հըռոմը հոն, ու խուժանին շառաշնիրն  
Ու խօլութիւնն: Հոն մոլութիւնը խրոխտով  
կը ճոխճեմէ, որ ճամբուն վրայ կ'դանդաղի  
Միսսալինեան կառքին յարգանք ընելու:

Ու զաշացու գոռոզութիւնն, և սկւռյ  
Յափըշտակիչ ծարաւն ու տիղմը բոլոր:  
Մեզմ շունչ մը հոս անդորրութեան մ'ողբագին,  
կայտոռում մ', հըրճուում մը բուսական կեան,  
[Քերու,

Քաղաքային բանտին՝ նիխած պիղծ օղով՝  
կաշկանդումները փըշրելով նենգաւոր՝  
խուժանէն հոս կը չուէ հոգին մենաւոր  
Փախըստական՝ դէպ ի դրախտները չըքնաղ

Ազատութեան: կը բարձրանայ անի վեր  
վեր դարերուն, ու կը տեսնէ ազգերուն  
Հառաչակուլ հեքով անցնիլն ու դառնալ  
Դէպ ի ծեծուած արշալոյսներն ապագայ:

Ու սպախավէժ զլորիլն յետոյ ամենուն՝  
Անդունդներուն գաղանկքին մէջ խոր, անյագ,  
Թողլով մտածման փայլակումներ, ախօսներ,  
Նոր կըռիւններ ու նոր տենդեր՝ աշխարհի:

Իրկունն ահա կ'իջնէ, ու քօզ մը վարդի  
կարծես Մարիոյ լերան չորս դին կը պատէ:  
կը նայի դէպ երկինք պըղտորն Աւնտին,  
Թէ Սպարդակեայ ցընորքն արդեօք կ'երեւի:

Վարը մինչդեռ՝ յաւէժական պատանի՝  
 Խարտեաշ Տիրեր ամէն բանի անգիտակ՝  
 Կը զուարճանայ։ Վիճակն ինչ է մեր մարդոց՝  
 Նսրոգուած հին բնակարանին ծոցին մէջ։

Ան կը փախչի անգէտ, ու բարձր որմերուն  
 Բախիլն ըզզայ իսկ իր շրերուն զուսպ ու սուրբ,  
 Ան փոյթ չ'ընելու դիւրաստղապ թըշնամանքն,  
 Ու խանդակն թ ազատութեան կ'երթայ ծով։

Շուրջանակի շիջած է լոյսն արդէն իսկ  
 Եւ աղջամուղջը կը տեղայ ուղիօրէն.  
 Մինչդեռ գիշերը կը շուտոր օրօրով  
 Կը քնացընէ աշխարհը նոր թիւոց վրայ։

Աստղերն աչքով մ'անուշադիր կը դիտեն  
 Այսօրուան գործն, և աճիւններ հինաւորոց  
 Յաղթանակաց, կոհակներուն՝ մըրըրկաց  
 Մէջ գետերուն, ժողովըրդոց, բախտերուն։

## ՕՐԻՈՐԴԻԿԸ ԱՂՈՒՈՐ...

Օրիորդիկը աղուտր, սեւագանգուր մագերով  
 Հոն մարգին վրայ կը խօսի ու կը խաղայ արեւ,  
 [ւուն,  
 Ես այն խաղերը գիտեմ, ծանօթ եմ այն երգեւ,  
 [րուն,  
 կը ժըպտիմ այն ժըպիտն ես, կը խոկամ այն  
 [խոհերով.  
 Օրիորդիկը ես եմ սեւագանգուր մագերով:

Ու ես նաեւ օրիորդ մը կը տեսնեմ թոյրաթուխ՝  
 Գիշերային երկընքին գամուած աչքերն երազուն:  
 Քիմնոաներ, դըրախտներ քանի՞օն իր աչքերուն  
 Մէջ: Կը յիշե՞ս դուն զանոնք արդեօք, Լուսնակ  
 [սիրարուխ,  
 Սեւ աչուընները փերեան օրիորդին թոյրաթուխ:

Յոգնած է արդ աւասիկ դըրաւ գըրիչն անի վար,  
 Ու կը ճընչէ ձեռքը իր՝ կամարը սեւ յօնքերուն:  
 Տեսաւ անի ծաղկընկէց թօշնիլն ամբիծ վարդեւ,  
 [րուն  
 Երազներու անհամար գարուններու սըրավար:  
 Յոգնած է արդ աւասիկ դըրաւ գըրիչն անի վար:



## «Ո՛վ ԽՕՍՔԵՐ.....»

Ո՛վ խօսքեր, դուք որ երկրէս  
 Կ'անցնիք գունդ գունդ, մըշտակայ  
 Չեւեր՝ ծընած մարդուն իսկ հետ՝ գիշերին  
 Մէջ հեռաւոր և նըսեմ իր հայրենեաց,  
 Ողբ և մաղթանք, օրհներգութիւն ու մաընչիւն  
 Մարդկային այս կալանաւոր հոգիին.

Ո՛վ ըսփինքսներ, որ ահեղ  
 Հայթայթեցիք հուր ու բոց,  
 Ու կըպրածիւթ և սառոյցներ Տանդէի  
 Դժժխային սարունակաց համար ժանտ,  
 Ու լուսոյ վեհ ժըպիտն՝ որով վարդն իր ջիւնը  
 Կը ճաճանչէ Սյրքայուրեան մէջ անհուն.

Չէք ծաղիկներ կամ՝ աստղեր,  
 Բայց աստղերու և ծաղկանց  
 Խունկն ու բոյրերն և նըշոյլները բոլոր  
 Կը զգանք որ դուք կ'արտաշընչէք, ու կ'երգէք  
 Սոխակներու պէս, կամ ցասկոտ կը խուժէք  
 Ու կը մըրցիք զայրոյթներուն հետ ծովուն...

Ողջո՞յն ձեզ, ո՛վ Սիրենայք,  
 Ո՛վ Քիմնոայք, քաջագօր  
 Մոգեր. ձենէ, միայն ձենէ կու գայ մեզ  
 Անուշն ու դառնը, աղջամուղջն ու արեւ,  
 Դուք զօրութիւնն աշխարհի, դուք զեղն անոր,  
 Դուք բոցը, դուք սիրտն ու հոգին, ո՛վ խօսքեր:

## Փ Ա Ռ Ք

Կրանիդէ լեւ մըն է դըժնէ, ահաւոր.  
 Բայց երբ պարերգը հասկաքաղ կիներու  
 Հովիտներուն մէջ կը լըսէ, ճակատն իր  
 Դեռ կը պատէ չըքնաղ պսակով մ'ոսկեղէն:

Պատրաստակամ ամբոխը հոն կը վազէ.  
 Ու աղբիւրի մը կամ մամուռ քարայրի  
 Զըզըտնելով հանգիտը այն ճամբուն մէջ,  
 Շուքին և հեշտ աշխատութեան կը դառնայ:

Ոմանք կ'ելլեն վեր, բայց դարվերն այն՝ անոնց  
 Նուաղկոտ հոանդը կը մարէ, ու լիրան  
 Կիտուն կ'առնէ մտածկոտ զընդէն շատը կանգ:

Ուրիշը կանգ չ'առնիր. թողլով պատառներ  
 Զգեստի, մըսի ժայռերուն վրայ սայրասուր,  
 Կ'ելլէ, կ'հասնի և դըրօ՛շ մը կը տընկէ:



## Յ Ա Ն Կ

	ԷՁ
Յառաջարան թարգմանչին . . . . .	1
Առ Յովսէփինէ Ռաչինի մայր իմ . . . . .	1
Յառաջարան. « Երբէք » . . . . .	8

### Յ Ա Ի Ի Տ Ե Ն Ա Կ Ա Ն Ջ Ր Ո Յ Յ

Սիրոյ հրղը . . . . .	7
Տարակոյսի հրղը . . . . .	8
Ասեղութեան հրղը . . . . .	9
Օրհորդիկ . . . . .	9
Վ. հրջազէս . . . . .	12
« Հըպարտութիւնն ինչ բր » . . . . .	12
Ողջոյն . . . . .	18
« Ո՛վ քաղցր զիշեր » . . . . .	14
Վ. հրագարձ . . . . .	14
Երկու նոյեմբեր . . . . .	15
Ջմուսած կտիբրէի մը . . . . .	16
Ապրիլ . . . . .	18
« Երբ սուսլին անգամ » . . . . .	19
Սալոնի տպաւորութիւններ . . . . .	20
Շողեկառքին մէջ . . . . .	20
Աստղերուն տակ . . . . .	21
« Պայծառ սաստիկ » . . . . .	22
« Կ'հրազէ ձեր նոյին » . . . . .	23
Օրադիր . . . . .	25
Դաշտանկարներ (Հին դարաստանին մէջ) . . . . .	28

## ՄԻՋԱՆԿԵԱԼ

	Էջ
Վեճակների ազատութիւններ (Թագոս մը է Գանձարէհոյ).	84
Ուրուագիծ . . . . .	85
Դեկտեմբեր . . . . .	85
Մարտի կարկուտի . . . . .	86
Իրիկուն . . . . .	87
Տեփիս . . . . .	88
Սէւասի կովտը . . . . .	88
Ամսանային գաշտանկար . . . . .	89
Անձրև . . . . .	40
Ապրիլի երգը . . . . .	40
Հիւանդ քրոջն համար . . . . .	41
Ամսանային անձրև . . . . .	42
Նոր դարուն . . . . .	44
Վերջին դարուն . . . . .	46
Գիշերային . . . . .	47
Պատշգամէն . . . . .	49
Օրագրի էջ . . . . .	53
Երագիս մէջ . . . . .	54

## ԶԱՐԹՈՒՄ

Զարթում . . . . .	57
« Արևուն մէջ » . . . . .	58
Իրիկուն ապրիլի . . . . .	59
Հրամեշտ . . . . .	61
Հօրս . . . . .	62
Խոսակցութիւն . . . . .	67
Երագ . . . . .	68

Հեղձութեան երգը . . . . .	69
Դարձեալ ճին գարաստանին մէջ . . . . .	70
Երաւ . . . . .	71
Վհուկը . . . . .	74
Յաղթուած . . . . .	78
Փառք . . . . .	79
Կնանկ... 1894 . . . . .	79
Ջերմ . . . . .	80
Տխուր մամեր . . . . .	81
Յ. Կանէլլայի Անդրիին . . . . .	82
Թեմերիկի գիտաւորը . . . . .	84
Կշտամբանք . . . . .	85
Մանրերդ . . . . .	86
* Երաւ . . . . .	87
Սուրբ Մարկոսի ձիերը . . . . .	90
« Պատուանիս ներքեւ » . . . . .	98
Կրակին քով . . . . .	99
Վայը . . . . .	102
Հիանդ . . . . .	103
5 Մարտ 1896 . . . . .	105
« Երկնքին տակ » . . . . .	107
Կովարկ Մորոզինի գրականորին . . . . .	107
Ամդ . . . . .	108
Ո՛վ մեռեալներ . . . . .	112
Երկդիմին . . . . .	118
« Ու չըկըրնա՛ւ ըսել... » . . . . .	114
Մեծերու ոգիներ . . . . .	115
Շէլլէյի յուշարձանին . . . . .	116
Զատիկ Յարութեան . . . . .	117
Միտք . . . . .	118
Տկարութիւն . . . . .	119
Հողեկտրք . . . . .	120
Յաղթանակ . . . . .	123

Պզնակ գուռը . . . . .	124
Յնորք . . . . .	125
« Կ'ըսէր հիւանդն... » . . . . .	125
Ժամը . . . . .	126
Համբուսն վրայ . . . . .	127
Լուսինին համար . . . . .	127
Մեղեհուլինը կարգաւոր (հոխն իշխանուկները) . . . . .	129
Բանաստեղծութիւն . . . . .	130
Երեսնդ 1895 . . . . .	132
Արեւիկեր . . . . .	134
Փորձութիւն . . . . .	136
Մեռելին մասնին . . . . .	137
Խաղաղութիւն . . . . .	138
Տիկին Լաւրա Ուսուղուլիի հարսնիքին՝ ցայգերդ . . . . .	139
Լուսիւն . . . . .	140
Անասուն մէջ . . . . .	146
* Աւուն . . . . .	148
* Տրտման . . . . .	149
* Ձատիկ հայկական . . . . .	153
* Հայկական Ձատիկ . . . . .	154
* Թոյնին սարսանքը . . . . .	154
* Յուշաստորի համար . . . . .	156
* Մոզզոյի ամբոցը . . . . .	157
* Միտիթարիւր . . . . .	159
* Լին խոսովքը . . . . .	160
* Գարուն . . . . .	161
* Ամբարանոց Մէտիլի . . . . .	162
* Օրհորդիկը ազուար... . . . . .	166
Ո՛վ խոսքեր... . . . . .	167
Փառք . . . . .	168

# ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐԸ

## ԳՐԱԲԱՐ

- Հատըմտիր քերթուածք. — Քարմէմ Սիւլվայի, Տպ. 1898, ձր. 1,50.  
Հատըմտիր քերթուածք. — Յակոբայ Լէորարտեայ, Տպ. 1898, ձր. 1.  
Լուսութիւն. — Վիկտորիա Ալամուրի, Տպ. 1896.  
Մամ Արթուրոյ. — Թէմնիսընի, ձր. 0,25.

## ԱՇԽԱՐՀԱԲԱՐ

- Հայկական Նոր Մատենագիտութիւն, Ա. Ռատոր Ա. - Մ. ձր. 20, ր. Ռտ. (Ա. սլրակ) Թ-Ն, ձր. 5.  
Հայ լեզուի Ուղղագրութեամբ Դասեր, Տպ. 1928, ձր. 1,50.  
Նուէր Մամկաթց, Տպ. 1897, ձր. 0,25.  
Դաստիարակութիւն ամօին — Ճօն Գլէքի, Տպ. 1902, ձր. 0,60.  
Վիպակներ, Տպ. 1909, ձր. 0,50.  
Երգիծաբանութիւն Արուեստի ամկման վրայ, Զ. Բ. Գամմէլլ. (բմագրոյ), Տպ. 1928, ձր. 0,50.  
Դարբիններում Գործադուլը, — Ֆրանսուա Գորէ, Բ տիպ, ձր. 0,80.  
Գատմութիւն Քրիստոսի, — Գապիմի Ե. Տպ. 1926, ձր. 7.  
Նշանածները, — Մամօնի Ա. Տպ. 1928, ձր. 5.  
Մի՛ գրէք, այլ գրեցէք. 1980, ձր. 8.

## Ի ԵՐԹՈՂԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

- Ա. - Ջրամսուա Գորէ. - Հսկումը և Դարբիննի-  
րում Գործադուլը (Ճաշակ Գաղղիական արդի  
բամաստեղծութեան), - Տպ. 1899, Յր. 0,40.
- Բ. - Ճաշակ Գաղղիական արդի բամաստեղծու-  
թեան. (Ծաղկաքաղ այլ և այլ Ռեղինակներէ),  
- Տպ. 1899, Յր. 0,40.
- Գ. - Ղազիկեան Հ. Արսէն. - Միխիթար (Ոտանա-  
ւոր վարք Միխիթար Արբանձոր), - Տպ. 1900,  
Յր. 0,50.
- Դ. - Ա. Գոյիթոյ. - Ներոն. (Ողբերգութիւն Ռիմզ  
արարուածով), - Տպ. 1902, Յր. 1.
- Ե. - Տամղէ. - Աստուածային պատակերգութիւն  
Դժոխք (Ա.), Գ. տխւր. 1927, Յր. 2,40.
- Զ. - Օսսիան. - Զերթուածներ (Ա.), - Տպ. 1902,  
Յր. 2,40.
- Ը. - Կոռիոյ Թ. - Ճիողոմտա. (Մելոտրամ չորս  
արարուածով), - Տպ. 1908, Յր. 1.
- Թ. - Տամղէ. - Աստուածային պատակերգութիւն.  
Զաւարամ (Բ.), - Տպ. 1905, Յր. 1,80.
- Ժ. - Աղանուր Վ. - Յաւիտեանական ջրոյց (Մի-  
ջանկիալ - Ջարթում), - Տպ. 1905, Յր. 1,60.
- ԺԱ. - Վիրգիլիոս. - Եմէական, - Տպ. 1910, Յր.  
2,40.
- ԺԲ. - Ղէոբարտի. - Երգեր, - Տպ. 1910, Յր. 1,50.
- ԺԳ. - Աղանուր Վ. - Նոր երգեր, - Տպ. 1910,  
Յր. 1.
- ԺԴ. - Հոմերոս. - Իլիական, - Տպ. 1911, Յր. 8.
- ԺԵ. - Տասսոյ. - Երուսաղէմ Ազատեալ, - Բ. տխւր.  
1927, Յր. 2,40.
- ԺԶ. - Միլտոն. - Դրախտ պորուսեալ, - Տպ. 1918,  
Յր. 2,40.
- ԺԷ. - Որատիոս. - Արուեստ Զերթողական, - Տպ.  
1928, Յր. 0,80.



ԺԸ. - Յոսպոլոյ. - Տաղ Գերեզմանաց. - Տպ. 1928.  
Ձր. 0,75.

ԺԹ. - Վիրգիլիոս. - Մշակականք. - Տպ. 1928.  
Ձր. 1,50.

Ի. - Գամմէլլ. - Երգիծաբանութիւններ և ուրիշ  
քերթուածներ. - Տպ. 1924. Ձր. 1,50.

ԻԱ. - Հովհրոս. - Ողիսականք. - Տպ. 1924. Ձր. 8.

ԻԲ. - Տամոզէ. - Աստուածային Վատակերգութիւն.  
Արքայութիւն (Գ.). - Տպ. 1924. Ձր. 2,40.

ԻԳ. - Վիրգիլիոս. - Հովուականք. - Տպ. 1925.  
Ձր. 1.

ԻԴ. - Ռուամի Երզը. - Տպ. 1925. Ձր. 2.

ԻԵ. - Իմ Սիտի Երզը. - Տպ. 1925. Ձր. 2.

ԻԶ. - Նիրելումզմերում Երզը. - Տպ. 1925. Ձր.  
2,50.

ԻԸ. - Սոփոկլէս. - Իդիպոս թագաւոր. - Տպ.  
1927. Ձր. 1.

Լ. - Գապիթի. - Հաց և զիմի. - Տպ. 1927. Ձր. 1.

Գիւները նշանակուած են գույնգրական ֆրան-  
քով:


Գիւնել

Imprimerie Arménienne

St. Lazare

VENISE (Italie)







874.]

600

1004

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



901001004